

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ

ՍՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ԼԻՍԻՆ

16 ՄԱՐՏ 1879



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

1879

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Աղանեան Ա. Առնեապետ
Տեղապետ Էֆենտի Կոստանթնյան Բ. »
Մկրտիչ Էֆենտի Մելիքեան Ա. Առնեապետ
Աստված Էֆենտի Տերպեան Բ. »

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Մատթէոս Կոնստանտին Կոնստանտին Առնեապետ
Ներսէս փարպալետ Աղանեան Առնեապետ
Ստեփան Էֆենտի Մանուկեան Առնեապետ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խորեն Արքեպիսկոպոս Կարապետ Առնեապետ
Պէտրոս Էֆենտի Աղապետ Պէտրոս
Պէտրոս Էֆենտի Սթեփանեան Պէտրոս

ԿԱՆՈՒՄՈՅ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Կոստան Պէտրոս
Մանուկ Էֆենտի Կոստան Պէտրոս
Պէտրոս Էֆենտի Կոստան Պէտրոս

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Էֆենտի Կոնստանտին Առնեապետ
Յարութիւն Էֆենտի Մէրէմ-Կոնստանտին
Ստեփան Էֆենտի Փափապետ Առնեապետ

ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ստեփան Էֆենտի Աթապետ Տեղապետ Առնեապետ
Մատթէոս Էֆենտի Սթեփանեան Առնեապետ
Յարութիւն Էֆենտի Արքեպիսկոպոս

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Կոնստանտին Ստեփանեան Առնեապետ
Ստեփան Աղապետ Էֆենտի Առնեապետ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Պէտրոս Առնեապետ
Մկրտիչ Էֆենտի Կոստան Առնեապետ
Տեղապետ Փէրպետեան Էֆենտի Առնեապետ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆենտի Կոնստանտին Առնեապետ
Աստված Էֆենտի Տերպեան Առնեապետ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Հրաժարում նորին Պատրիարքական Փոխանորդի
Բ. Առաջարկութիւն վարչութեան, Կեդր. սնտուկի հաստիքի մասին
Գ. Առաջարկութիւն Գաղափարական և Ղաղարոսեան Էֆենտիներու, վասն
ընտրութեան Բենիչ Յաննախանի քննչաց ի Հայաստան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ա. Պատրիարք Հօր, Տ. Խորեն Կար-Պէտրոս Սրբազանի առժամեաց նախագահութեամբ տեւանք բացակայութեամբ 7 1/2 ին ի ներկայութեան 28 երեսփոխանաց, որոց վերջին թիւը յանգեցաւ 42 ի :

Առնեապետ փաշան նախորդ նիստի առաջարկութեան անպատրաստ ըլլալուն պատճառաւ տեւանքութեան հետ զբաղելու հարկ մը չըլլալը յայտնելով անցաւ տեւանական ուրիշ գործողութեանց :

1.

Բացակայութիւնք

Առաջին երեսփոխաններէն՝
Տ. Հայկակ փարպալետ Գիւմարեան
Սիմոն Էֆենտի Ֆելիքեան
Ներսէս Կարապետ Մէլիքեան

անձնական տկարութեան պատճառաւ և Լ. զօրէի Էֆենտի Պաշտօնեան համարողութեան պատճառաւ բացակայ գտնուելին յայտնած ըլլալով, օրինաւոր բացակայ նշանակուեցան ներկայութեան տեւանքին մէջ :

2.

Տեղեկագիր Մայր Գիւմարեան ի վերայ անցեալ քառամեաց շրջանի անոյժ մնացած 57 խեղրոց, մատուցեալ առ Ս. Ժողովն ի նիստ Ի. 1879 մարտ 16

Առնեապետ փաշան կարգաց հետեւեալ տեղեկագիրք.

Տեւրք.

Տարւոյս փետրվար 2, Ժ. 2. նիստին մէջ Ղաղարոսեան Գիւմարեան Էֆենտի առաջարկութիւնն ընդունելով Մայր դիւանի յանձնարարեցիք անցեալ քառ-

ամենայն շրջանի մէջ առկա մնացած 57 խնդիրներուն եւք մը տալով Տեղեկագիր մը բերել Ձեզ, և Ա. Ատենապետ և Ա. Ատենադպիր յանձն առինք երկուքնիս աշխատել Ձեզ այս վերջին ծառայութիւնն ալ մատուցանելու:

Ստոյգ է որ այս աշխատութիւնը բաց ի Ձեր կամայն հնազանդելու պարտաւորութենէս, ուրիշ նկատմամբ ալ բռնադատիչ էր մեզ համար, մանաւանդ տեղեկաբերիս, զի այս խնդիրներն մեծ մասամբ ատենապետութեանս քառամեայ շրջանին մէջ երեւան ելած և առկա մնացած ըլլալով ինձ անկ էր, անոնց վերջնական կարգադրութեան հոգ տանիլ և դիւանական աթոռն ձեռքելու ատեն հաշիւս մաքրել և այնպէս հրաժեշտ տալ, բայց սա ալ ստոյգ է որ եթէ այս պատկառութեան մէջ իմ չորս տարուան մէջ վեց անգամ ճանապարհորդութեանս պատճառաւ ակամայ բայց իրաւացի բաժին մ'ունիմ, մեր նախաքննիչ գիւաններն իրենց անաշխատութեամբ և դուք Ձեր նիստերուն թանկագին և սուղ ժամերը յաճախ սին վիճաբանութեան և երբեմն նաև վէճերու զոհելով, մեծաւ մասամբ տէր և պատասխանատու կը կանգնէք ազգային խնդրոց այսպէս անլոյժ մնալու անտեղութեան:

Արդ ես իմ պարտքս կատարեցի և ահա Ձեզ կը մատուցանեմ իմ ընկերոջս հետ մեկտեղ աշխատասիրած Տեղեկագիրս, զոր Ձեզ անկ է քննել և վճռել որպէս զի դուք ալ հաշիւնիդ մաքրած կարողանայք ներկայանալ առաջիկայ տարեկան նոր շրջանին որ մտադրու է, և ազատութեամբ ձեռնարկանել նորանոր խնդրոց որ չեն պակ-

սիր, մանաւանդ այս ժամանակներս ուր շատ է աւուրն չար իւր:

Մնամբ ամենայն յարգանք

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Ատենադպիր

Ատենադ. և տեղեկաբեր

1879 Մարտ 16

Ընթերցումէն ետև Ատենապետ փաշան յարեց. —

Ահաւասիկ խնդրոց ցուցակն, և ստեն մէկուն վրայ մեր կարծիքն, որ ներքեցէր չկարգանք, զի երկար է. եթէ կը հաճիք՝ միայն ատենադրութեան մէջ անցընենք՝ ուր կրնաք մանրամասն կարգադրութեան տեսակներէ: Եւ մեր կանցնինք անմիջապէս Օրակարգին, որ դէպքերը մեզի բերին և բռնադատեցին ընդունիլ:

(Տե՛ս Տեղեկագիրն ի վերջ Ատենադրութեանս)

Օ Ր Ա. Կ Ա. Ր Գ.

Ա.

Հրաժարում ետրեւորի Պատր. Փոխանորդի

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսօրուան մեր Օրակարգին գլուխը՝ «Հրաժարում նորեւորի Պատրիարքական Փոխանորդի» խնդիրը կը տեսնէք: Այս Օրակարգը մենք չ'սահմանեցինք, այլ պարագաները մեզ ստիպեցին զայն ընդունիլ: Ներքեցէր որ պատմեմ ձեզ դամե՛նայն և առաջի սունեմ պարզաբար բոլոր եղելութիւնները:

Անցեալ ուրախ մեր Ի ռ. նստին՝ Ալլաբաղան Պատրիարքին հրաժարման խնդրոյն առթիւ Պատրիարքական փոխանորդի նկատմամբ ըրած որոշումնիւ և ընտրութիւննիւ փութացինք անմիջապէս Սրբազան Պատրիարք Հօր ի դիւանէ ծանուցանել և պաշտօնական նամակնիւ յանձնեցինք Քաթաւանեան Մի. նաս էֆէնտի մեր ընկերին, որպէս զի մեր

զգացմունքն և իղձերն ու յոյսերը բերանացի ալ յայտնուին Նորին Սրբազնութեան:

Կիրակի առտու կանուխ նամակ մ'առինք Քաթաւանեան էֆէնտիէն որ կը ծանուցանէր թէ չէ կրցեր համոզել Նորին Սրբազնութիւնը գէթ նորեւորի Փոխանորդն հրաւիրել ի պաշտօն, զի Նորին Սրբազնութիւնն կը տնդէ եղեր թէ «ասով ինք դարձեալ Պատրիարք մնացած կ'ըլլայ» և թէ «ինք Պատրիարք չէ, և իր հրաժարականն ընդունելէ զատ որ և է տնորէնութիւն չկրնար ընդունիլ:»

Անմիջապէս գրել պարտաւորեցանք Գե. րապատիւ Մատթէոս եպիսկոպոսին որ ինք փութայ ներկայանալ Սրբազան Պատրիարքին, և անոր հրամաններն ընդունելով, Ազգ. Ժողովով որոշուած սահմանին մէջ ձեռն արկանէ Պատրիարքական փոխանորդութեան պաշտօնին:

Բայց Գե. Մատթէոս Ս. մեր նամակին հետ և անկէ ալ առաջ ուրիշ անստորագիր և սպառնալից նամակներ ընդունելով, և միտնգամայն անցեալ նիստին ժողովիս մէջ և քույրտիրը եղած դարձածքները լըսելով, հրաժարագրով պատասխանեց զիւանիս, հրաժարականն իր անձնական տկարութեանը վըրայ հիմնելով, որ ստոյգ ալ է:

Սոյն հրաժարագիրը փութացինք սա Ա. մենապատիւ Ս. Պատրիարք Հօյր ուղղել մասնաւոր նամակաւ և պատճենն հաղորդել Խառն Ժողովոյ, որուն տրգէն պաշտօնապէս կանխեր էինք ծանուցանել Ժողովիս որոշումներն, և խնդրեցինք որ Ս. Պատրիարքին հետ խորհրդակցութեամբ զարժանն տնօրինեն ներկայ պարագայից նկատմամբ:

Խառն Ժողովը պատգամաւորութեան մը միջոցաւ երկուշաբթի իրիկուն կը յաջողի Ս. Պատրիարք Հօրմէն չնորհաւորութեան գիր մ'ընդունիլ Ս. Պատրիարքին սա նորեւորի Պատրիարքական փոխանորդն ուղղելով, բայց «Ներսէս եպիսկոպոս խաղա՛ս հրաժարեալ ի Պատրիարքարեւել» ստորագրութեամբ, և սա Գե. Մատթէոս եպիսկոպոս փոխանորդ Պատրիարքական արտոյն հասցէով: Եւ երբեքոր

թի դարձեալ պատգամաւորութեան մը ձեռք այս գիրը Մատթէոս Սրբազանին ներկայացը. նելով կ'աշխատի համոզել որ առանց ուշադրութեան առնելու Ս. Պատրիարք Հօր կողմէն իր փոխանորդական պաշտօնին տրուած դոյնը, բարեհաճի գալ իր պաշտօնին գլուխն անցնիլ:

Բայց Նորին գերապատուութիւնը կրկին անգամ հրաժարագիր ուղղելով զիւանիս, և Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօյրն ալ Մատթէոս եպիսկոպոսի առաջին հրաժարողին իբր Ազգ. Ժողովով տնօրինելի դործ գիւանիս դարձուցած ըլլալով, և մասնաւոր նամակաւ մը իր ի Պատրիարքութենէ հրաժարումն Ազգ. Ժողովոյ կողմէն չ'ընդունուելուն գէ՛մ բողոք բարձած ըլլալով, Խառն Ժողովը պատշաճ տեսեր է Ազգ. Ժողովոյ արտաքոյ կարգի գումարում խնդրել և պարագայից բերմամբն արտաքոյ կարգի կարեւորութիւն և ստիպողութիւն ստացող այս հրաժարմանց կըրկին խնդիրն անոր տեսանք հանել:

Այս հակիրճ բովանդակութեան մէջ յիշած բոլոր դրութիւններս և Խառն Ժողովոյ դործաւորութեանց վերաբերեալ տեղեկագիրն այժմ Ձեզ պիտի ներկայեմ, յուսելով վերջին գիր մ'ալ զոր սո՛վ փայրկենիս ընկալայ Ս. Պատրիարք Հօրմէն և որոյ համար Նորին Սրբազնութիւնը կը փափորի որ վերջինն ըլլայ այս տեսակ գրութեանց:

Այս պահուս Ատենապետ Փաշայի հրաւիրումն և Ս. Ատենադպիր էֆէնտին սիսաւ կարգաւ յետագայ թղթակցութիւնները:

1.

Պաշտօնագիր Մայր Դիւանի ստ. Ս. Պատրիարքին

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօյր

Ազգային Ժողովը՝ Քաղաքական Ժողովին մէկ դոյն վրայ որով Պատրիարքական պաշտօնաւարութեան նկատմամբ դարման մը կը խնդրէր ի նիստ ԺԸ 16 վիտալը, յետ վիճաբանութեան և յետ

ընթերցող միևնույն նիւթի վրայ վարչութեան երկուց ժողովոց տեղեկագիրը և Ձեր բարձրաշնորհ Սրբազնութեան առատենապետ Ազգային ժողովոյ ուղղեալ հրամանագիրը ի նիստ ժ. 23 փետրուար, մանրամասն վիճաբանութեամբ խնդրոյն ամեն պարագայներն ի նկատի առնելով որոշեց Ա. Ձեր Սրբազնութեան հրաժարականը չընդունիլ, Բ. Ձեր Սրբազնութիւնը Պատրիարք մնալով և ի հարկին նաև փափուկ և կարեւոր խնդրոց համար պէտք եղած պաշտօնատանց Ձեր խնդիրներն ու առաջարկութիւններն անձամբ շարունակելու իրաւունքը վերապահելով հանդերձ, Եպիսկոպոսաց դատէն մէկը առժամանակեայ փոխանորդ հարգել Ձեր Սրբազնութեան և Գ. պաշտօն յանձնել նմա Ազգային ժողովոց նախագահել, ընթացիկ դործերը տնօրինել, պաշտօնական գրութիւնքն կնքել կամ ստորագրել, մէկ բառով փոխանորդութիւն ընել Պատրիարքական պաշտօնին վերոյիշեալ շրջանակին մէջ, և վերջապէս սոյն տնօրէնութիւնը և ըստ այնմ կատարուած փոխանորդի ընտրութիւնը Բ. Դրան ծանուցանել Հանրագրով և հաւանութիւնը խնդրել, պայման դնելով միանգամայն որ նորընտիր փոխանորդը անմիջապէս սկսի իր պաշտօնը Ազգային դսրծոց շրջանակին մէջ և Բ. Դրան հետ յարաբերութեան մէջ մտնելու համար սպասէ Բ. Դրան հաստատութեան հրամանին, Ազգային ժողովը սոյն վերջին տնօրէնութիւնն այսօր ի նիստ Խ. որոշելէ ետև անմիջապէս քուէարկութեան ձեռնարկելով բացարձակ առաւելութեամբ քուէից

Փոխանորդ ընտրեց Ձեր Սրբազնութեան Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան զոր պատիւ ունինք Ձեր Բարձրաշնորհ Հայրութեան ներկայել և խնդրել որ ընդունիլ և յանձնել շնորհ ընէք նմա Ձեր փոխանորդութեան նկատմամբ և իր պաշտօնավարութեան սահմանեալ շրջանակին մէջ ինչ որ պատշաճ կը դատուի:

Սոյն տնօրէնութիւնը Ձեր բարձր Սրբազնութեան հաղորդելու առթիւ հարկ կը համարիմք նաև Ազգ. ժողովին մէկ երկրորդական որոշումն ալ առաջի առնել, որով արդի Պատրիարքական փոխանորդին տիտղոսը՝ չփոխութեան տեղի չտալու համար «նախագահ Դատաստանական Խորհրդոյ» ի փոխել արժան դատեց:

Ներեցէք մեզ, բարձրաշնորհ Ս. Հայր, նուիրել Ձեզ նաև մեր և ամբողջ Երեսփոխանութեան, կրնա՞նք ըսել նաև բոլոր Ազգին դգացմունքը որով Ձեր Սրբազնութեան անձնուէր ջանից և մեծագործութեանց համար ըստ քանչացման հետ Ձեր Պատրիարքական բարձր պաշտօնը շարունակելու և Ձեր խնամքը մեր վրայէն անսպակաս ընելու մասին փափաք և իղձ յայտնելով,

Մնամք Ձերդ Բ. Սրբազնութեան

Ամենախոնարհ ծառայք

Մ. Յ. Մկիթեան

Ս. Սպանեան

Ա. Ատենադպիր

Ա. Ատենապետ

Դիւան Ազգ. ժողովոյ

9 Մարտ 1879

2.

Նախկին Պատրիարքական Էպիսկոպի

Ս. Ստենապետ Ս. Գառն Սպանեան

Վսեմափայլ Փաշա

Ս. Պատրիարքն ուրբաթ գիշեր տունը չէր, տեղեկացայ որ Պէջիւքաթէ կը դառնուի, եասագծի մը ձեռք երէկ առաւօտ խիստ կանուխ ձեռքն հասուցի:

Երէկ երեկոյն վերադարձած էր, Ձեր հրահանգին համաձայն փութացի պէտք եղածները խօսիլ, խնդրեցի, պաղատեցայ, աղաչեցի, թախանձեցի, բայց կարելի չեղաւ զինքն համոզել և գոնէ՛ Գեր. Տ. Մատթէոս սրբազանին հրաւերն ընել տալ, իւր վերջին խօսքն էր՝ «Ես Պատրիարք չեմ»:

Լիվշտօք և յուսահատ մեկնեցայ իւր քովէն:

Նորին Սրբազնութեան այս ընթացքը փաստ ու գէնք մը պիտի լինի իւր հակառակորդաց ձեռքն ըսելու թէ՛ «Ս. Պատրիարքը ճանչելով իւր սխալը խոյս կուտայ վերջապէս»:

Կը թողում իւր հետևանքները, զորս ամենը քան զիս և քան շատեր խիստ քաջ կը նախատեսէք:

Քուստի աշխատանացս անյաջող տրդիւնքը ցաւ ի սիրտ հաղորդելով,

Մնամ ակնածական խորին յարգանքօք Ձերումդ Վսեմափայլութեան Խ. Մ.

41 մարտ 79

Մ. Գառնեան

Ի Մուսալլա

Կ. Պօլսոյ

3.

Պաշտօնագիր Մայր Գիւանի սո Մատթէոս Սրբ.

Առ գերապատիւ Մատթէոս Սրբազան Եպիսկոպոս Իզմիրեանց

Գերաշնորհ Սրբազան Հայր

Պատիւ ունիմք Ձեր Սրբազնութեան ծանուցանելու թէ Ազգային ժողովն երէկ իր իրդ. նիստին մէջ ստուար մեծամասնութեամբ քուէից զՁեզ Պատրիարքական փոխանորդ ընտրեց, պաշտօն յատկացնելով, 1. Ազգային Երեսփոխանական և Վարչական ժողովոց նախագահել, 2. Պատրիարքական ընթացիկ դործերը տնօրինել, 3. Պաշտօնական գրերը ստորագրել կամ կնքել, և վերջապէս 4. փոխանորդութիւն ընել Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազանին որ է և մնայ Պատրիարք Հայոց Կ. Պօլսոյ, որոյ փոքր ինչ ժամանակ հանգիստ տալու գիտաւորութեամբ և իր բարձր հրամանին համեմատ Ազգային ժողովն ըրաւ սոյն տնօրէնութիւնն:

Շնորհաւորելով Ձեր Սրբազնութիւնն այն պաշտօնին համար ուր կոչեց զՁեզ Ազգային ժողովոյ վստահութիւնն ու գիտակցութիւնը Ձեր տաղանդոյն, ազգասիրութեան և աշխատասիրութեան, կը խնդրեմք որ շնորհ ընէք անմիջապէս ներկայանալ Նորին Բարձր Սրբազնութեան Ներսէս Պատրիարքի, եւ ըստ որոշման Ազգային ժողովոյ և ըստ հրամանաց Նորին Բարձր Սրբազնութեան սկիզբն առնել Ձեր պաշտօնին:

Հարկ կը համարիմք այս առթիւ Ձեր Գերապատուութեան ծանուցանել նաև Ազգային ժողովոյ մէկ երկրորդա-

կան տնօրէնութիւնը որով շփոթութեան տեղի չտալու համար որոշեց փոխել Պատրիարքական արդի փոխանորդ վարդապետին տիտղոսը ի «Նախագահ Դատաստանական Խորհրդոյ», որ է իւր ճշգրիտ պաշտօնն Սահմանադրական:

Խնդրելով որ ընդունիք այս առթիւ մեր խոնարհ ակնածութեան զգացմունքն:

Մնամք Նուստ ծառայք

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
Առնկապիտ Ստեփան

Դիւան Ազգային Ժողովոյ
10/22 Մարտ 1879

4.

Ծանուցացիր Մայր Դիւանի առ Խառն Ժողովն

Առ բարձրապատիւ անդամս
Կեդր. Վարչութեան կրկին ժողովոյ

Բարձրապատիւ Տեառք:

Պատիւ ունինք Ձեզ ծանուցանել թէ Ազգային Ժողովն երէկ իր ինստիտուտին մէջ ստուար մեծամասնութեամբ քուէից Պատրիարքական Փոխանորդ ընտրեց զՏ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան՝ յատկացունելով նմա պաշտօն Վ. Ազգային Երեսփոխանական և Վարչական Ժողովոյ նախագահել: 2. Պատրիարքական ընթացիկ գործերն տնօրինել: 3. Պաշտօնական գրերը ստորագրել կամ կնքել և վերջապէս և փոխանորդութիւն ընել Ամենապատիւ Տ. Տ. Ներսէս Սրբազանին որ է և մնայ Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ, որոյ

փոքր ինչ ժամանակ հանգիստ տալու գիտաւորութեամբ և իր բարձր հրամանին համեմատ Ազգ. Ժողովն ըրաւ սոյն տնօրէնութիւնը:

Դիւանը փութաց Ամենապատիւ Ս. Պատրիարքի հաղորդել Ազգ. Ժողովոյ տնօրէնութիւնը, ինչպէս նաև նորընտիր Փոխանորդ Սրբազանին, զոր Սրբազան Պատրիարքի ներկայացունելով պաշտօնական գրութեամբ խնդրեց Նորին Սրբազանութենէն ընդունիլ և շնորհ ընել յանձնել իր նորընտիր Փոխանորդին ինչ որ Ազգային Ժողովոյ որոշած սահմանին մէջ պատշաճ կը դատէ անոր Փոխանորդութեան պաշտօնին:

Հարկ կը համարինք այս առթիւ ծանուցանել Ձեզ նաև Ազգ. Ժողովոյ մէկ երկրորդական տնօրէնութիւնը որով շփոթութեան տեղի չտալու համար որոշեց փոխել Պատրիարքական արդի փոխանորդ վարդապետի տիտղոսը ի «Նախագահ Դատաստանական Խորհրդոյ» որ է իւր ճշգրիտ պաշտօնն սահմանադրական:

Խնդրելով որ Ազգ. Ժողովոյ սոյն տնօրէնութեանց գործադրութեանը համար զարժանն տնօրինէք:

Մնամք յարգանք

Ն. Ծ. Ն. Ծ.

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
Ա. Առնկապիտ Ա. Առնկապիտ

Դիւան Ազգ. Ժողովոյ
10/22 մարտ 1879

5.

Ա. Հրաժարացիր Մատթէոս սրբազանին
առ Մայր Դիւանն

Վսեմափայլ Ատենապետ փաշա
Ազգային Ժողովոյ

Մարտ 10 թուականու Մայր Դիւանիդ մէկ պաշտօնագիրն այս վայրկե. ինս ստացայ, որով կը ծանուցանէիք թէ Ազգային պատկառելի Ժողովը բարեհաճեր է զիս կոչել ի պաշտօն փոխանորդութեան Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքի:

Մեծ պատիւ մ'է այս, զոր կընէ Ազգային Ժողովն ի վեր քան զակնկալիս իմ և զարժանիս, ուստի կը փութամ իմ խորին շնորհակալութիւնս նմա յայտնել, և ցաւելով յայտարարել որ թէ պէտ ինձ պարտք կը համարիմ Ազգային Ժողովոյ որոշման հպատակիլ, սակայն անձնական տկարութիւնս անկարելի կընէ, հետեւապէս և կը հրաժարիմ:

Խնդրելով որ շնորհ ընէք սոյն հրաժարականս անմիջապէս հաղորդել որոց որ անկ է, և ետ թողուլ առ Բ. Դուռն մատուցանելի Երեսփոխանական հանրագիրն, որպէս զի դժուարութեան տեղի չտրուի:

Մնամ Ազգիս բարօրութեան
աղօթարար

ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

11 Մարտ 1879

Ի Նոր-թաղ
Երեսկիւտար

6.

Նամակ Մայր Դիւանին առ Ս. Պատրիարքն

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Ազգային Ժողովոյ վերջին նիստին տնօրէնութիւնը Ձեր Բարձր Սրբազանութեան առաջի առնելէ ետքը Նորընտիր փոխանորդ Տ. Մատթէոս Եպիսկոպոսի ալ ծանուցանելով հրաւեր կարգացինք անմիջապէս ներկայանալ Ձեր Սրբազանութեան և Ձեր հրամաններն ընդունելով ազգովին սահմանաւ շրջանակին մէջ ըսկիզբն առնել իր պաշտօնին: Տ. Մատթէոս Եպիսկոպոս ինչպէս ներփակեալ հրաժարագրէն կը հասկնաք, անձնական տկարութիւնը մէջ բերելով կը հրաժարի Հարկ եղաւ մեզ սոյն հրաժարագիրը Ձեր Սրբազանութեան ուղղել, ինչպէս նաև ծանուցանել Խառն Ժողովոյ, որպէս զի պարտու պատշաճ տնօրէնութիւնն ըլլայ:

Մնամք

ամենայն ակնածութեամբ

Ձերդ Բարձր Սրբազանութեան

Խ. Ծ. Խ. Ծ.

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
Առնկապիտ Առնկապիտ

Դիւան Ազգ. Ժողովոյ
11/23 Մարտ 1879

7.

Ծանուցացիր Մայր Դիւանին առ Խառն Ժողովն

Բարձրապատիւ Տեառք

Ազգային Ժողովոյ վերջին նիստի տնօրէնութիւնը՝ ինչպէս Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր և Ձեզ, նոյնպէս և

նորընտիր փոխանորդ Տ. Մատթէոս Ե. պիսկոպոսի հաղորդել փութալով, հրաւիրած էինք տնտիշապէս ներկայանալ Սրբազան Պատրիարքի և նորին Սրբազանութեան հրամաններն ընդունելով, ազգովին սահմանուած շրջանակին մեջ ըսկըսիլ իր պաշտօնին:

Տ. Մատթէոս եպիսկոպոս՝ ինչպէս ներկայեալ հրաժարագրի պատճէնէն կը հասկցուի, անձնական տկարութիւնը մէջ բերելով կը հրաժարի: Սոյն հրաժարականն ինչպէս Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, նոյնպէս և Ձեզ հաղորդելով կը խնդրեմք որ նորին Սրբազանութեան հետ խորհրդակցութեամբ Պատրիարքական պաշտօնավարութեան նըկատմամբ պատասխանատուութենէ զերծ մնալու և միանգամայն Տ. Մատթէոս եպիսկոպոսի հրաժարագրին Ազգային ժողովոյ հաղորդելու համար պարտուպատշաճ տնօրէնութիւնն շնորհ ընէք անյապաղ կատարել:

Մնամք յարգանք

Ն. Ծ. Ն. Ծ.

Մ. Թ. ՄԵԼԻՔԻԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Ատենապոյի Ատենապետ

Դիւան Ազգ. ժողովոյ

11/23 Մարտ 1879

Տ.

Նամակ Ս. Պատրիարքին առ Մայր Դիւան

Վսեմափայլ Ատենապետ փաշա

Ազգային ժողովոյ

Զարմանք կարգացի թուղթ մը զոր Ձեր վսեմութիւնը բարեհաճեր է դրել իրրե առ Պատրիարք առ նուստութիւնս 11/23 մարտ թուով:

Այսպիսի անգամ գրով և բերնով հրաժարական տալէս յետոյ աշխարհիս և ոչ մէկ կողմը տեսնուած չէ որ դարձեալ Պատրիարք ես ըսեն այն անձին որ չեմ կը գոչէ և կաղաղակէ հըրապարակաւ:

Գեր. Մատթէոս սրբազանին գիրն ալ Ձեր վսեմութեան կը դարձնեմ, նորին Սրբազանութիւնն ալ կարծեր է թէ ներսէս եպիսկոպոսի փոխանորդ է ու կը հրաժարի իմ փոխանորդութենէս. այնպէս չէ. նա պատրիարքութեան փոխանորդ կամ լաւ ևս է ըսել տեղապահըն է. ուստի զինքն ընտրող Ընդհանուր պատկառելի ժողովոյն կիյնայ ընդունիլ կամ ոչ նորին Սրբազանութեան հրաժարականը:

Մնամ աղօթարար

1879 մարտ 12/24

Խ. Ծ.

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գ.

Նամակ Ս. Պատրիարքին առ Մատրէոս Եպիսկ.

Գերապատիւ Սրբազան Տէր

Պատրիարքական Փոխանորդ

Ազգային պատկառելի Ընդհ. ժողովը Ձեր Գերապատուութիւնը Պատրիարքական Փոխանորդ ընտրած է:

Այս ընտրութիւնը կը փութամ Ձեզ հաղորդելով շնորհաւորել զՁեզ և խընդրել յԱմենակարողէն որ զօրացուցին է տկարաց և օգնական յինքն յուսացելոց. կարողութիւն և զօրութիւն պարգևէ Ձեր Գերապատուութեան որ կարող ըլ-

լաք արժանաւորապէս վարել Ձեր փութակ պաշտօնը:

Մնամ Ընդ միշտ աղօթակից

Իսպառ հրաժարեալ ի Պատրիարքու-

թենէ Հայոց Կ. Պօլսոյ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1879 Մարտ 12

Ի Կ. Պօլիս

Առ Գեր. Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս արժանընտիր Փոխանորդ Պատրիարքական Աթոռոյն Կ. Պօլսոյ

10.

Բ. Հրաժարագիր Մատրէոս Եպիսկոպոսի

Վսեմափայլ Ատենապետ փաշա

Ազգային ժողովոյ.

Ազգային վարչութեան պատկառելի Խառն ժողովոյ պատգամաւորութեան ձեռք, որ առ իս գալու շնորհ ըրած էր, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր Մարտ 12 թուական գիրն ընդունեցի, որով նորին բարձր Սրբազանութիւնը Պատրիարքական փոխանորդութեան պաշտօնին կոչուիլ կը ծանուցանէր:

Վսեմաշուք Տէր, արդէն Մարտ 11 թուականաւ անձնական տկարութեանս պատճառաւ սոյն պաշտօնն ընդունիլ անհնարին ըլլալուն համար հրաժարականս մատուցած եմ, և արդ զնոյն կըրկնելով:

Մնամ Ազգիս բարօրութեան

աղօթարար

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

13 մարտ 1879

Ի Նոր-թաղ

Երևան

11.

Տեղեկագիր Խառն ժողովոյ առ Ազգ. ժողովն

Վսեմաշուք Ատենապետ փաշա

Ազգային ժողովոյ.

Ազգային ժողովոյ վերջին նիստէն ետե Խառն ժողովն պատուարժան Մայր Դիւանից կողմէ պաշտօնագիր մ'ստանալով կը տեղեկանայր թէ Ազգային ժողովն ստուար մեծամասնութեամբ քուէից Պատրիարքական փոխանորդ ընտրած է Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, յատկացնելով նմա պաշտօն 14. Ազգային երեսփոխանական և վարչական ժողովոց նախագահել, 24. Պատրիարքական ընթացիկ գործերը տնօրինել, 34. պաշտօնական գրերն ստորագրել կամ կնքել, և վերջապէս 44. փոխանորդութիւն ընել Ամեն. Տ. Ներսէս Սրբազանին, որ է և կիցայ Պատրիարք Հայոց, որոյ փոքր ինչ ժամանակ հանգիստ տալու դիտաւորութեամբ և իր բարձր հրամանին համեմատ Ազգային ժողովն ըրած է սոյն տնօրէնութիւնը: Խառն ժողովն կը տեղեկանայր նաև նոյն պաշտօնագրէն թէ պատուարժան Մայր Դիւանի փութացեր է սոյն տնօրէնութիւնը հաղորդել նաև Ամեն. Ս. Պատրիարք Հօր, հրաւիրելով զնորին Սրբազանութիւնն՝ որ շնորհ ընէ յանձնել իր նորընտիր փոխանորդին ինչ որ Ազգային ժողովոյ որոշած սահմանին մէջ պատշաճ կը դատէ անոր փոխանորդութեան պաշտօնին:

Մինչդեռ Խառն ժողովն Ազգային երեսփոխանութեան սոյն տնօրէնութեան գործադրութեանն ակնկալութեամբ կըստպասէր, որ նորընտիր Գեր. Փոխանորդն

Աճեն. Յ. Պատրիարք Հօր կողմէ ժամ յառաջ իր փոխանորդական պաշտօնին կը կոչուի. և կարող կըլայ ազգովին սահմանուած շրջանակին մէջ իր պաշտօնին սկսիլ, յանկարծ օր մը ետքը երկրորդ պաշտօնադիր մ'ստացաւ պատուարժան Դիւանիդ. կողմէ, որով նորընտիր փոխանորդ Տ. Մատթէոս եպիսկոպոսի անձնական տկարութեան պատճառաւ հրաժարիլն ծանուցանելով և անոր հրաժարագրոյն պատճէնն ևս ներփակելով կը յանձնարարէր մեզ Աճեն. Ս. Պատրիարք Հօր հետ խորհրդակցութեամբ Պատրիարքական պաշտօնավարութեան նկատմամբ պատասխանատուութենէ զերծ մընալու և միանգամայն Տ. Մատթէոս եպիսկոպոսի հրաժարագիրն Ազգային Ժողովոյ հաղորդելու համար պարտուպատշաճն անյապաղ տնօրինել:

Իրաց սոյն վիճակին վրայ Խառն Ժողովս փութաց անմիջապէս իր մէջէն ընտրեալ Խառն պատգամաւորութեան մը ձեռօք նորին Սրբազնութեան հետ բանակցիլ և խորհրդակցիլ:

Խառն Ժողովոյս պատգամաւորութիւնը խիստ վշտացած գտեր էր զնորին Սրբազնութիւնն ոչ թէ իրեն հանգիստ տրուելու դիտաւորութեամբ Ազգային Ժողովոյ կողմէ առ ժամանակեայ Պատրիարքական փոխանորդ մ'ընտրուելու մասին եղած տնօրէնութեանը համար, այլ Պատրիարքական պաշտօնը բոլորովին իր վրայէն չառնուելուն և տեղապահ չընտրուելուն համար, ինչպէս որ ինք կը փափարի եղեր: Այսու հանգերձ Խառն Ժողովոյս պատգամաւորութիւնը նորին Սրբազնութիւնը համոզելու հա-

մար երկարօրէն բանակցելով շատ մը դժուարութիւններէ ետեւ հաղիւ յաջողած էր նորին Սրբազնութեան հրաւիրադիր մ'առնուլ ուղղեալ առ նորընտիր Գեր. փոխանորդ Սրբազանն, յորում նորին Սրբազնութիւնն է-դ-հ հր-տ-ր-է-ն է Պատրիարքական Հօր բառերն ստորագրած էր իրեն համար:

Խառն Ժողովոյս պատգամաւորութիւնն Աճեն. Ս. Պատրիարք Հօր հրաւիրագիրն առնելէ ետեւ հետեւեալ օրը փութաց նորընտիր փոխանորդին երթալ մատուցանել զայն և հրաւիրել զինքն նաեւ ի դիմաց Խառն Ժողովոյս անմիջապէս գալ ձեռնարկել իւր նորոգ պաշտօնին:

Սակայն նորին Գերապատուութիւնն Ազգային պատկառելի Ժողովոյ ամէն հրամաններն յարգելու պատրաստական ըլլալը յայտնելով հանդերձ, կրկին իւր տկարութիւնը մէջ բերած և բացարձակապէս հրաժարած է:

Հետեւապէս Խառն Ժողովս իրաց սոյն վիճակին վրայ անկարող լինելով ուրիշ տնօրէնութիւն մ'ընել, հարկ դատեց անմիջապէս Ազգ. Ժողով հրաւիրել տալ, և իւր տեղեկագիրը բերել յատեան Ժողովոյդ ի գիտութիւն և ի պարտու պատշաճ տնօրէնութիւն:

Մնամք յարգանք

Ի դիմաց Ազգ. Վարչ. Խառն Ժողովոյ
Կրօնական Ժողովոյ

Ատենադպիր	Վասն Ատենապետի
ՍԱՀԱԿ Գ.	ՆԵՐՍԵՍ ՎԱՐԳԱՊԵՏ
Տ. ՍԱՐԳԻՍԵԱՆ	ԱՍԼԱՆԵԱՆ

Քաղաքական Ժողովոյ
Վասն Ատենապետի
Մ. Գ. ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ Գ. ՍԹԻՄԱՐԱՃԵԱՆ
16 Մարտ 1879

12.

Պատգամաւոր Ս. Պատրիարքի
Առ Ատենապետ փայա և ոռ անդամս
Ազգային Ժողովոյ

Վսեմափայլ Ատենապետ փաշա և
Ազգ. պատկառելի Ընդհ. Ժողով:

Մարտ 9/21 պատուարժան Դիւանիդ. կողմանէ առ նուաստս գրուած գիրը՝ զիս պահ մը շփոթեց, որով ակամայ յապաղեցաւ պատասխանս, այդ գիրը մեծ ներքողենիւք կը դրուատէր նուաստիս պատրիարքութեան պաշտօնավարութեան ատենի դոյզն և աննշան ծառայութիւններն կամ գործերն՝ գործեր օրը եթէ արժանիք մ'ունին չնորհակալութեան, այն ալ Ազգին և Ձեզ կը վերաբերին. զի Ձեր կամօքն որոշմամբն և հրահանգովն եղած են դարձեալ Ձեօք. պահ մը շփոթելէս յետոյ մտածեցի՝ թէ ես բնաւ իրաւունք մը չունէի այդ չընորհակալութեանց՝ որ այս երկրորդ անգամ դրուորապէս կը հաղորդէ ինձ պատկառելի Ժողովդ, նախ՝ տարեգլխին ուղերձին և երկրորդ մարտ 9ի դրութեամբ. այն, մտածեցի և կը մտածեմ և վճռեցի ու կը վճռեմ որ մեր եկեղեցականաց ամենէն յետին եղբայրն ալ կարող էր այնպէս գործել և աւելի տղէկն ընել մանաւանդ երբ անձամբ առողջ ըլլայ. զի Աստուած մեր հետն է և պէտք է որ մեր հետն ըլլայ, զի չպիտի թողու որ զինքը սոսկալի տառապանաց մէջ փառաւորող մարտիրոս Ժողովուրդ մը կորսուի, այս համոզմամբ էր որ քանիցս աղաչեցի և պաղատեցայ որ իմ հրաժարականս զոր այնչափ անգամ այնչափ թախանձանօք մատուցի, ընդունուի վերջնապէս, և խնդրեցի փետրվար 23 խընդ-

րագրովը՝ որ եթէ անհնար է հիմակուհիմա տեղս Պատրիարք մը գնել՝ գոնէ փոխանորդ մը կամ լաւ ևս է ըսել Տեղապահ մը դրուի:

Պատկառելի Ժողովոյդ սխալ մեկնուելով իմ խնդրագիրս՝ փոխանակ Պատրիարքական աթոռոյն փոխանորդ կամ Տեղապահ մը ընտրելու, նուաստիս փոխանորդ մը գնել կամ ընտրել բարեհաճեր էք:

Արդ, կաղաչեմ պատկառելի Ժողովոյդ որ համոզուիք թէ անհնար է որ ես կարող ըլլամ վարել այս պաշտօնը գլխաւորապէս անձնական վատառողջութեանս համար և հերիք համարելով հինգ տարուան պաշտօնավարութիւնս որ թերութիւններով լի ըլլալը կը խոստովանիմ, յիշեցէք որ ակամայ բարձրացուցիք զիս յայս աթոռ, որուն արժան չէի և չեմ. Դարձեալ կը կրկնեմ որ զլխաւոր և անյաղթելի պատճառը իմ վատառողջութիւնս է. ամենայն ինչ կը կարգադրուի Աստուծով, ես բնաւ չեմ յուսահատիր և ոչ պատասխանատուութենէ կը վախնամ. քանզի Ազգին կամբը կը յարդեմ և համոզուած եմ որ օրինաւոր են ազգային կամքը և պահանջմունքն. ուստի մէկդի կասկածներն ու վարանմունքը, կտրիճութեամբ ցցուցէք՝ որ մէկ մարդէ մը կախեալ չէ ազգը, թէ բազում իօրմեաններ, ներսէսներ, Խորէններ, Մատթէոսներ, Յարութիւններ, Բարթոլոմէոսներ, Մեղքիսեղեկներ, ևն. ևն. թողմէոսներ, Մեղքիսեղեկներ, ևն. ևն. ունի, որոնք կարող են ազգին հետ և Ձեր հետ միաշունչ և միախորհուրդ գործել աշխատիլ ևն:

Յուսալով որ այս վերջինն պիտի ըլլայ իմ այս տեսակ գրութեանց առ Ժողովդ:

Եւ խնդրելով աղաչանացս ընդունուիլն ի Ժողովոյդ:

Մնամ խոնարհ ծառայ

և աղօթարար

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

16/24 Մարտ 1879 Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Գրութիւնները կարդալէ ետեւ յարեցէ):

Հիմա որ այս երկար թղթակցութենէն տեղեկացար ամենայնի եւ բովանդակութեանս ճշդութեան, պէտք է խնդրեմ ձեռք առնունք, զոր թէ կը հաճի՞ր բացատրեմ համարումս:

Ս. Պատրիարք Հայրը կուզէ հրաժարիլ բացարձակապէս, բովանդակապէս, և մինչեւ իսկ զղջացած է այն նամակը գրելուն, զոր ԺԹ. նիստին մէջ (23 փետրուար 79) Ձեզ ներկայեցի և որուն մէջ Նորին Սրբազնութիւնը կըսէ թէ « Գանկոս ըսի Բ. Գրան եւ ձեզ թէ անկարելի է հրաժարականս յետ առնուլ, բայց դուք դարձեալ կը թախանձէք եւ կը պահանջէք որ այս պաշտօնը չթողում: Արդ կ'աղաչեմ որ եթէ պատրիարք մը ընտրել հիմակու հիմա դժուար է, զո՞նէ փոխանորդ մը կամ լաւ եւ տեղատու մը ընտրել բարեհաճեցէք, որպէս զի Բ. Գրան հետ յարաբերութիւնը և Ս. Պատրիարքի գործառնութիւնը չզաւորին և չփաստին: »

Սրբազան Պատրիարքը զղջացած է կըսեմ, և զժողովիւն կը յայտնէ որպէս թէ ես զայս զիր բռնի իր ձեռքէն առած ըլլամ, չէ թէ այն պատճառաւ որ անով զինքը Պատրիարքութենէ հանել կը փորձուի, այլ ընդհակառակն՝ փան զի անով զինքը Պատրիարքութեան աթոռին վրայ հաստատ պահել կուզուի: Նա կուզէ եղբւր փոխանորդի մը ընտրութեան հաճութիւն տալով իւր հրաժարականն ընդունել տալ, և Պատրիարքական աթոռը թափուր հրատարակելով փոխանորդութեամբ կամ տեղապահութեամբ վարել տալ Պատրիարքական պաշտօնը, իսկ ես Ն. Սրբազնութեան հրաժարականը չընդունելով՝ փո-

քըր մի ժամանակ իրեն հանդիստ տալու համար փոխանորդ ընտրելու խնամով ըմբռնել եմ՝ նամակը, և ձեզ այնպէս մեկնել և այնպէս հասկըցունելու ճարտարութիւնն ունեցել եմ և դուք ալ այնպէս գործադրել էք ի վերջնա իւր անձին և ազգին միանգամայն, և այս է ահա Ն. Սրբազնութեան անմխիթար վիճակը՝ զոր չխնայել մերկապարանոց յայտնել ամեն անոնց՝ որ իրեն մերձենալու պատիւն կուենան:

Այս Ս. Պատրիարքի կողմէն:

Իսկ դուք՝ վերջին նիստին և անկէ առաջինին և ուրիշ շատ անգամ՝ Ս. Պատրիարքի հրաժարական խնդրովն զբաղելով և անոր բոլոր գրութիւնները հասկնալով՝ ինչպէս որ կրնան հասկցուիլ, ժամանակիս ծանրակշիւ պարագայները նկատաւորութեան առիթ և Հայկական նորածին խնդրոյն դարգայման և դործադրութեան ասպարէզ մտնելու միջոցին ահա նոր նախաձեռնող և առաջի աշխարհի դայն պատկերացունող Ներսէս Պատրիարքի հրաժարումն ընդունիլ անկարելի մտնեցիք: Բայց ըստ որում Նորին Սրբազնութիւնն իր հրաժարման զիրքով, քիչ մ'ալ անձին վատառողջութեան պատճառաւ գրեթէ դադար տրուած էր ազգին Բ. Գրան հետ ունեցած պաշտօնական սոցնչութեան և մինչև իսկ ի շըրջանակի ազգային ներքին գործոց Պատրիարքական պաշտօնավարութեան, որոշեցիք Պատրիարքական փոխանորդ մը կորդել եպիսկոպոսաց դասէն և նմա յանձնել Պատրիարքական պաշտօնին գրեթէ բոլոր գործառնութիւնները, սա կրկին պայմաններով. Ս. յառնուն Ներսիսի Ս. Պատրիարքի իշխանութիւն վարել, և միայն ոչնչորի ժամանակ՝ որչափ նորին Սրբազնութիւնն պատշաճ տեսնէ իր անձին կողմըրման և իր հրաժարականին յետոյ կոչման համար, և Բ. Բարձրագոյն Գրան հետ յարաբերութեան մէջ չմանել մինչև որ անոր հաճութիւնն առնուի, զոր որոշեցիք խնդրել Երեւանի տանական հանրագրով մը, որպէս զի այն աթիւ պատահ ունենայք Բ. Գրան և աշխարհի ծանուցանել թէ ազգը յանձնաւ գոհ

է իւր Ս. Պատրիարքէն և թէ նորին Սրբազնութեան հրաժարման պատճառները ծանօթ և մշտնջենական վշտակցութեան պատճառ են Ազգին: Սոյն խորհրդածութեամբ ընտրեցիք Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան Պատրիարքական փոխանորդ և այս կերպով թէ Հայկական աշխարհավարութեան և թէ Պատրիարքական պաշտօնին ամեն պահանջները գոհ ընել և ամեն իրաւունք ապահովել կարծեցիք:

Այս ալ ձեր կողմէն, Ս. Պատրիարքի կողմէն:

Բայց մենք միայնակ չեմք. Ս. Պատրիարք մը կուզէ որ մեզ ընտրած է և իր բաղդը մեզ յանձնած և հետեւաբար նախանձախնդիր իր շահուց ի մօտոյ կը հսկէ մեր վրայ: Բայց Ս. Պատրիարք աւելի ճիշդ խօսելով ժողովուրդը տեղեակ չէ և չկրնար ըլլալ ամենայնի և ըստ ամենայնի, ուստի երբեք միայն տեղեկութիւններով սխալ դատաստան ընելու կ'առաջնորդուի: ասկէ կը ծագին յուզմունք և խռովութիւնք զոր կը փութան արծարծել վատասիրտ անձինք որ սղտոր ջրայ մէջ կը սիրեն որսալ, և որոց նըպատակն է ազգին ճշմարիտ շահուց վրայ կանգնեալ չենք բանդել և անոր աւերակաց վրայ բարձրացունել իրենց անձնական շահերը: Արդ՝ մեր ժողովուրդը թիւրիմացութեան մէջ խորխորանք է. անոր շարամիտ անձինք այնպէս համոզել են և դեռ ամեն որ կը քարոզեն թէ Ազգային ժողովն Ս. Պատրիարքի հրաժարականն առնելու որոշում տրուած է, և Պատրիարքական փոխանորդ մ'ընտրելուն նպատակն իր այս որոշումն յառաջ վարել և ասով ի վնաս Ս. Պատրիարքի թիւն մատուցանել է այլում: Ո՞րքան հեռի մեր մտազրուծենէն, ո՞րքան հեռի է ճշմարտութենէ այս ժխտը, որ բաւական էր խայտառակելու համար մտածել թէ անոր այսօրինակ հեղինակները դեռ երէկ թշնամի էին և են իսկ մեր սիրելի Պատրիարքին:

Բայց ինչ որ է, Ս. Պատրիարք լուսաւորել պէտք է, ժողովուրդն ի ճշմարտութիւն ածելու հոգ տանիլ պէտք է, զի խռովութիւնն ամեն շար-

եայ ծնող է, և ապացոյց՝ Ձեզ կը ցուցնեն այն անտորազիր նամակներն որ Մատթէոս Սրբազանին վրայ սպառնալիք տեղադրով կ'աղեն աղաչային գործերն անխնայական զիրքի մէջ պահել շարունակել:

Այս ալ ժողովուրդին կողմէն:

Ստեղծ են ահա Օրակարգի առաջին խընդրոյն էական կէտերն՝ որ Մատթէոս սրբազանի հրաժարման աթիւ ձեզ կը ներկայանան և զոր մի առ մի ձեր լուրջ խորհրդածութեան առարկայ պիտի ընէք անշուշտ Բայց կան խառ փոքրիկ հաշիւ մ'ունիք մարդերու, այն է Մատթէոս սրբազանի հրաժարումն ի Պատրիարքական փոխանորդութենէ, սոսկ անձի իրն զիր, որուն վրայ նախ կը հրաւիրեմ ի բեմ այն ատենաբաններն որ խօսիլ կ'ուզեն:

(Բաւական երկար և ընդհանուր լուծեմէ ետեւ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Շարունակելով):

Ըստ որում մարդ չ'ուզէր խօսք առնուլ այս կէտին վրայ, կը պարտաւորեմ ժողովին բաւականութիւնն ստուգել ներկայութեան տուած մարէն և քուէարկութեան զիմել այս անձնական խնդրը վճարաբար որոշելու համար:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ս. Պատրիարքի կողմէնն առաջ խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ խօսեցէք:

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Խնդիրնիւ երկուք է. միայն Մատթէոս եպիսկոպոսի հրաժարականը չէ. եթէ միայն նա ըլլար, կը խորհէինք թէ պիտի ընդունինք կամ ոչ: Ասկայն անոր յարակից խնդիր մ'ալ կայ. վերջին ընտրութեամբ Մատթէոս եպիսկոպոսն Ամեն Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքին փոխանորդ կարգեցինք. կը կարծէինք որ ասով նորին Սրբազնութեան հրաժարականի խնդրը մահաբնակ, բայց չկրցինք յաջողիլ. մեր ընտրած փոխանորդն ալ կը հրաժարի, այս հրաժարա-

կանն ընդունելէ ետե կողմը պիտի գայ ու ընդունաւ իմ ընտրութեանը. սակայն ի՞նչ զխոնք որ վերջէն ընտրածնիս ալ չպիտի հրաժարի ներկայ պարագաներուն մէջ: Ես կը կարծեմ որ խնդիրը հիմնապէս լուծելու համար պէտք է երկու հրաժարականներն ալ միասին նկատողութեան առնել:

Պատրիարք մ'ունէինք, կը կարծէինք որ պիտի շարունակէ և իր բարձր հսկողութիւնն ի գործ պիտի դնէ. սակայն թա՛հ մ'առաջ կարգացուած բոլոր թղթակցութիւնք համոզում կուտան ինձ թէ՛ Նորին Սրբազնութիւնն այլ ևս յանձնառու չպիտի լինի և ոչ անուանալի կան կերպով իսկ շարունակել իր պաշտօնը. ուրեմն ի՞նչ պիտի ընենք այս պարագային մէջ. ազգին շահերը չեն ներեր մեզ որ Նորին Սրբազնութեան հրաժարականն ընդունինք, բայց միւս կողմէ՛ Նորին Սրբազնութիւնն ալ ոչ ևս Պատրիարք եմ կրտէ և կ'սեպէ. Պատրիարք չունենալով հանդերձ փոխանորդ մ'ընտրել քաղաքագիտական ընթացք չէ: Այս պարագային մէջ ես թերեւս յանդգնօրէն ալ խօսած ըլլամ, պիտի ըսեմ որ պէտք է ընդունիլ Նորին Սրբազնութեան հրաժարականը, տեղապահ մը դնել և երբ հարկ ըլլայ՝ ընտրել Պատրիարք մը: Ստոյգ է որ երկու տեսակ չարիք կայ ստոր մէջ. մէկն այն է որ ներկայ քաղաքականութիւնը չներէր ընդունիլ Ս. Պատրիարքին հրաժարականը, և միւսն է աւելորդ խաղաղ հրաժարիլ և անհամոզելի մնալ. բայց յերկուսը չարեաց փոքրագոյնն ընտրելով՝ հրաժարականն ընդունիլ հարկ է. թէ և ես ալ ամենէն առաջ փոխանորդներէն էի որ Նորին Սրբազնութիւնը մնայ իր աթոռին վըրայ, և իր անունովը տեսնուին ազգին գործերը. սակայն երբ ինք չկամ կրտէ, և Պատրիարք չեղած ասան գործողի իշխանութիւնը կամ Վարչութիւնը փափուկ գործեր պատահած ատեն միշտ պիտի պարտաւորի հոս օրէնքողի ժողովին դիմելու և հրահանգ խնդրելու, այն ատեն ժողովն միշտ Վարչութեան ընելիք գործերուն հետ պիտի զբաղի, և թերեւս այնպիսի գործերով՝ որոնց հոս գալն

իսկ խոչնդով չէ: Ուստի այս անել ճշմարէն աղաւթելու համար պէտք է ընդունիլ անմիջապէս Ս. Պատրիարքին հրաժարականն և պէտք եղածն ի գործ դնել, որով եթէ ոչ բոլոր փոխանորդին, գէթ մեծ մասին առաջն առնուած կըլլայ:

Իսկ քաղաքականութեան կէտին գալով, կը կարծեմ որ մինչև աստիճան մը թեթեւցուցած կըլլանք զայն՝ եթէ այնպիսի թագրիր մը տանք Դուռն, ուր Տ. Ներսէս Սրբազանին վրայ ազգին ունեցած համակրութիւնը յայտնելով հանդերձ զայն իր աթոռին վրայ պահելն անկարելի եղած ըլլալը խոստովանինք. ասով ազգին արժանապատուութիւնն ալ փրկած կըլլանք, զի ազգին արժանապատուութիւնն ալ ոչ սակաւ կը վիրաւորի այս անորոշ և անել փնտրել մէջ մնալով:

ԵԱՃՊԱՋ Ն. ԷՅ. — Ինձմէ՛ առաջ խօսող ատենարան էֆէնտի այն ըսածը թէ՛ երկու խնդիր իրարու յարակից են, թէ և իրաւացի է, սակայն մեր որովհետեւ փոխանորդ մ'ընտրեցինք յանուն Ս. Պատրիարք Հօր, և նոյն Փոխանորդն որքան ալ անուղղակի պատճառներով ստիպուած է հրաժարիլ, մեզի դրկած հրաժարագրին մէջ անձնական տկարութիւնը պատճառ կը ցուցնէ. ուստի Դիւանը լուրջէն, ինչպէս որ ի սկզբան առաջարկեց, նախապէս Տ. Մատթէոս Եպիսկոպոսի հրաժարականը քուէի ենթարկելով, որ ըստ ինքեան պարզ հրաժարական մ'է արդէն. և ետքի ձգելով Ս. Պատրիարքի հրաժարականն, որ ըստ իս Տ. Մատթէոս Եպիսկոպոսի հրաժարականը քուէի ենթարկուելէն և այս քուէին արդիւնքը տեսնելէ ետե պէտք է խնդիր ըլլայ և վիճարկութեան նիւթ դառնայ:

ՊԱՆՈՒՍԵԱՆ Պ. ԷՅ. — Այո՛, կը ձոյնակցիմ որ նախ Մատթէոս Եպիսկոպոսի հրաժարականը քուէի դրուի,

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Նորընտիր փոխանորդի հրաժարման խնդիրը կը յազենք. բայց նախ պէտք է գիտնալ որ Պատրիարք չկայ. քանի որ գործին տէրը կրտէ թէ ես

չկամ, կը հետեւի սակէ որ փոխանորդն ալ չկայ. ուստի փոխանորդէն առաջ Պատրիարքին խնդիրը լուծել պէտք է:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Մատթէոս Սրբազանի հրաժարման պատճառն ինձ այնպէս կերելի թէ՛ Ս. Պատրիարք Հօր իր հրաժարման վրայ պնդելէն յառաջ եկած է, եւ շատ ալ իրաւացի է. վասն զի քանի որ Ներսէս Սրբազան վերջնապէս հրաժարիլ կուզէ Պատրիարքութենէ, Տ. Մատթէոս Եպիսկոպոս ալ բնականաբար Նորին Սրբազնութեան փոխանորդական պաշտօնը չկրնար վարել: Եթէ Տ. Մատթէոս Սրբազանի հրաժարականն իր մէջ բերած պատճառին համար ընդունինք, և խնայենք իւր վատաւորը վիճակին, ես չեմ կարծեր որ նոր մ'ընտրելով կարենանք խնդրոյն մէջէն ելնել, որովհետեւ ո՛վ որ ալ ընտրենք, մեծ իրաւամբ Մատթէոս Սրբազանի օրինակին պիտի հետեւի Գործնական ճամբու մէջ մտած կըլլանք՝ եթէ նախ Ս. Պատրիարք Հօր հրաժարականի խնդիրը նկատողութեան առնուք, որոյ լուծումէն կախում ունի Տ. Մատթէոս Սրբազանի հրաժարման խնդիրն ալ: Գալով Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդրոյն, ինչպէս որ Նորին Վսեմութեան Օտենապետ փաշային գրած թղթէս ալ կերեւոյ, ես համոզուած եմ որ Ս. Պատրիարքը կարելի չէ որ շարունակէ Պատրիարքական պաշտօնը, քանի որ իւր հրաժարման տեղի տուող պատճառները դեռ կան ու կը մնան. միթէ այսպիսի հրաժարական մը կրնա՞նք ընդունիլ. և եթէ ընդունինք, աշխարհի առջև քաղաքագիտական գործ մը կըրնա՞նք ըրած ըլլալ. ես կըսեմ, բացարձակապէս ո՛չ. ահա այս կէտն է բուն խնդիրը. ուրուն վրայ կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը: Ուստի սոյն տարտամ ընթացքին վախճան մը տալու համար կառաջարկեմ յանձնարարել Վարչութեան, որ ջանայ համոզելու զՏէր Մատթէոս Սրբազան, վարել փոխանորդութեան պաշտօնը, և Ս. Պատրիարք Հօր հրաժարականին մէջ ցոյց տրուած պատճառներ

բուն անյապաղ բարձմանը համար պարտաւորել Վարչութիւնն՝ որ այս պատճառաւ Բ. Գրան քով ըրած ջանքերը շարունակէ վերստին, և արդիւնքը հոս հաղորդէ: Եթէ այսպէս չընենք, տարակոյս չկայ թէ Ս. Պատրիարք Հօր հրաժարականին նկատմամբ Ժողովն չկրնար որ և է տնօրէնութիւն մ'ընել, որուն կարծեմ ամենքս ալ համոզուած ենք: Ահա այս է իմ կարծիքս ու առաջարկութիւնս:

ԻՌԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Փոխանորդութեան խնդիրն ինքնին կոչնչանայ երբ Ս. Պատրիարքն փապառ հրաժարեալ եմ՝ կրտէ: Անշուշտ կը յիշէք որ փոխանորդն ոչ թէ Պատրիարքութեան, այլ Պատրիարք Ներսէս Սրբազանին համար ընտրեցինք, քանի որ նոյն իսկ փոխանորդեալը կրտէ թէ ես Պատրիարք չեմ, ի հարկէ փոխանորդ չմնար: Ասոր համար փոխանորդի խնդրովն զբաղիլ աւելորդ է. այլ պէտք է բուն իսկ Պատրիարքական խնդրոյն վրայ տնօրէնութիւն մ'ընել առ այժմ. երբ սա լուծուի, միւսն ալ կը լուծուի:

ԵԱՃՊԱՋ Ն. ԷՅ. — Իրաւացի են ոչն առարկութիւնք՝ որ մէջ կը բերուին թէ քանի որ փոխանորդեալը չկամ կրտէ, Փոխանորդ չմնար. այս առարկութիւնք տեղի չպիտի ունենային՝ եթէ ինչպէս ընդհանուր մարդկան օրէն է, փոխանորդ ուղղ առն ինք իր ձեռօք փոխանորդը դրած ըլլար. բայց մենք այս ընդհանուր օրէնքին համաձայն չվարուեցանք. և Դիւանը մեզի այնպէս ազդարարեց թէ Նորին Սրբազնութիւնը Ժողովոյս կը յանձնարարէ իր տեղ փոխանորդ մ'ընտրել, մինչդեռ այնպէս չէ եղեր: Այս սխալ ըմբռնումը մեզի սխալ քայլ մ'առնել տուաւ. մինչդեռ Նորին Սրբազնութիւնը մեզի յանձնեք է որ Պատրիարքական աթոռը թափուր նկատելով փոխանորդ մ'ընտրենք, մեք յանուն Նորին Սրբազնութեան ընտրեցինք Փոխանորդը, թէ և իրեն կը վերաբերէր իր փոխանորդն ինք

ընտրել: Հիմա որովհետև մեր ընտրած մտ-
խանորդին հրաժարականն ուղղակի մեղի կու-
գայ և մեղի կը վերադարձնի զայն ընդունելը
կամ չընդունելը: Նախ զայս որոշենք, և ետ-
քը Պատրիարքական հրաժարականի խնդիրը
ձեռք տանենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Գարա-
մանեան էֆէնտիինն է: Եսկայն խօսք շատեա՞ծ
հարկ կը համարիմ Եւհարազ էֆէնտիին մէկ
սխալն ուղղել:

Ամենդ կարգացիր և տպուած է Սրբա-
ղան Պատրիարք Հօր նամակը. անոր մէջ
կըսէր Նորին Սրբազնութիւնը՝ թէ քանիցս
ըսի Բ. Դրան և ձեզ թէ անկարելի է հրա-
ժարականս յետ առնուլ, բայց դուք դարձեալ
կը թախանձէք և կը սրահանջէք որ այս պաշ-
տօնը չթողուի: Այդ կաղաչեմ որ եթէ առ-
այժմ դժուար է Պատրիարք մ'ընտրել, գո-
նէ Փոխանորդ կամ Տեղապահ մը ընտրել
բարեհաճիր, որպէս զի Ազգային գործառնու-
թիւնը չ'զնաւորին և Բ. Դրան հետ յարաբերու-
թիւնը չ'զնաւորին:

Այս խօսքն ինչ մտք ալ ըսած ըլլայ
Ն. Սրբազնութիւնը, սարգապէս անոր խմատին
հետեւեցանք. չ'ըսեմ ես, ձեր խոհականու-
թեան դէմ մեղանշած կըլլամ, իբր թէ դուք
ամենայն ինչ իմ բացատրութեամբս կը հաս-
կընաք, և ըստ որում խօսքին պարզ խմատը
կը համապատասխանէր մեր քաղաքագիտական
դիտմանց, չլարանեցանք զայն ի գործ դնել,
ո՛ւր է այստեղ մեր սխալ քայլը. կաղաչեմ
մի այդպէս օտարութի կարծիք մէջ բերէք,
մեք ո՛չ խարուսեցանք և ո՛չ սխալեցանք, այլ
դիտութեամբ գործեցինք, զի Պատրիարքի
հրաժարականն ընդունիլ չուզելով հանդերձ՝
Պատրիարքական սրաշտօնին մեքենայն շար-
ժուն պահել սարտաւորուած էինք և ենք:

Խառն ժողովն ինչ կըսէր մեզ իր գրոյն
մէջ. կըսէր թէ քաղաքի գրող չկայ, կալուա-
ծագիր կնքող չկայ, Դրան հետ յարաբերու-
թիւնը դադրած է, վասն զի Պատրիարքը չը
գործէր, միով բանիս Խառն ժողովը կաշկան-
դեալ է, ասոր հետքը դուրս. մեք ալ գի-

տութեամբ այնպիսի անօրէնութիւն մ'ըրինք,
որ Պատրիարքը հանգիստ մնայ և գործերը
տեսնուին. միթէ՞ Սրբազանին միտքն ալ այն-
պէս չէ՞ր. ինչ կը հասկնաք սա խօսքէն թէ
«Փոխանորդ մը դրէք որ Բ. Դրան հետ յա-
րաբերութիւնը և ազգային գործառնութիւնը
չդադրին և չ'զնաւորին». միթէ սխալ քայլ առած
չըլլալու համար պէ՛տք էր պատասխանել Սրբա-
զանին թէ դուն ընտրէ փոխանորդդ՝ նա՛ որ և
ո՛չ իսկ Ազգային ժողովով իր հրամանին հա-
մեմատ ընտրածնիս ի պաշտօն հրաւիրել զա-
յաւ. իսկ Ս. Պատրիարքին հիմայ իր հրաժա-
րականին վրայ պնդելովն այն չէ՞քք՝ որ մեք
կանգնել ուղեցինք, խախտեցաւ. Մատթէոս
եպիսկոպոս յանուն Ներսէս Սրբազանի սխալի
գործէր, յանուն Պատրիարքի կոնդակները
սխալ օտարագրէր և քաղաքները կնքէր: Հի-
մա որ Ներսէս Սրբազան Պատրիարք չեմ
կըսէ և չուզէր մնալ իր աթոռին վրայ, հը-
նա՞ր է որ Փոխանորդը գործէ. մենք կու-
զենք որ Ներսէս Սրբազան մնայ դարձեալ
Պատրիարք և փոխանորդով մը գործէ.
Իսկ նա չուզէր մնալ և կուզէ որ Փոխանորդ
մը իր տեղ պատրիարքութիւն վարէ, զի
ինքն իսկ զիտէ որ իր հրաժարականն չը
կրնար ընդունուիլ Ազգէն երբ Դուռն ան-
գամ չուզեց ընդունիլ. մենք ալ ճիշդ այնպէս
ըրինք, ո՛ւր է մեր սխալը:

Խնդիրը պարզ է, անմիջապէս քուէար-
կութեան պիտի դնեմ. ըստ որում մեք ո՛ր
դին ալ դառնանք, որ և է տեսակէտով ալ
խնդիրը ղնենք, քաղաքագիտորէն տնօրէնու-
թիւն մ'ըրինք Փոխանորդ մը ընտրելով, ար-
դիւնքը սա եղաւ որ ընտրած փոխանորդնիս
հրաժարականն կուտայ. նախ այս հաշիւը մաք-
րենք, պիտի ընդունինք Փոխանորդին հրա-
ժարականը թէ ոչ: Ասկէ ետքը կուգայ
Պատրիարքի հրաժարման խնդրոյն միայ խօ-
սիլ:

Բայց այս քուէարկութիւնն ընելու համար
Ժողովոյ ներկայութեան թիւը բաւական չէ
կարծեմ. եթէ 24 ձայնից միաբանութիւն
գոյանայ՝ բաւ. չէ նէ ուրիշ օրուան կմնայ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՃ. — Խօսք ուղած
էի Եւհարազ էֆէնտիին սխալն ուղղելու հա-

մար, բայց Ատենապետ փառան կանխելով քան
դիս, հարկ չմնաց:

Գալով հիմա քուն խնդրոյն, Ատենապետ
փառան քուէի դնել. կառաջադիէ Մատթէոս
եպիսկոպոսի հրաժարականը, բաւ. եթէ ըն-
դունուի ինչ պիտի ըլլայ մտքը հետեւեալը.
եթէ ուրիշ փոխանորդի մը ընտրութեան սխ-
տի ձեռնորկներ, նախ պէտք է գիտեալ թէ
ընտրեալն ո՛րի փոխանորդութեան պաշտօնը
պիտի վարէ. Ներսէս Սրբազան Պատրիարքի՞ն.
բայց սա կը հրաժարի կարեւոր պատճառներու
համար, և այդ պատճառները բարձուած չըլ-
լալուն կը պնդէ և ձեռ իսարստ հրաժարեալ եմ
ի Պատրիարքութենէ Հայոց Կ. Պօլսոյ կըսէ.
եթէ Պատրիարքութեան փոխանորդական
պաշտօն պիտի վարէ, նախ պէտք է ընդուն-
ուած ըլլայ Ներսէս Սրբազանի հրաժարականը.
բայց թէ Ժողովս կրնայ ընդունիլ նորին Սրբ-
ազնութեան հրաժարականը, ըստ իս պէտք է
նախ այս կէտն որոշել և աստ անցնիլ Տ.
Մատթէոս եպիսկոպոսի հրաժարականի խնդ-
րոյն: Եթէ պարզ ըլլար Ս. Պատրիարքի հրա-
ժարականն և այսքան պնդէր, շատ կարելի է
որ հարկին առջև խոնարհեալ Ժողովս տնօ-
րէնութիւն մ'ընէր. բայց Նորին Սրբազնու-
թեան Բ. Դուռն տուած հրաժարագրին մէջ
այնպիսի պատճառներ մէջ բերուած են՝ որ
ուսանց անոնց բարձուած տեսնելու. Ժողովս
չկրնար նորին Սրբազնութեան հրաժարականն
ընդունիլ առանց ազգին և պատմութեան
առջև ծանր պատասխանատուութիւն ստանձ-
նելու: Յիշեալ պատճառներն կան և կը մնան
դէս. եթէ տառնց բարձուան համար հարկ ե-
ղածը ի գործ դրուի անյատաղ, կարծեմ խըն-
դիրն այն ատեն կը պարզուի և Ժողովս ալ
մեծ դժուարութենէ մը կազատուի Ուստի ա-
ռանց այս փախուկ և կարեւոր կէտերն ի նկա-
տի տանելու Ժողովս չէ թէ դժուարութենէ
մը ազատած կը լինի Տ. Մատթէոս եպիսկո-
պոսի հրաժարականը քուէարկելով, այլ մա-
նաւանդ թէ այնպէս կը կարծեմ որ մի և նոյն
դժուարութեանց մէջ պիտի մնայ դարձեալ:
Խնդիրն ըստ իս պէտք է հիմէն բռնել. հե-

տեւարար՝ ինչպէս ըսի ստիկ առաջ, դարձեալ
կըսեմ, պէտք է յանձնարարել Վարչութեան
որ հանձնէ զՄատթէոս եպիսկոպոս վարել
Ժողովն իրեն յանձնուած պաշտօնը, և շա-
րունակէ վերադին իր ջանքերը Բ. Դրան մօտ
Ս. Պատրիարքին հրաժարմանը տեղի տուող
պատճառներուն բարձման մօտին. և եթէ իր
ջանքերը չկրնան փոխարեւի արդիւնք մը ձեռք
բերելու յանդիլ, այն ատեն պէտք է զիմէ
Ժողովս՝ որ պէտք եղած միջոցներուն ձեռ-
նարկէ, որպէս զի միանգամ ընդ միշտ վեր-
նան Ս. Պատրիարք Հօր հրաժարականին ըս-
տեղ տեղի տուող պատճառները, և բարեկար-
գութիւն ու ապահովութիւն անյատաղ գոր-
ծադրոյն Հայաստանի դաւաճաց միջ:

Այս այս տեսակէտով պէտք է նկատել
խնդիրը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Ներկայ վիճակ-
նուս ցաւալի ըլլալն ամենա ալ կը խոտորվա-
նինք. չգիտենք թէ ո՛վ կմնայ ստատոսականու-
տու վիճիլ այս վիճակին. մեք այսօր հրաւիր-
ուեցանք փոխանորդի հրաժարականին համար,
բայց անոր հետ Պատրիարքին անգտնալի
հրաժարման խնդիրն ալ երևան ելաւ: Շատ
իրաւարդ զիտողներ եղան թէ փոխանորդի
հրաժարականի խնդիրը Պատրիարքական հրա-
ժարման խնդիր է, և թէ հարկ է նախ Պատ-
րիարքական հրաժարման խնդիրը վերջացնել:
Բայց ես իրայ վիճակը չլսիմ կը տեսնեմ. և
այս օրուան նիստն ալ անբաւական կը համա-
րիմ, որովհետև Պատրիարքի հրաժարման
խնդիր չկայ Օրակարգը, և Ժողովս ալ ան-
պատրաստ է այս մօտին: Կա կառաջադիւնք որ
եթէ Ժողովը նկատողութեան պիտի առնու-
այս խնդիրը, հիմնապէս առնու և վերջնապէս
վճռէ ինչ որ պիտի վճռէ: Բայց ինչ ընելու
է որ վճռական ըլլայ. ևս կարծեմ թէ մօտը
հասած է որ Ժողովս իր սահմանադրական
պաշտօնը կատարէ, այսինքն իր վճիռն հաղորդէ
Պատրիարքին. մինչև ցարդ շատ բան ըսինք
նորին Սրբազնութեան, շատ խնդրեցինք ու
պաղատեցանք որ իր աթոռին վրայ մնայ, ու
բովհետև ազգին շահն այսպէս կը պահանջէ.
բայց նա մօտիկ չըրաւ. հիմա մամն ելած է որ
ժողովայն վճիռ մը ըլլայ և նորին Սրբազնու-

Թեան հաղորդուի ըսելով որ ազգին կանոն
այս է, սկսած է որ հնազանդիք, և եթէ չհնա-
զանդիր, ազգին առջև պարտադանց կըլլար :
Այս վիճակին մէջ ուրիշ հնարք եւ ճամբայ
չեմ տեսներ խնդրոյն մէջէն ելնելու, քանի որ
Ազգին շահը կը պահանջէ որ զինք իր աթո-
ռին վրայ ունենանք : Ուստի ուրիշ ճար չկայ,
բայց եթէ կոչել զինքն իր սահմանադրական
պարտականութեան, որում ուխտած է, եւ
սկսած է հրատարակել Բայց որովհետեւ այսօր սոս
վճիռը չենք կրնար տալ, զի Ժողովը մեծա-
մասնութիւն չունի և բացակայք անտեղեակ
են խնդրոյն, ուստի կառավարիչն որ Պատ-
րիարքի հրաժարման խնդիրն այսօր յետ մնայ
և Ժողովս յառաջիկայ ուրբաթ օր նորէն գու-
մարուի և վճռարար զայն վերջացունէ :

ՄԱՍԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՃ. — Փախաղեան
էջնորդի այնպիսի բան մը կըսէ որ նոր է մեզի
համար Պատրիարք մ'ունինք՝ որ իր աթոռն
եղնելէ ի վեր գրեթէ ամեն օր կը հրաժարիմ
կըսէր, այս անգամ խաղաւ հրաժարեալ եմ
կըսէ. շատ քանակներ որ համոզեմ, պողա-
տեցանք և մինչև իսկ փոխանորդ մը գնելու
եղանք, բայց այս ամենն ի դերե ելաւ, և վեր-
ջապէս չուզէր որ շարունակէ : Թէ որ Փա-
խաղեան էջնորդի այն առաջարկութիւնն ը-
րամ չըլլար, եւ Մատթէոս եպիսկոպոսի փո-
խանորդական օրաշտովն ընդունելու կամ չըն-
դունելու մասին կարծիք պիտի յայտնէի և
ըսէի որ Պատրիարքին վերջնական հրաժար-
ման վրայ փոխանորդական պաշտօնը յօդս կը
ցնդի. այնպէս որ եթէ մեր մէջէն մաս մը
Մատթէոս եպիսկոպոսի հրաժարականը չըն-
դունելու ելնէին, այն ատեն մեր վիճակն ա-
նել պիտի ըլլար փասն զի Մատթէոս եպիս-
կոպոս Պատրիարքին փոխանորդ ընտրած ենք,
և Պատրիարքն այժմ կը պնդէ թէ ինք հրա-
ժարեալ է, ուրեմն քանի որ Պատրիարք չկայ,
փոխանորդութիւնն ալ արգէն ընջատած է,
սկսած է պատրիարքական խնդրոյն վրայ խոր-
հիւ և անոր վերջնական կերպով փոխան տալ :
Անկարելի է այլ ևս այս վիճակը շարունակել,
և Պատրիարքական աթոռը թափուր թողուլ :

Յ. ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — Թէպէտ և
Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդիրը փո-
խանորդին հրաժարականին հետ յարակից է
կըսուի, սակայն ըստ իս երկուքը զատ զատ են,
կատարութեան առնել սկսած է, որովհետեւ
մեր մինչև ցարդ Ս. Պատրիարք Հօր շատ ա-
ղաքանք և ստիպում ըրինք՝ որ գոնէ Պատ-
րիարքութեան անունը պահէ, և իբրեւ հրա-
ժարեալ Պատրիարք տոբոնդրէ պաշտօնական
գրեւոր, և թէպէտ ինք դարձեալ կը պնդէր,
բայց իրեն ներկայացող անձանց հետ մեղմորէն
կը խօսէր և յուսոյ նշոյլ մը կը ցուցնէր թէ
օր մը կարող կըլլանք զինքը պաշտօնին վրայ
նորէն տեսնել : Այս յոյսն էր որ անցեալ նըս-
տին չթողուց մեզ զինքն իսպառ հրաժարեալ
նկատել, այլ դարձեալ Պատրիարք Հայոց նը-
կատելով ընտրեցինք փոխանորդ մը Բայց նո-
րենտիր փոխանորդը կը հրաժարի. ասոր հետ
մէկտեղ Ս. Պատրիարքի հրաժարման նոր խոն-
դիր մը կը ներկայանայ մեզ, թէ և մինչև հիմա
հրաժարեալ Պատրիարք անունով կատարող-
րէր, բայց այսօր փախաղեան հրաժարեալ քանակով
ստորագրութիւն կուգայ. ասոր համար ըսի որ
նոր կերպով հրաժարական մը կը ներկայանայ
մեզ : Այս խնդիրը չենք կրնար Մատթէոս
եպիսկոպոսի հրաժարման ընդունելու կամ
չընդունելու խնդրոյն հետ շփոթել. եթէ ա-
ռանց այս վերջինը լուծելու անմիջապէս Պատ-
րիարքական խնդիրը ձեռք առնենք, ուրիշ բան
ըրած չենք ըլլար : Բայց եթէ անցեալին ըրած
փոխանորդական ընտրութիւնին յօդս հանած
կըլլանք, որով թէ Ժողովոյս օրաշտովն ոչնչա-
ցուցած և թէ ընտրեալին արժանապատու-
թեան դարձ կըլլանք : Ուստի նախ Մատթէոս
եպիսկոպոսի հրաժարականը բուխարեմք իբրեւ
կարեօր կէտ մը պիտի ընդունուի՝ թէ ոչ՝
որչեմք. անկէ ետք Պատրիարքական խոն-
դիրը ձեռք առնենք որ արցնէ ինք մեծ կարեօ-
րութիւնն ունի. եթէ այսպէս չընենք՝ խնդիրն
բոտ իս անել վիճակի մէջ կ'ընայ.
Թողունք Պատրիարքի հրաժարականի խնդիրն
և նորենտիր փոխանորդի հրաժարականը Պատ-
րիարքի հրաժարման խնդիրը որ հինգ տարի
է ի վեր կայ՝ նոր է, Փոխանորդինը՝ որ դեռ և
թայ Ս. զգին վրայ, և թերեւ Ս. Պատրիարքին

նորէն թախանձելով ընդունել տանք իր պաշ-
տօնը : Հետեւապէս եւ կառավարիչն որ նախ
Մատթէոս եպիսկոպոսի խնդիրը քուէարկուի
վերջանայ :

ԵԱՆՊԱՋ Ն. ԷՃ. — Ներսէս Հայր սուրբի
առաջարկութեան համամիտ եմ, որովհետեւ
ինք ալ նոյն էր արդէն : Ղալով այն կէտին թէ
կարգացուած գրեւորն ամբողջական մէջ սխալ
ըմբռնում մը կայ ըսած էի, և Պիւսան ալ
ուղղեց զայն՝ ըսելով թէ ուղղութեամբ և զի-
տութեամբ գործեց Ժողովը, եւ կըսեմ թէ
գիտութեամբ գործեց ըսուածը Պատրիարքին
հրաժարականն ետ առնել տալու յուսով էր
ինչպէս որ Ներսէս Հայր սուրբ ջօշափել տը-
տաւ նոյն կէտը՝ ըսելով թէ յուսոյ նշոյլ մը
կոր զինքը դարձեալ իր աթոռին վրայ տես-
նելու :

Այժմ քանի որ Ս. Պատրիարքն փախաղե-
հրաժարեալ եմ կըսէ, և անցեալին ընտրած
փոխանորդին ալ կը հրաժարի, չենք կրնար
այս վերջինն խնդիրն անտարբերութեամբ
մէկդի դնել և անմիջապէս Պատրիարքի խոն-
դրոյն ձեռնարկել. այլ սկսած է նախ Մատթէոս
եպիսկոպոսի հրաժարականը քուէի դնել, եւ
զայն որոշելէ ետեւ Պատրիարքի խնդրոյն
անցնիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, դար-
ձեալ թիրխացութիւն կը սարդի մեր մէջ :
Մեր այսօրեայ գումարումն արտաքոյ կարգի է,
Խառն Ժողովն հրախրել տուաւ զմեզ, Նո-
րենտիր փոխանորդի հրաժարականն օրակարգ
ընելով : Այս օրակարգը մեր չղրինք, ինքնին
եկու բռնացաւ մեր վրայ. դուք ասոր ներքեւ
Պատրիարքական խնդիր կը նկատէք. այդ
խնդիրը մինչև հիմա յուսոյ վրայ հիմնեալ էր,
այսօր գոյնը փոխուեցաւ իսպառ հրաժարեալ
ընելուն վրայ, այս է որ կը խրաչեցնէ զմեզ և
իբր նոր խնդիր նկատել կուտայ և ասոր հա-
մար զայս յետ ձգել և Փոխանորդի խնդիրը
վերջացունել կը փափաքիք. բայց եթէ Պատ-
րիարքի հրաժարման խնդիրը որ հինգ տարի
է ի վեր կայ՝ նոր է, Փոխանորդինը՝ որ դեռ և
թէ կերեւան ելաւ, հիւն է. և մի թէ պատրաս-

տուած ենք զայն լսելու, ոչ : Փոխանորդին
հրաժարականը նորագոյն է ըստ իս. ուստի
ան ալ յետաձգել պիտի պարտաւորինք : մանա-
ւանդ որ անբաւական է այսօրուան նիստեր,
նիս. և կարելի չէ. անբաւական նիստի մէջ
կանխաւ սերտուած և Օրակարգի մէջ անցած
խնդրէն դուրս ո՛ր և է խնդրոյ վրայ սկսուած
վիճարանութիւնը փակել. միայն եթէ իբր ա-
տենական գործողութիւն նկատէք, այն պտեն
կարելի է իբր պարզ հրաժարականի խնդիր
մարբել վերցնել մէջ տեղէն : Բայց եթէ ասոր
ներքեւ ուրիշ խնդիր կայ կըսէք և կուզէք այդ
նկատումով խնդիրը յուզել, այն ատեն հարկ
կըլլայ ուրիշ օրուան ձգել, որպէս զի բացա-
կայ երեսփոխանք ալ տեղեկանան, և այսպէս
Ժողովը խնդիրը սերտելով իմաստասիրելով և
վիճարանելով կարենայ բաւական նիստի մէջ
խնդրոյն լուծման հասնիլ :

Սրդ, կը հարցնեմ Ժողովին, միթէ սեր-
տել կուզէ՞ խնդիրը. եթէ ոչ իբր ատենական
գործողութիւն այժմէն կուզէ ելք մը տալ ա-
նոր :

Զայս ըսելով Ստենապետ փառան քուէի
դրաւ թէ Ժողովը խնդիրն իբր ատենական
գործողութիւն նկատելով կուզէ այժմէն լուծել
վերջացնել, թէ ոչ արժան կը դատի զայն սեր-
տելու և իմաստասիրելու համար ուրիշ նիստի
թողուլ :

Ժողովը միաձայնութեամբ ՈՐՈՇԵՑ խըն-
դիրն ուրիշ նիստի թողուլ, և անցաւ Օրա-
կարգին Բ. յօդուածին :

Տ. ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Առաջարկութեան Վարչութեան
Կնդրոնական Ստուկի հաստիքից մասին

Ստենապետ Փառան յիշեցնելով որ Ժո-
ղովն իր նախորդ նիստին Վարչութեան ե-
կած սոյն առաջարկութեան ստիպողութիւնն
ընդունելով որոշած էր Օրակարգն անցնել,
երեսփոխանաց գիտողութիւնն հրախրեց այս
մասին :

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Վարչութիւնն առաջարկութիւն մը կը բերէ, որ է արծաթ դրամով գանձել այսուհետեւ սնտուկին հասցիները: Արդէն բնականի դէմ էր այսպիսի առաջարկ մը: Վարչութիւնէն հոս գալը կարծեմ ամեն խոհուն անձ կրնայ վկայել որ թղթադրամն այսքան երեւելներու մէջ կը տարուբերի, և օրէ օր յարգը կը կորսնցնէ: Վարչութիւնը չէ կարող թղթադրամով վճարել պաշտօնէից թոշակն և գանձել գոհ ընել մանաւանդ երբ կգգանք թէ գործունեայ պաշտօնէից պէտք ունինք: Օրինաւոր չէ աշխատցընել պաշտօնեաներն և ըսել, կէս կուշտ կեցիր և հին լտիւր հագիր: Միւս կողմէ չենք կրնար ալ ըսել որ արծաթ դրամով ազգային տուրքերն ու հասոյթները գանձել ժողովրդեան համար ծանր է: Վստի զի չկայ արհեստաւոր մը որ իւր գործերն ողջ դրամով չտեսնէ: Սիսոյն տմասկանաւորներն են որ թղթադրամով կստանան իրենց թոշակն: Ուստի ես կառաջարկեմ որ Վարչութեան խնդիրն ընդունուի, ոչ միայն հասոյթներն արծաթ դրամով գանձելու, այլ և պաշտօնէից ամսաթոշակաց վճարումներն ալ արծաթ դրամով ընելու պայմանաւ:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Այս առթիւ ժողովն իր գործած մէկ սխալը պէտք է ուղղէ. մեք պիտո՞նք մ'ունինք, որ թղթադրամի վրայ շինուած է. սխալ է այս. հիմա քանի որ արծաթ դրամով հասոյթները գանձելու խնդիր կայ, պէտք է ըստ այնմ պիտո՞նք ալ փոխել և արծաթ դրամի վերածել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կարծեր որ այնպէս կարծէք թէ Ազգային ժողովը միշտ սխալ կը գործէ. Չեր պատուական եղբայրն ալ Պիւտճէի բնութեան միջոցին ներկայ ըլլալով այդ դիտողութիւնն ըրաւ. բայց քանի որ Տէրութիւնն իր պիւտճէն թղթադրամի վրայ հիմնած էր, թէպէտեւ ոսկիի հաշուով, մեք չենք կրնար ուրիշ կերպ վարուիլ:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Միթէ կը կարծէ՞ք որ տէրութիւնը թղթադրամն չըջարեալութեան

մէջ պահած ատենն իր Պիւտճէն թղթադրամի վրայ շինած էր. ոչ ոք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դա՛հալ էֆ. կարծէ թէ Տէրութիւնն իր պիւտճէն ոսկի վրայ կը դնէ. արդեօք կրնա՞յ մեզ տեղեկացունել թէ երբ տուրքերն թղթադրամով կը հաւաքէր և ուրիշներն ոսկեայ վերածելով պիւտճէին մէջ կանցունէր, քանի՞ թուղթը մէկ ոսկի կը հաշուէր, և թէ կարելի է որ այսպիսի պիւտճէի մը հիմնը սխալ չըլլայ: Ինչ որ Տէրութիւնն ըրած էր, նոյնն ըրինք մենք ալ. եթէ նա սխալ գործեց, մերն ալ սխալ էր. հիմա Տէրութիւնն ինք վերցուց թղթադրամի գործողութիւնը, մեք ալ կը վերցնենք, արդէն Վարչութիւնն սկսած է թղթադրամի տեղ մէծիտիւնով գանձել սնտուկին հասոյթները. ասի բնական է. ուրիշ կերպ չէր կրնար ընել. խնդիրն սկզբաւր ընդունելի է: Միայն կէտ մը կայ ուշադրութեան արժանի. Վարչութիւնն իր գործն մէջ խնդրոյն մանրամասնութիւնը չէ բացած. սրտիսմեք կամ մութ տեղեր կան, զորս պարզած չէ. միւս կողմէ անբաւական ալ է այսօր ժողովն այս խնդրոյն ելք մը տալու: Վարչութեան գործն մէջ պակաս կույ ըսածներէս մէկն է, մէծիտիւն 20 դրով գանձել կըսէ միայն, բայց ի՞նչ հաշուով, այսինքն թղթադրամով գանձուածին կէ՞սն կամ ո՞րչափը. նոյնպէս ծախարին վրայ ալ խօսք մը չկայ: Ուստի եթէ կուզէք յանձնենք Վարչութեան, պիւտճէն մէծիտիւն վրայ հիմնելով, ամբողջապէս նորէն շինէ և բերէ, մինչև առաջիկայ նիստ:

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Չեր վստահութիւնն յայտարարեց թէ արդէն Վարչութիւնն սկսած է ողջ դրամով գանձել հասոյթները փոխանակ թղթադրամի. ասկէց կը հետևի որ ծախարներն ալ նոյնպէս սխալ է ողջ դրամով կատարել և հարկաւ այնպէս պիտի ընէ մինչև որ ժողովս խնդիրն ամբողջապէս լուծէ:

Ըսել կուզեմ որ Վարչութեան պարտաւորութիւնն է պաշտօնէից ալ գոնէ թերհաշիւ արծաթ դրամ վճարել այժմէն:

ՋԱՅՆԵՐ. — Անշուշտ այնպէս պէտք է ըլլայ, ուրիշ կերպ չկրնար ըլլալ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը յիշեմ որ Պիւտճէի խնդրոյն նայուած օրը Դահլաղ էֆ. ըսաւ որ պիւտճէն թղթադրամի վրայ չըլլայ. ես ալ համաձայնեցայ իրեն այն օրը. բայց յարեցի թէ քանի որ թղթադրամը չըջարեալութեան մէջ է, առայժմ ուրիշ կերպ չկըրնար ըլլալ: Հիմա որովհետեւ թղթադրամը ընջուած է, գրեթէ Վարչութիւնը կրնայ և պէտք է առօրէական հասոյթներն, այսինքն անուղղակի տուրքերն արծաթ դրամով գանձել անմիջապէս. իսկ ուղղակի հասոյթն, այն է Ազգ. ընդհանուր տուրքը հիմակուրէն արծաթ դրամով գանձել ժողովրդեան համար ծանր է. ուստի պէտք է մինչև յառաջիկայ Մայիս մէկ պարտք ունեցող ազգայնոց ուղղակի տուրքը թղթադրամով գանձել, և մաշիս մէկէն սկսեալ արծաթ դրամի վերածել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում ժողովը մեծամասնութիւն չունի, և խնդիրն հիմնապէս լուծելու վիճակի մէջ պատրաստուած

չէ, պարտաւոր ենք թողուլ Վարչութեան որ իր իմաստութեամբն ու խոհմութեամբը կարգադրէ և տնօրինէ առժամապէս այս դրամական խնդիրը՝ մինչև որ ժողովս իր որոշումը տայ: Այսօրուան համար այսչափով բաւականանալով դոցենք այս խնդիրը: Ատեաննիսա ալ պէտք է փակենք. կը մնայ որոշել թէ յառաջիկայ նիստն ե՞րբ կուզէք գումարել:

Ըստ որում 15 օրէն տօն է Ս. Յարութեան, Դիւանը կառաջարկէ Զատիկէն ետքի թողուլ յաջորդ նիստը, և եթէ ժողովը կը հաճի, Նոր կիրակիէն ետքի ուրբաթ օրը կը գումարենք ժողովը:

Գիւանին սոյն յայտարարութիւնն ընդունուի ժողովէն, և ատեանը գոյուեցաւ ժամն 9ին:

Ատենադպիր	Ատենադատ
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ	Ս. ՋԱՅՆԵԱՆ

ման նախադատութիւնն եղեր է . բայց չինուածոց տեսուչ Յանձնախմբի անդամոց մէջ անհամաձայնութիւն ծագելով ամենայն ինչ յետ մնացեր է . և ըստ որում Ազգային Ժողովարանի մը համար Ղալաթիոյ դիրքէն յարմար տեղ չկրնար գտնուիլ :

Կառաջարկենք որ Ժողովդ յանձնարարէ Կեդր. Վարչութեան միանգամայն Ղալաթիոյ Թաղ. խորհրդին սոյն խնդիրը ուշադրութեւն չվերաբերելու և առանց կեդրոնական անու. կին վրայ ծանրանալու Ժողովարան մը կա. ուստիանելու պատեհ առիթ տեսած ատեննին ծրարիրը Ժողովիս մատուցանել :

3. Քննարկեմ ազգային նախընթաց անցից (6 առաջարկութեանց Իրէքճեան էֆէնտիի) որ են

1. Հրաժարեալ (1873 տարւոյ) Քաղա. քանիս ժողովի մէկ նիստին Սամաթիացւոց և Մշեցւոց մէջ տեղի ունեցած կռուին պատ. ճառները և Քաղ. Ժողովոյ անդամոց ոմանց ղէմ եղած բռնարարութիւնքը :

2. Յիսուսեմէկ երեսփոխանոց դռնխակի առաջարկութեան նպատակը և անոր ազդեցիկ ներկայացման և գործադրութեան եղանակը :

3. Կէ. խախտեալ նիստի հակասական հրաւիրագիրը որ տեղի տուաւ Ժողովիդային յուզմանց :

4. Ընդհ. Ժողովոյ երկու Ատենապետաց հրաժարման պատճառներն , հրաժարում որ Ժողովիս չէ ներկայացած օրինաւոր եղանակաւ :

5. Խորմեան Հայրիկի հրաժարման պատ. ճառներն որ նոյնպէս Ժողովիս չէ ներկայա. ցած :

6. Արաժաման հրաժարեալ Քաղ. Ժո. ղովոյ անդամոց Խորմեան Հայրիկի ղէմ ըրած ապաժաման ամբաստանութիւնքը :

Ժողովդ այս բնութեան համար 17 յուն. վար 75 Ժ. Ե. նիստի մէջ Յանձնախմբ մը ընտրեր է սա՛ անձերէ .

- Յակոբ Կոստանդ
- Ստիմարանեան Գէորգ
- Սերովբեան Կարապետ Խոսկ.
- Միքայէլեան Սիմոն
- Էսայեան Մկրտիչ
- Տ. Սուրիսա քահանայ

Բայց Յանձնախմբը մինչև ցայսօր պա. տասխան տուած չէ և տալիս ալ չունի , դի. ցրուած է և անդամոց մին վախճանած և միւս մը հրաժարած է :

Ըստ մեր կարծեաց այս տեսակ բնու. թիւներն դժուար և փափուկ ըլլալէն զատ , քանի բնեկի անցից տէր անձինքը կենդանի և կանգուն կան ազգային առօրինակի մէջ , յաւարտ բնութեան վճիռ արձակելն դժու. րագոյն և փափկագոյն ըլլալով , խոհեմութիւն է բնաւ չձեռնարկել և եթէ խափանեալ է , կրկին չարժարծել :

Ուստի կառաջարկենք խնդիրը մեր տուժարէն ջնջել և թողուլ արտոմութեան որ անձերն անհետանալէն ետեւ անցքերուն վրայ իր դատաստանն ընէ ազատօրէն և վճի. ուն արձակէ արդարութեամբ :



Բ.

ԾՆԱՅՈՐԴ ԽՆԴԻՐՔ 1875 ԱՄԻ

1. Պատրիարքիս Խառն Ժողովոյ .

Վանականաց անձնական գոյից յետ մահուան Վանքին ժառանգութիւնն մնալու նկատմամբ Սահմանադրական օրէնք մը հաստատելու խըն. դիր .

Սոյն խնդրոյ վրայ Կալուածոց և Նախա. ձեռնութեան դիւանները առաջարկեր են Սահ. մանադրութեան մէջ յօդուած մը յաւելուլ

Խառն Ժողովոյ առաջարկած տրամադրու. թեալի և Ժողովդ Սահմանադրութեան վե. բնութեան ժամանակ զայն նկատողութեան տունուլ որոշեր է :

Ըսել է որ խնդիրը իբրեւ առանձին խըն. դիր վերջացած է և վերաբնութեան խընդ. րոյն հետ կրնայ իր վերջնական լուծումն առ. նալ . ուստի այժմէն ջնջելի է խնդրոց տու. մարէն :

2. Հարցում Ալիքսանեան Բ. էֆէնտիի սա Քաղաքական Ժողով .

Ալիքսանեան էֆէնտի սոյն հարցման առթիւ կը ծանուցանէ Ժողովիս թէ Վար. չաթիւնը գործադրէր Ազգային Ժողովին հաստատած նոյն օրէնքը որ կը տրամադրէ թէ « արտոմութիւն ազգայինք տարեկան աւարքէնին ընտանեօր բնակութիւն հաստա. տած տեղւոցն ազգային անտուկին վճարելու պարտաւոր են » , այլ չին սովորութեան համե. մատ կը վարուի , և կը յաւելու խնդիր յու. զիլ թէ արդեօք Ժողովին ո՛րեւ մէկ որո. շումը Վարչութեան կողմէն գործադրելի ըլ. լալու համար կրկին որոշման կը կարօտի՞ թէ անմիջապէս գործադրելի է :

Քաղաքական Ժողովն սոյն հարցման 2 1/2 ումիս ետքը պատասխաներ է գրով թէ « սոյն հարցումն նկատողութեան տաւ է , բայց սա. այժմ մասնաւորապէս պատասխանելը պատե. հութիւն չ'համարելով , արժան կը դատէ անոր նկատմամբ այէտք եղած տեղեկութիւնը լիովին տալ իր համարատուութեան ժամանակ » :

Զգիտենք Վարչութիւնն ի՞նչ պատճառաւ անպատեհ դատած է այն միջոցին Ալիքսան. եան էֆէնտիի ուղղակի պատասխանել , և խոս. տալեալ համարատուութեան տեսարը չտեսած չ'ենք կրնար կարծիք յայտնել Վարչութեան յայտնած սոյն անպատեհութեան , և կամ Ազգ. Ժողովս օրէնադրած տրամադրութիւնը գործադրած ըլլալուն և կամ եթէ չէ գոր. ծադրեր , ունեցած արգելքներուն նկատմամբ .

բայց սա՛ պայք է որ այս հարցումն մշտնջե. նապէս անպատասխանի թողուլ խոհեմութիւն չէ , վասն զի սկզբան մը կը պատկանի որ Սահ. մանադրական Վարչութեան հիմն է :

Ուստի կառաջարկենք ի պատասխանի Ալիքսանեան հարցման հանդիսապէս յայ. տարարել թէ « Ազգ. Ժողովոյ ո՛ր և է որոշումը Վարչութեան համար անմիջապէս գործադրելի է , հարկ չ'կայ կրկին ո. թոշման » բաւական է որ որոշումը Կանոնա. դրութեան 73 րէ. յօդուածին համեմատ հա. ղորդուած ըլլայ անոր ի գործադրութիւն :

Սոյն յայտարարութեւնէ ետեւ Ալիքսան. եան էֆէնտի ազատ է սահաստանութեան են. թարկել այն ժամանակի Վարչութիւնը եթէ համոզուած է որ սա՛ անաստեղծ է Ազգային Ժողովին օրէնադրական հրամանին , Ժողովն կրնայ այն ժամանակ դրողիլ այն խնդրով . առ այժմ՝ ուրիշ տնօրէնութիւն չ'կրնար ընել սահմանադրապէս :

3. Պատրիարքիս Քախմաճեան էֆէնտիի, Երեսփոխանական ընտրութեանց հսկող Գործա. դիր Յանձնախմբին որ Վարչութեան ընտրեալ է , Ազգային Ժողովով ընտրութիւնը կատարելու նկատմամբ .

Այս առաջարկութիւնը որ Օգոստոս 1 1875 Ը. նիստին մէջ Նախաձեռնութեան դի.ւանի յանձնուեր է ի բնութիւն , հետեւեալ տա. րին Մարտ 12, ԻԱ. ԸԳ. նիստին մէջ նոյն Գի.ւանի մէկ տեղեկագրին վրայ Սահմանադրու. թեան վերաբնութեան ժամանակ Վարչա. կան կադմակերպութեան որոշուելու միջոցին նկատողութեան տունուելու պայմանաւ օրս. ձգուեր է :

Ըստ մեզ՝ այս խնդիրը բնական ուրե՛նջու. թիւն չ'ունի Վարչութեան կադմակերպին հետ , զի Սահմանադրութիւնը և մեր Կանոնա. դրութիւնը բացորոշ տրամադրած են , թէ « Պատրիարքը կը հրամայէ ընտրութեանց կա. »

տարուժը ընտրող թաղերուն կամ դաւառնե-
րուն, Քաղաքական Ժողովը կ'ստուգէ ընտ-
րելոյ արայմանեալ հանգամանքը և Ազգ. Ժո-
ղովն կը քննէ ընտրութեան օրինաւորութիւնը
և կամ կը վաւերացունէ զանոնք»

Ասի ուղիղ բանն ալ կը հաստատէ և սահ-
մանադրական ամեն ազգայն օրինակն ալ. ուստի
հարկ չկայ Քաղաքական և առաջարկութեան
համար Արշալոյսեան կերպարանաւորութեան
սպասել, զի ինչ որ ալ ըլլայ Արշալոյսեան
ձեռք, Երեսփոխանական ընտրութիւնը ազատ
են անոր ազգայնութենէն և այնպէս պէտք է
մնան միշտ. և եթէ ժամանակաւ գործադիր
յանձնախումբ մը սահմանուեր է նորահաստատ
Սահմանադրութեան գործադրութեան նախա-
գահելու պաշտօնով, անի չէ՛ թէ Արշալո-
յսեան այլ նոյն իսկ Ազգ. Ժողովոյ կողմէն
ընտրուեր է և 63 ին իր պաշտօնը կատարե-
լով լուծուեր է. անիկ ետքը չենք կրնար ըմ-
բռնել թէ ի՞նչ պատճառաւ կրկին հաստա-
տուեր և մինչև չորս տարի առաջ պաշտօնը
չարունակելով թէ և անձերը փոփոխելով սահ-
մանադրական ընտրութեան անօրէնութիւնն
և միանգամայն քննութիւնն ըրեր է. Բայց սա
ստույգ է որ Գիւտնիս նախանձախնդրութեամբ
այս զեղծումը Ազգ. Ժողովոյ վճռով վերցաւ
Ազգիս մէջէն և չորս տարիէ հետէ Երեսփո-
խանական ընտրութիւնը Սահմանադրութեան
արդար սահմանին մէջ կը անօրինուին և Գոր-
ծադիր Յանձնաժողովոյ տեղի մնացած չէ:

Ուստի Քաղաքական և առաջարկութիւնը
սղլէս յետաձգելու պատճառ չկենարով կ'առա-
ջարկենք վճռել թէ «Երեսփոխանական ընտ-
րութեան համար սրեւէ կողմէ Գործադիր
Յանձնաժողովոյ հաստատութեան պէտք չ'կայ»:

4. Առաջարկութիւն Ս. Պատրիարքի և Ե-
րեսփոխանաց ունեց' հետգնտէ երեք անգամ
բացակայութեան պատճառաւ հրաժարման խնդ-
րոյն վրայ:

Սրբաւան Պատրիարքը չաւ ծանր
կը գտնէ «երեք անգամ յաջորդաբար

բացակայ գտնուող Երեսփոխանաց հրաժար-
եալ համարութեան կանոնը և անոր բարեփոխ-
ութիւնը կ'առաջարկէ»:

Այս խնդրոյն վրայ Ազգ. Ժողովն իր
Նախնականութեան գիւտնէն և վերջը մաս-
նաւոր Յանձնախումբէ մը տեղեկագիր խնդրած
է, բայց չէ յաջողած ընդունիլ:

Սրբաւան մեր Կանոնադրին այն տրամադ-
րութիւնը որ «երեք անգամ յաջորդաբար և
առանց օրինաւոր պատճառի բացակայ գտնը-
ւող Երեսփոխաններն իր պարտազանց հրա-
ժարեալ հռչակել կը հրամայէ յատենի Ժո-
ղովոյ և իւր ընտրաւացոյ, խիստ է բոյց ար-
դար. զի Երեսփոխանք ընտրուած ժամանակ
նին ազատ են յանձն առնուլ կամ ոչ իրենց
պաշտօնը և ի վերջոյ միշտ ազատ հրաժարմանը
քաջուելու Ժողովին. ուստի արժան է որ հա-
տուցում ըլլայ այն երեսփոխանին, որ ընտ-
րուած ժամանակ յանձնառագիր տալով Ազգ-
Ժողովիս յանդամակցութիւն ընդունելու փա-
փաք կը յայտնէ բայց ո՛չ կանոնաւոր յարա-
տեւութեամբ յանձն առած պաշտօնը կը կատա-
րէ և ո՛չ երբ քաջուիլ պարտաւորի, Ժողովիս
արժանապատուութիւնն յարգելով երկտող
հրաժարագիր կուղղէ անոր. այսպիսեանց այս
ընթացքն ընդունիլ և արարտազանց տխուր
չզրոյշմել ճակատին՝ պարտքերնին անձնուի-
րաբար կատարող երեսփոխանաց յարգանաց
դէմ մեղանշել է:

Ուստի կ'առաջարկենք որ կանոնին այս
տրամադրութիւնը անեղծ պահուի և ճշդիւ
և խստիւ ի գործ դրուի, սա՛ բարեփո-
խութեամբ միայն որ մերժման տրարողու-
թիւնը փոխանակ երրորդ բացակայութեան՝
չորրորդին կատարուի, և սոյն նշտին հրաւի-
րագրով խոյ տրուի բացակայից որ եթէ այս
չորրորդ անգամ չ'ներկայանան, կանոնական
տնօրէնութիւն պիտի ըլլայ իրենց համար:

5. Հարցում վարչութեան խառն Ժողովոյ:

Խառն Ժողովը նկատելով որ Ազգային
Ժողովին կանոնադրին Ժողովոյ մեծամասնու-

թեան և որոշող ձայնից մօտին Սահմանա-
դրութեան 40 և 86 և 88 յօդուածներէն տար-
բեր տրամադրութիւններ սահմանել է, և Ազգ-
Ժողովն ըստ այնց կը վարուի, փափաք կը
յայտնէ գիտնալ թէ վարչութիւնն ալ իւր բո-
վանդակ ճիշդերով նոյն տրամադրութեան հա-
մեմատ պէ՛տք է վարուի:

Սոյն հարցման պատասխանի վրայ Ազգ-
Ժողովոյ մէջ փոքրիկ վիճարանութիւն մ'ըլ-
լալով թէ և այո՛ և ո՛չ կարծեաց համամիտներ
գտնուեր են, սակայն խնդիրն կանխաւ իմաս-
տասիրելու համար նախնականութեան Գիւտ-
նին յանձնուեր է որ չէ՛ աշխատասիրեր:

Սակայն այս հարցումն անպատասխանի
չ'կրնար մնալ և պէտք չէ որ մնայ: Զեր Գի-
ւանը կը կարծէ որ Ազգ. Ժողովոյ Կանոնա-
դրութիւնը մասնաւոր Ազգ. Ժողովոյ համար
յօրինուած է և նպատակ ունի անոր օրէնք-
դրական և համարաութեան պաշտօնին կա-
տարումը խորհրդարանական ձեւի վերածել:
Ազգ. Ժողովն ընդունած է սոյն կանոնա-
դրութիւնը. զի ժամանակին յատաճողմական
բերմունքը, Խորհրդարանական վարչութեան
առաւելութիւնները և իմասնութիւն անվարձ
և անվարձատրելի վարչական ժողովականաց
պաշտօնավարութեան վրայ համապարզօրէն
հսկողութեան պէտքը պարտաւորած են զինքն
ընդգրկել և ընդունիլ Սահմանադրութեան տը-
րամադրութեանց մէջ սոյն տեսած բարեփո-
խութիւններս Բայց վարչութիւնն իր ամբողջ
ճիշդերով կարօտութիւն չ'ունի այսպիսի կա-
նոնագրի մը դիմելու. զի անոր Ժողովներուն,
Խորհուրդներուն և Հոգաբարձութիւններուն
անդամները սակաւաթիւ են և օրինաւոր մեծա-
մասնութիւն գտնելու այնքան դժուարութիւն
չ'են կրեր:

Ուստի պէտք է շարունակեն Սահմա-
դրութեան տրամադրութեանց համեմատ փա-
րել իրենց պաշտօնը և եթէ որեւէ դժուարու-
թեանց պատահին և անկարելի ըլլայ սահմա-
նադրական կանոններով անոնց յաղթահարել,
կրնան զայն դժուարութիւններն առաջի առ-
նել Ժողովիս և դարմանին վրայ իրենց կար-

ծիրն յաւելով Ազգային Ժողովոյ վճռական
որոշման սպասել:

6. Բարձրագիւր Երեսփոխանաց ունեց Եր-
զրնկայի առաջնորդին դէմ:

Չորս երեսփոխանք կը բողոքեն վարչու-
թեան խառն Ժողովին դէմ որ Ալեքսանդր
Գրիգորիս վարդապետին, նախորդ խառն
Ժողովոյ վճռոյն հակառակ պայմանեալ ժամա-
նակը չըրացած առաջնորդական պաշտօն և
այն ալ Երզնկայի վիճակին վերայ յանձնելէն
զատ՝ առանց ուշ դնելու եպիսկոպոսական ըն-
ծոյցացունելու համար Կրօնական Ժողովոյ սահ-
մանած կանոնին՝ եպիսկոպոսութեան արժա-
նաւորութեան վկայագիր տուած է եղեր:
Սոյն բողոքագիրն յղուեր է վարչութեան որ
պէս զի բացատրութիւն տայ բայց անպատաս-
խանի մնացեր է: Երկու ամիս ետքը բողոք և
յղում կրկնուեր են, և դարձեալ առանց
պատասխանի մնացեր են:

Թէպէտ և չգիտենք ճշդիւ թէ Կրօնական
Ժողովն ինչ կանոն սահմանած է եպիսկոպո-
սութեան ընծայելոյ համար. զի այդպիսի
կանոն մը մինչև ցայժմ չէ՛ ներկայուած Ազ-
գային Ժողովիս, սակայն չէ կարելի մտածել
որ Կրօն. Ժողովն այս նիւթին մէջ ինչպէս
նաե իր ձեռնհասութեան շրջանակին մէջ յա-
մենայնի, Ազգային եկեղեցւոյ հաւանդ կա-
նոնէն դուրս որ և է կարգ կանոն սահմանած
ըլլայ. հետեւապէս եպիսկոպոսութեան ընծա-
յացունելու համար փոխանակ նոր սահման-
ուած կանոնին դորձադրութեան նախանձա-
խնդիր ըլլալու, զոր չենք գիտեր, Հայրապե-
տաց աւանդական կանոններուն հետեւելու
յորդոր պէտք է կարգանք մեր Կրօնական Ժո-
ղովին եթէ երբէք պէտք կայ ոյսպիսի յոր-
դորանաց՝ զոր չենք կարծեր:

Գալով Ալեքսանդր Գրիգորիս վարդա-
պետին եպիսկոպոսութեան խնդրոյն՝ շատ հա-
ւանական է որ ինչպէս բողոքարկու երեսփո-
խանք ալ կը կասկածին, Կրօն. Ժողովն
յիշեալ վարդապետին զղումը ընդունելով
ներումն չնորհել պատշաճ տեսած ըլլայ որ Ժո-
ղովին իրաւունքն է, և խառն Ժողովն Եր-

ղընկացուց ընտրութեամբ և խնդրանքով իրենց առաջնորդն իրենց վերադարձունելու զիջում ըրած և ի վերջոյ նաև Մշոյ առաջնորդութեան կողմած ժամանակ Եպիսկոպոսութեան վկայական տալու շնորհ ըրած ըլլայ:

Չգիտենք ինչ աստիճան արդարանալի է Խառն Ժողովոյ այս տնօրէնութիւնն առաջի արդարութեան, սակայն համաձայն կերելի մեզ սահմանադրական տրամադրութեանց. և ըստ որում Ալեքսանդրական վարդապետ արդէն եպիսկոպոսական աստիճանի բարձրացած է, նկատելով միանգամայն որ Մշոյ առաջնորդութեան ընտրուելէն հետէ Ալեքսանդրական բաղան աղգասիրական եռանդով ժողովրդի զաստիարակութեան, և զարգացման ջանք և խնամք կը տածէ և վիճակայինք իրմէն գոհ, ինքն թերեւս յուսահատ ի յաջողութենէ քանիցս հրաժարական կուտոց յառաջնորդութենէ:

Կառավարիչներ որ Աղթային Ժողովն այս խնդրոյն այլևս յուզման տեղի չտալով, վերջացեալ հրատարակէ իր բռնեով:

7. Աղթայի պանդուխտ Տիմրիկացոց.

Տիմրիկացի տաւջին տնգամ բողոք կը բառնան Արշալոյսեան դէմ իրր թէ իրենց երկու խնդրոց մէջ արդարութեան պաշտարան կանգնած չ'ըլլայ. Աղթ. Ժողովն յղեր է դայս բողոքագիր առ Արշալոյսեան ի տեղեկագրութիւն: Ամիս մը ետքը բողոքարկութեան կը կրկնեն բողոքներն, յաւելլով թէ երկու խնդրոց մին վտանգի հանգիստելու վրայ է, ուստի անմիջական տարահամարութիւն կը խնդրեն: Այս անգամ Ժողովս յանձնարարեր է Արշալոյսեան պէտք եղած տնօրէնութիւնը և տեղեկագրութիւնն ընել անմիջապէս, որ վերջապէս 1878 Յունիս 9 մեր Բ. նիստին Տեղեկագրով մը ծանուցած է թէ Տիմրիկացոց երկու խնդիրներէն առաջինը՝ որ հաշուական է՝ վերջացած պէտք է նկատուի, զի վագֆի հաշիւներն պաշտօնական քննութեամբ գոհացուցիչ գտնուեր են: Իսկ երկրորդը՝ որ յիշեալ վագֆայ սեպհականութեան կը վերաբերի, Տիմ-

րիկացոց կտակային իրաւունքը և քախանահարհետաւորաց հէօճէքի շէրիի իրաւունքը՝ միանգամայն Աղթ. Արշալոյսեան աղգային բողոք կալուածական սեպհականութեանց վրայ հակելու արտօնութիւնը ապահովելու սրայմանաւ տնօրէնութեան է, բայց Տիմրիկացի գոհ չեն եղեր սոյն տնօրէնութենէն:

Այս տեղեկագիրը Կալուածոց Դիւանի նախարանութեան յանձնուեր է, բայց ի վերջոյ Ըստ որում Տիմրիկացոց կողմէն կրկին բողոք ներկայուած չէ Ժողովիս և Արշալոյսեան տնօրէնութիւնը արդարեւ իմաստուն կերելի, և անոր հետեանաց պատասխանատուութիւնը բնականաբար իր վրայ կը մնայ: Տիմրիկացոց խնդիրը մեզ համար վերջացեալ կը նկատուի և չունի այլևս իրաւունք մեր Խընդրոց կարգին մէջ յարողել մնալու:

8. Առաջարկութիւն Խրիստեան Կ. Լիւնտի.

Իւթիւնեան Կ. Էֆէնտի կ'առաջարկէ որ Ժողովիս նախաքննիչ Դիւանաց թիւն 8էն 5 ի իջնէ. մեր նախաքննիչ Դիւանը սոյն առաջարկութիւնն իրրե սկիզբն ընդունելով 5 ի փոխանակ, 6 ի անփոխել պատշաճ կը տեսնէ Դիւանաց թիւը: Ժողովս դեռ որոշում ըրած չէ ասոր վրայ:

Մեր կը կարծեմք որ Կանոնադրութեան մէջ միայն այս կէտը չէ բարեփոխելու ենթակայ, կան ուրիշ տրամադրութիւններ ալ որ եթէ լեզուին հետ մէկտեղ փոփոխուելու ըլլան, Կանոնադրութիւնը դիւրամբունելի և աւելի դործնական կընեն. բայց լուծուենալով լուազունին հետամտելու դեռ ժամանակն եկած չէ՝ մեզի համար. առ ոյժմ եղածով կրնանք կառավարել և քանի որ Համարառութեան և Ելեմտական տնօրէնութեանց մասին պարտքերն իսկ կատարելու կը տկարանանք, չէ՛ ներքի օրէնադրական մասին մեզ նախանձխնդրութիւն ընել:

9. Առաջարկութիւն Բրիտանական Լիւնտի.

Բրիտանական Լիւնտի կ'առաջարկէ Կանոնա-

դրութեան Ե. գլուխ 47 յօդուածին 2. հատուածին վրայ յաւելուլ ստակա փակ երր Վարչութեան անդամաց փորրադոյն մասը հրաժարած կըլլայ, մնացեալ մեծամասնութիւնը Պատրիարքին հետ խորհրդակցութեամբ կ'ապարաստէ այդ ընտրելաց ցանկը: Մեր նախաքննիչ Դիւանը պատճառելով թէ արդէն Ժողովս այդ քննիչներ ընդունած է նմանօրինակ պարագայից մէջ, կ'առաջարկէ ընդունիլ Բրիտանական Լիւնտի կանոնական յաւելուածը:

Իսկ մենք կը կարծեմք թէ լուազոյն է ընտրելաց ցուցակի պատրաստութիւնը միշտ Ատենապետաց Դիւանին թողուլ, զի ընտրութիւնը զեղչելի ցուցակի վրայ կըլլայ և ոչ արագբերի և Դիւանը երր հարկ տեսնէ կրնայ Վարչութեան մնացեալ անդամոց կարծիքն ստանալ, իր նախագահ Պատրիարքին ձեռք որ Վարչական Ժողովոյ ալ նախագահ է և այս կերպով Աղթային Ժողովոյ ընդամակ իրաւունքն անվթար և ապահով կ'մնայ. զի զեղչելի ցանկի պատրաստութիւնը հիմն է ընտրական իրաւանց:

Հետեւաբար կ'առաջարկենք որ Բրիտանական Լիւնտի առաջարկութիւնն չէ՛ թէ մնայ օրոճեալ մինչև ի վերաքննութիւն կանոնադրին, այլ պարզապէս մերժուի իբր սեղմիչ Ժողովոյ ընտրական իրաւատութեան:

Գ.

ՄԱՅՈՐԻ ԽՆԴԻՐՔ 1876 ԱՄԻ

1. Առաջարկութիւն Կանոնադրութեան Ս. Փաշայի վրան համարառութեան.

Ստեփան փաշա Ասլանեան տեսնելով որ 1871 թուականէն հետէ Վարչական Համարառութիւն չէ կատարուած Ժողովով, վստահի համարառութեան տեղեկագրերէն մի քանիսն դեռ տարագրութեամբ ի լոյս չեն ելեր,

և հրատարակեալներուն փոյց Նախաքննիչ Դիւաններն աշխատութիւն չեն ըրեր, առաջարկեր է Ժողովիս ինիստ Ա. 7 Մայիս 1876 և Ժողովս ընդունել է մասնաւոր Յանձնախումբ մը ընտրել և անոր յանձնել մինչև այն ժամանակ եկած Համարառութեան Տեղեկագրերէն նախաքննական կերպով քաղել վարչական ամբողջ համարը և Ժողովիս ներկայել տեղեկագրութեամբ:

Սոյն ընտրութիւնն 21 Մայիս Բ. նիստին մէջ կատարուելով, հետեւալ 7 անձիւք անդամ որոշուեր են Յանձնախումբին.

Եղիկ վարդապետ

Սարգիս Էֆ. Աղաբէկեան

Յակոբ Պ. Քաղազեան

Կարապետ Շահապեան

Աւետիս Քօրջեան

Ռուբէն Կիւմիւշկէրտեան

Յովսէփ Մաղլըմեան:

Եւ թէպէտ քանիցս հրաւիրուեր են սորա փողով կազմել և աշխատութեան ձեռնարկել, բայց չեն յաջողեր մէկտեղ դումարուիլ. ուստի յանուն Ժողովոյ կատարուելիք համարառութեան գործը անկատար մնացեր է. և ըստ որում նոյն թուականէն մինչև ցայժմ նոր համարառութեան երկտարեկտն չըջան մ'ալ աւելցած է, ըսել կրկնայ որ 70էն սկսեալ 5 երկտարեկտն համարառութիւն կան անքննիչ որոց մէկ երկուքը դեռ անձին և ոչ իսկ ներկայուած են Դիւանիս. ի հարկէ Աղթ. Ժողովոյս պարտքն է այս վերջին պահանքը լրացունել տալ և Սահմանադրութեան հաստատած երկտարեկտն և Կանոնադրութեան ամեն տարուան իջեցուցած համարառութեան պաշտօնը կատարել. բայց

Ըստ որում Սահմանադրութեան հաստատութենէ ի վեր 19 տարի անցած և 9-10 վարչութիւն իրարու յաջորդած է. սակայն և ոչ մէկ անգամ համարառութիւն կատարել հար եղած է Ժողովիս.

Ըստ որում գէթ 1870 տարիէն ի վեր տարեկան համարառութիւն կատարելու համար եղած մասնաւոր ջանքերն դարձեալ աղարդիւն մնացած են.

Ըստ որում Վարչական Ժողովականը ի բրանալ իրենց պաշտօնական շրջանին, յառաջ նաև նախ քան զլրուծման ժամանակին, կ'առաջարկեն ձգել երթալ Պատրիարքարանէն եւ մեծ մասամբ անհոգ կը մնան գէթ պատմութեան առջին ինքզինք արդարացունելու համար համարատուութեան օրինաւոր տետր հրատարակել, կամ եթէ հրատարակել կամք չեն, կը ձգեն այս իշխանութիւնն Ռիւանատան պաշտօնակալաց որ տեսակ մը ցանկ ժողովոց նիստերու և որոշմանց խմբագրելով կը կարծեն համարատուութեան տեղեկագիր ներկայացունել :

Ըստ որում այն հրատարակութեանց քննութիւնը երկար, դժուար և փափակ գործ մ'ըլլալով, զայն ըստ օրինի կատարելու համար ոչ մեր նախաքննիչ Ռիւանսերուն և ոչ իսկ մասնաւոր սահմանաւած յանձնարարներու քով յօժարամիտ կամք և սլարտաւորութիւն կատարելու նախանձ կը տեսնուի :

Ըստ որում 1874էն ի վեր Կանոնադրութեան հաստատութեամբ Ազգ. Ժողովոյ խորհրդարանական ձև և Երեսօխոսանաց հրապարակական հարցման և հարցապնդման իրաւունք տրուած է, որով կրնան կարևոր խնդրոց յուշման կամ գործոց պատահման միջոցին Վարչութեան պաշտօնեացնէն յատենի Ժողովոյ տեղեկութիւն առնելով գոհանալութեան կամ դժգոհութեան արտայայտութեան տեղի առալ, և ըստ որում անցեալ շրջանի մը մէջ պատահած գործողութեանց կամ խնդրոց նկատմամբ Երեսօխոսանք միշտ իրաւունք ունին Վարչական արձանագրութեանց դիմել և քննութիւն և քննութիւն ընելով ճշմարտութեան վերահասու ըլլալու, որով եթէ կամք չեն, հարցում ուղղելով ու և է գործոց վրայ համարատուութիւն կատարելու :

Հետեւաբար կ'առաջարկենք որ յայտնէ տէ՛ ամեն տարեգլուխ Վարչութիւնն փոխաւոր համարատուութեան Տեղեկագրի, մասնաւոր տետր մի հրատարակէ սպիտակ թղթաւ կաղմ և անով ի լոյս ընծայէ հանրական խնդրոց կամ նշանաւոր գործոց նկատմամբ

բրած պաշտօնական թղթակցութիւնը և ընդունած Կանոնաւոր, Հրամանագիր, Տեղեկագիր կամ Հանրագիր և այլ կարևոր գրութիւնք, հարկաւ անտէր միայն որ կրնան անմիջապէս ելնել ի հրատարակ հանդերձ հակիրճ նկարագրութեամբ առարկոյ եղող նիւթոյ :

Իսկ անցեալին համար կ'առաջարկենք յանձնարարել Վարչութեան որ ի հաստատութենէ Սահմանադրութեան մինչև 1870 Մայիսի սկիզբն կատարուած Վարչական գործողութեանց և ընթացից վրայ Ռիւանատան պաշտօնէից աշխատասիրութեամբ հաւաքածոց պատմութիւն մը խմբագրել և տպագրել տալ, և յիշեալ թուականէն մինչև 1879 Մայիս 1 չհրատարակուած Համարատուութեանց տետրակներն հրատարակել, որպէս զի իւրաքանչիւր երեսօխոսան զանոնք առանձին խմբագրութեամբ հարցում կամ հարցապնդում ընէ հարկ տեսած կէտերուն վրայ պատշաճ դատած ժամանակ, և Ժողովն առիթ տնեկաց քննադատութեան և քննարկութեան, և գէթ անուղղակի կերպով իր համարատուութեան սրտն տօնին կատարման :

2. Առաջարկութիւն Ատենայեւ Ս. Փաշայի վրան Կնդրական Վարչութեան պիւտձէի :

Ատենայեւ Փաշա տեսնելով որ Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր բնաւ մէկ տարի կանոնաւոր Հաշուեկշիռ չէ կրցած սահմանուիլ, զի կամ Վարչութիւնը դանդաղեր չէ բերեր և կամ շատ ուշ բերեր է, և կամ Ազգ. Ժողովն չէ քննել կամ չէ կըրցեր աւարտել քննութիւնը, յետ բազում անգամ յորդոր կարգալոյ առ Վարչութիւն և առ Ազգ. Ժողով՝ 1876 Մայիս 7 Ա. նիստի մէջ առաջարկել է գէթ մասնաւոր յանձնարարի մը ձեռք Խորհրդարանական ձեռնարկութեամբ պիւտձէ մը ծրագրել 1876—77 տարւոյ համար և Վարչութեան որ նոյն տարին նորագուէն վրայ է եղեր, կարծիքն առնելով յատենի Ազգ. Ժողովոյ վաւերացունել և առաջ նմա ի գործադրութիւն, ըսցաւ Ժողովն

չէ ուզեր չեղիլ սահմանադրական ուղիղ ընթացիկ և սրբեր է նորընտիր Վարչութեանն տանել ծրագիր պիւտձէի և Համարատուութեան Ռիւանսին յանձնել ի նախաքննութիւն 1876, Մայիս 21 ի նիստ Բ. բաց նորընտիր Վարչութիւնն թէպէտ և ի նախաքննութիւնն ձէլ մը ծրագիր ժառանգել է նոյն տարւոյ համար, և անշուշտ ինքն ալ աշխատասիրել է անոր վրայ, բայց չենք գիտեր ինչ պատճառաւ չկրնալով յաջողիլ, ուր ուրեմն հետեւեալ տարւոյ Մարտ 11ին ի վերջին նիստ նոյն տարեկան չընտնի պիւտձէ մը ներկայել է Ժողովն ոչ իբր Հաշուեկշիռ առաջիկայ 77—78 տարւոյ, այլ առժամեայ Հաշուեկշիռ 76—77 տարւոյ մերձ ի վախճան (40 օր մնացած) :

Ժողովն կանոնական արարողութեամբ այս Հաշուեկշիռը զրկել է ի նախաքննութիւն իւր Համարատուութեան Ռիւանսին, ցաւ յայտնելով որ շատ ուշ գալով իր կարեւորութիւնը կորուսած է և յոյս տածելով որ առաջիկայ տարւոյ Հաշուեկշիռն ժամանակին իր քննութեանը պիտի ներկայանայ, բայց այս յոյսն ալ ի դերն եկեր է, վասն զի դեռ մինչև ցայսօր և ոչ մէկ տարւոյ պիւտձէ քննուած և վաւերացած է Ազգիս մէջ :

Եւ ըստ որում տետրոց է 78—79 տարւոյ մէջ 76—77ի պիւտձէի խնդիր յուշել, կառաջարկենք այս խնդիրն ալ սրբել մեր տունմարէն :

3. Վերաքննութիւն Սահմանադրութեան :

Այս խնդիրն որ շատ տարիներ զրազեցուցած է Ժողովն, սերտ առնչութիւն ունի այն առաջարկութեան հետ՝ զոր Ատենայեւ Ս. Փաշա ներկայած է ի նիստ Բ. 3 Յունիս 1877 և զոր Ժողովն խնդրոց կարգն անցուցած է Նախաձեռնութեան Ռիւանսի տեղեկագիրն առնելով ի նիստ Բ. 29 դեկտ. 1878 :

Ուստի կառաջարկենք օրաձգել մինչև

որ յիշեալ առաջարկութիւնն որոշման մը յանգի Զեր կողմէն :

4. Տեղեկագիր Իրաւաստութեան Ռիւանսի ի վերայ Գրատնտարանեայ հրատարակչի Այլատեսան :

Այս խնդիրն քանիցս անգամ Ժողովն մէջ յուշման և ջերմ վիճարանութեան տեղի տալէ և Իրաւաստութեան Ռիւանսի կրկին բռնութեանն անցնելէ ետեւ վերջապէս իբրեւ Ազգային եկեղեցւոյ բարձր պաշտօնակալաց ինչպէս նաև Ազգ. Ժողովոյ պատուոյ դէմ թշնամանաց վերաբերեալ դատ Վարչութեան յղուել է ի քննութիւն ի նիստ Բ. 4 Յունիս 1876, բայց մինչև ցայսօր տեղեկագիր մ'առնուած չէ :

Բայց ըստ որում Այլատեսան արդէն հանգուցեալ է, և ըստ որում այս դատն ալ զայն նախընթաց անցից քննութեան գործին յարակից է, գործ որ բանաւոր պատճառեւ թով սրամտութեան ձգել և հասարակաց դատաստանի յանձնել առաջարկած ենք, կառաջարկենք ի մասնաւորի այս խնդիրն ալ վերջապէս որոշել Ազգային Ժողովն համար :

5. Առաջարկութիւն Գրատնաձեռն Միւսու Էթիկանի՝ զատական օրինաց խմբագիր Խառն Ֆանձնաժողով մը կազմելու համար :

Այն առաջարկութիւնը բաւական ժամանակ Նախաքննութեան դիւանին քով մնալէ ետեւ, հուսկ ուրեմն 1877, Հոկտ. 28, Ժ. Բ. նիստին մէջ՝ Բարաքաշեան Նշան Էթիկանի Վարչութեան ճիւղերուն համար մասնաւոր կանոններ խմբագրելու առաջարկութեան հետ յարակիցելով Վարչութեան յղուել է Խառն Ֆանձնախմբի մը ձեռք ծրագիր մը պատրաստել և Ժողովն բերելու արդմանաւ, բայց ապարդիւն մնացած է այս յղումն ալ :

Յայտնի է որ Վարչութեան ճիւղերուն տրուելու հրահանգ կամ կանոնները անոնց

կազմակերպութեան վրայ ձեռնած պէտք է ըլլան . ուստի մինչև որ կազմութեան խնդիրը կտու որ նոյն է Սահմանադրութեան վերաբնութեան խնդիրը վճարար չորոշուի, Հրահանգի խնդրոյն մասնաւոր որոշում չկրնար տրուիլ . և թէպէտ Դատական օրէնքը միւս հրահանգաց ճշդիւ չի համեմատիր, կրնայ ստանձնին պատրաստուիլ : Բայց ըստ որում այսպիսի օրինադրի մը խմբագրութեան համար մեր եկեղեցական և քաղաքական ազգային հասանդ կանոնաց, սովորութեանց, միանգամայն և ընդհանուր իրաւաբանական սկզբունց և Տէրութեան օրինաց գիտակ, ձեռքն հաս և ազգանուէր անձինք պէտք են և ըստ որում արդի պարագայից մէջ դժուարին է այսպիսի գործը մը ձեռնարկել, կառաջարկենք որ խնդիրն պարզապէս յետաձգուի :

6. Առաջարկութիւն Գարաւաճեան Մ. Է. ֆէնտի Սահմանադրութեան 4-րդ յօդուածին ինչպէս նաև Պատրիարքական զիտոյն նմանօրինակ տակորդ և անպէս տրամադրութիւնները յատուակելու :

Նախաքննութեան յղուած է 1876 թ. 13. Ը. նիստ :

Սոյն խնդիրը վերաբնութեան խնդրոյն հետ ըծորդեալ ըլլալով, յետաձգել կ'առաջարկենք :

7. Առաջարկութիւն Ատենայետ Ս. Գրիգորի Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց և վարդապետաց ուր տեղուանք, ինչ պաշտօնով և ինչ բուով գտնուիլ հարկ ըրալուն վրայ Վարչութեան կանոնական ծրագիր մը խնդրելու նկատմամբ :

Ընդունուելու և յանձնուելու է Վարչութեան ի նիստ Գ. 4. յունիս 1876, բայց դեռ պատասխան չէ տալու :

Սոյն առաջարկութիւնը որ եթէ յաջողի

Վարչութիւնն, հանապազօրեայ տաղտուկէ ազատելու և մեզ Օրինաւոր Ժողովական և Առաջնորդ հասցունելու կրնայ ծառայել, կարժէ որ կրկին և մասնաւոր յանձնարարութեամբ յըզուի Վարչութեան :

8. Բողոք 5 Երեւոյնականաց 1876 յունիս 30 ժ. Ը, նիստի մէջ կատարուած Քուէարկութեան դէմ :

Այս քուէարկութիւնը Սահմանադրական վերաբնութեան առթիւ Վարչական կազմակերպին ձեռն որոշելու համար կատարուած է զանազան առաջարկութեանց երկու առիտի մանց վրայ . և ըստ որում առաջին անգամին քուէից թիւը չէ համապատասխաներ քուէարկուաց թուոյն, Ժողովը մասնաւոր քուէարկութեամբ անվաւեր հրատարակել է առաջին քուէարկութիւնը : Դարձեալ մասնաւոր քուէարկութեամբ անմիջապէս երկրորդ անգամ քուէարկութեան ձեռնարկել որոշելու և կատարել է 42 անգամայն ներկայութեամբ որոյ 39-ը մասնակցելու են քուէարկութեան և երկրորդ առիտի մասն 30 քուէ տրուելով, որոշող ձայնից միարանութեամբ սոյն առիտով մն ընդունուած հրատարակուելու է :

Բողոքարկու երեւոյնականք որ քուէարկութեան առաջին փորձին ետե քուէարկութիւնն ուրիշ օրուան ձգել առաջարկելով եւեր զնացելու են, բայց ժողովականաց 49-ի ներկայութեամբ սոյն առաջարկութիւնը մերժուելով նոյն օրը քուէարկութեան երկրորդ փորձին կատարուելը և իրենց կարծեաց հակառակ ամփոփման ընդունուելը տեսնելով բողոք բացառու եւեր են . իրենց բողոքը կը հիմնեն Սահմանադրութեան 77 յօդուածին վրայ որ կ'Պօլսոյ թաղերուն մէջ ազգային Երեւոյնականաց ընտրութեան կանոններ սահմանած տեսն կը տրամադրէ թէ « քուէարկութիւնը կատարուելէն ետքը, նոյն օրը միևնոյն նիստի մէջ Թաղական Խորհուրդին առջին քուէտուիլը կը բացուի և Քննիչներն քուէներն համրելով,

քուէարկուաց թուոյն հետ կը բաղդատեն : Եթէ տարբերութիւն գտնուի, և Թաղական Խորհուրդը խորհախառնութեան կտակած ունենայ, մինչև առաջիկայ կիրակի՝ միւս օր մը նորէն քուէարկութիւն ընել կ'որոշուի :

Բայց սոյն յօդուածը ըստ մեր կարծեաց, բողոքարկու երեւոյնականաց օժանդակ չ'կրնար ըլլալ . ոչ միայն սատար մէջ որոշուած քուէարկութեան կրկնութիւնը Երեւոյնականութեան ընտրութեանց առթիւ թաղերուն մէջ կատարուած գործողութեանց վերաբերելու է և բնական նմանութիւն չունի Ժողովի մը մէջ կատարուած քուէարկութեան, այլ նաև նոյն յօդուածին ոգին Քուէարկութեան մը մէջ խորհախառնութիւն պատահած ժամանակ զոյն կրկնել հարկ ըլլալուն վրայ է . իսկ մեր բողոքարկու Երեւոյնականաց բողոքին ոգին անվաւեր հրատարակուած Քուէարկութեան մը միևնոյն օրը կըրկնուած ըլլալուն վրայ է որ տարբեր բաներ են :

Այսպէս որ յիշեալ յօդուածը կրկնելի քուէարկութեան համար ուրիշ օր կը արամադրէ, բայց սաի ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ . զի թաղի մը բաղնիքի ընտրողներն քուէ ժողովելէն ետե, եթէ խորհախառնութիւն պատահած ըլլալն ստուգուի, անկարելի է միևնոյն օրը ամենէն կրկին անգամ քուէ ժողովել և քուէ համար կատարել . ահա սոյն անկարելիութիւնն է որ Յիշեալիւ պարտաւորել է քուէարկութեան կրկնութիւնը ուրիշ օրուան ձգելու արտօնել . իսկ Ժողովի մը մէջ երբ քուէարկութիւն մը կ'ըլլայ և որիէ պատճառաւ անվաւեր կը վճուռի, զայն կրկնել կտու չ'կրկնել, անմիջապէս կամ ուրիշ օր, Ժողովին կամրէն կտակուել է . մասնաւոր երբ Քուէարկութիւնը խնդրոյ մը որոշման համար է և ոչ թէ պաշտօնակալի մը ընտրութեան . և եթէ Ժողովը մեծազոյն մասի ներկայութեամբ կամ որոշող ձայնից միարանութեամբ քուէարկութիւնը կրկնել և անմիջապէս կրկնել որոշէ և կատարէ, չ'կայ օրէնք մը կանոն մը որ իրաւունք տայ ումք անոր դէմ բողոքելու :

Ուստի ըստ մեզ սոյն բողոքն պէտք է ջնջել մեր խնդրոյ տուամարէն :

9. Բողոքագիր Եկեղեցական Երեւոյնականաց ընդդէմ Բ. անխոյստան Վարչական կազմութեան վերաբնութեան առաջարկութեան զոր Ժողովս Սահմանադրութեան վերաբնութեան զրադաժ միջոցին քուէարկութեամբ ընդունեց յունիս 30 1876. նիստ ժ. Ը. իր որոշում երկրորդ ընթերցման օրինական ծրագրի :

Այս բողոք, որ ծանրակշիւ է զի ստորագրող Եկեղեցականք կը պնդեն թէ յիշեալ առիտով մէջ Արքեպիսկոպոս Ժողովոյ իրաւասութիւնն թանարարուած է, Չեռնհասութեան և Նախաձեռնութեան զիւանայ ի միասին բռնութեան յանձնուած է ի նիստ Ե. 18 յունիս 1876, և դեռ տեղեկագիր չ'տալու : Այս բողոքը որ վերաբնութեան խնդրոյն կը պատկանի, անոր հետ վճուական լուծումն առնելու տրամադրի ըլլալով իր մասնաւոր խնդիր մեր տուամարին մէջ մնալու հարկ չունի :

10. Բողոք 5 Երեւոյնականաց .

Որով Տրդ. խնդրոյ նիւթ եղող բողոքին նկատառումն որոշելու համար Ժ. Ե. նիստի մէջ կատարուած քուէարկութեան դէմ՝ կը բողոքեն պնդելով թէ Տ. Երեւոյնականաց Խորհուրդը խան չ'ըլլալով մասնակցած է նոյն քուէարկութեան և հետեարար զոյն անվաւեր կուզեն հրատարակել :

11. Բողոք 5. Երեւոյնականաց ընդդէմ 5 երեւոյնականաց, որ բողոքելու էին անոր երեւոյնական ընտրող Մ. Ժողովոյ 1876 Փետրուար 20 նիստի մէջ կատարուած քուէարկութեան մասնակցութեան, զոր ինք կը մերժէ և հետագում կը պատահէ :

Ժողովս յանձնեց սոյն բողոքն յարակից 5

երեսփոխանաց բողոքով որ 10դ. խնդրոյ առարկայն է, և որ ասոր նման Սահմանադրութեան վերաբնութեան խնդրոյն կը պատկանի: Նախաձեռնութեան և Ձեռնհասութեան Դիւանաց ի միտսին քննութեան, ի նիստ Ե. 18 Յունիս 76. բայց մինչև ցայժմ՝ պատասխան մը չառնուեցաւ:

Բայց ինչ որ ալ ըլլայ սոյն քննութեան արդիւնքը, ըստ որում Տ. Երեմիա Հայր երեսփոխանն չէ, և բողոքին պատճառ տուող բողոքը ուրիշ բողոքոյ մը նկատարւումն համար կատարուած քուէարկութեան մը համար է, մեծ կարեւորութիւն չունի Ժողովի համար. ուստի կառուցարկներ այս խնդիրն ալ ջնջել Զեր Խնդրոյ ցանկէն:

12. Հրաժարական Կիւմիշկէրտան թոյրէն էֆէնտիի:

Կիւմիշկէրտան Ռ. էֆէնտի սոյն հրաժարագրով կը հաղորդէ թէ ինք արդէն Անդրիանուպոլսոյ Գաւա. Ժողովին յորմէ ընտրուել է, հրաժարական մատուցել է պատճառելով որ 5 տարին լրացած է յորմէ հետէ ինք երեսփոխան ընտրուել է նոյն գաւառին: Բայց գաւառացիք դեռ իրեն յաջորդ չեն ընտրել:

Ժողովն նկատելով որ Ռուբէն էֆէնտի փոխանակ Ժողովի՝ ուղղակի գաւառին կողմէ իր հրաժարականը և հրաժարելուն պատճառ միմիայն հինգ տարին լրացուցած ըլլալն կը յայտնէ, նախաքննութեան յղեր է սոյն հրաժարագիրն իր պատճառաբանեալ, ի նիստ Ժ. 26 Նոյմ. 1876. բայց անպատասխանի մնալով, ուր ուրեմն վերջին ժամանակներս հրաժարականն ընդունել է ի նիստ Ժ. 49 յունիս 1879:

Թէև այս կերպով խնդիրը վերջացած է, բայց որպէս զի բնաւ չիթ գաղափար չմնայ, հարկ է ըստ մեզ յայտ առնել հանդիսաւոր թէ սխալ է կարծել թէ երեսփոխանի մը պաշտօնավարութեան տեղութիւնը անպատճառ 5 տարի է, և թէ սոյն պայմանաւորը լրանալէն

ետքը երեսփոխան մնալն անարժանաւորութիւն է: Սահմանադրութիւնը 2 տարին անգամ մը երեսփոխանութեան մէկ հինգերորդի փոփոխութեամբը Ա. 74. Ժողովն չարունակ նորագութեան մէջ սահել կը տրամադրէ, բայց բնաւ տեղ մը սահմանած չէ թէ իւրաքանչիւր երեսփոխան միայն 5 տարի պաշտօն պիտի վարէ. մանաւանդ որ երեսփոխան մը չ'ըլլալնոր իր ակտը ձգել մինչև որ իր յաջորդը չի գտնուի իր տեղը, որն որ չի պատահիր ճիշդ պայմանեալ ժամանակին: Կիւմիշկէրտան Ռ. էֆէնտի սխալ գործեր է նաև իր հրաժարականն ընտրող գաւառին ուղղելով. զի գաւառն միայն ընտրող է. ընտրութիւնն հրամայող և վաւերացունող ինչպէս նաև երեսփոխանն հրաժարեցունող և կամ հրաժարականն ընդունող կեդրոնն է միայն. անոր պէտք է միշտ ուղղուի հրաժարական:

13. Առաջարկութիւն Տ. Հմայակ վարդապետի Ազգիկն ապագայն քարտրելու և քարեկարգելու նպատակաւ դրամական միջոցի մը վրայ: Համարակալութեան Գիւանին նախարքն, նութեանը յանձնուած նիստ Ժ. 26 նոյեմ. 1876:

Ինչևհ հիմա պատասխանն տոնուած չէ, բայց կարծեմք թէ սպասել ալ հարկ չէ: Ազգը իր ամեն պէտքերը կրնայ հոգալ եթէ օրինաւորապէս ընդհանուր և գաւառական և թաղական տուրքերն ուղղակի և անուղղակի հաստատուին: Ուստի կ'առաջարկենք Ժողովիս ուղղութիւնն Ազգային Տուրքի վրայ դարձունել և տեղի չթողուլ այսպիսի տարօրինակ միջոցներու առաջարկութեանց և հետեւեալէս ջնջել այս խնդիրն ալ Զեր տուածին:

14. Առաջարկութիւն Պէշիքեան էֆէնտիի Ազգ. Ժողովոյ սպաղարական գործոց հոգը իր Իււանին յանձնելու նկատմամբ:

Նախաքննութեան յղեալ է ի նիստ Ժ. 26:

3 դեկտ. 1876. բայց անպատասխանի մնալով:

Ըստ որում Ատենապետ Ս. փաշայի մի և նոյն նիւթի վրայ բայց տարբեր կարգադրութեամբ ուրիշ առաջարկութիւն մը Ժողովոյս Խնդրոյ կարգն անցած է տեղեկագրութեամբ նախարքին և Գիւանին, կ'առաջարկենք ջնջել զայս և միւսին լուծմանն սպասել:

15. Հարցում Ստենապետ Ս. փաշայի որով կ'ուզէ տեղեկանալ թէ «Վարչութիւնն ազգային խնդրոց համար ուղղակի կամ Տէրութեան ձեռք ի գաւառս դրուած Քննիչ կամ Սյցեւունքուն նկատմամբ ի՞նչ ընթացքի կը հետեւի, ի՞նչպէս կ'ընտրէ զանոնք, ի՞նչ հրահանգ կուտայ, ժախքերն ի՞նչ կը հատուցանէ, վերադարձին որո՞ւ տեղեկագիր կուտան Քննիչք, և ինչ»:

Այս խնդրոյն կարեւորութեանը պատճառաւ Վարչութեան ուղղութիւնը հրկին հրաւիրել և պատասխանով հանդերձ սոյն նիւթին վրայ կանոնական ծրագիր մը խնդրել պատշաճ կը դատուի:

16. Հարցում Ս. Պատրիարք Հօր. Եկեղեցական Համագումար Ժողովոյ մնայուն Գիւան ունենալն Սահմանադրութեան հակառակ է թէ համաձայն:

Այս հարցում 1877 Փետրվար 11. ԺԸ. նիստին մէջ Ս. Պատրիարք Հօր կողմէն հրաժարագրի մը հետ մէկտեղ երեան գալով փոքրիկ վիճաբանութեան մը տեղի տալէ ետեւ օրաձգուել է մինչև ցորոշումն հրաժարականի խնդրոյն: Բայց վերջէն սոյն խնդիրն որոշուել է, իսկ հարցումն անպատասխանի մնացել է մինչև ցայժմ:

Ըստ մեզ պատասխան մը տալ հարկ է այս հարցման, որպէս զի ապագային չիթ թութեան խնդր չը մնայ, և ահապակ այս մասին մեր կարծիքը:

Ըստ որում Համագումար եկեղեցական Ժողովը մնայուն և անդամներն հաստատուն Ժողով մը չէ, այլ պատահական գումարումնայն եկեղեցականաց որ Կոստանդնուպոլսոյ վիճակին սա կամ նա պաշտօններուն վրայ և կամ պատահմամբ մայրաքաղաքիս մէջ ներկայ կ'գտնուին և երբեմն նաև մերձակայ վիճակաց առաջնորդներն են, և

Ըստ որում սոյն Ժողովն սահմանադրապէս մասնաւոր չրջանի մէջ և կամ շարունակաբար նիստ ընելու հարկի ներքե չէ, այլ քանի պէտք ըլլայ, ընտրելեաց ցուցակ պատրաստելու և կամ Կրօն. Ժողովին ձեռնհասութենէն բարձր խնդիրներն լուծելու համար Ս. Պատրիարքի կողմէն կը հրահարուի Ժողով, հարկ չիցայ մասնաւոր Գիւան ունենալ. մանաւանդ որ Գիւանի անդամներն պաշտօնի փոփոխութեամբ կամ Պօլսէն բացակայութեամբ կրնան իյնալ իրենց պաշտօնէն, զիանդամութենէ ալ կիցնան, և ամեն անգամ նոր զիւան կազմել պէտք կրնայ ըլլալ:

Բայց եթէ Եկեղեցական Հարք փափարին և յաջողին մնայուն Գիւան կազմելու եղանակ գտնել, ըստ որում Սահմանադրութեան մէջ իւրաքանչիւր Ժողով և Խորհուրդ իր մասնաւոր Գիւանն պիտի ունենայ գրուած է (յօդ. 85), չ'ենք կարծել որ Սահմանադրութեան հակառակ ըլլայ իրենց այս փափաքը և ըստ այնմ կազմուելիք Գիւանը:

17. Հարցում Փախագեան էֆէնտիի, Կեդրոնական տրոց հրահանգին վրայ:

Փախագեան էֆէնտի 1876 նոյեմբեր 1. թուականաւ տարգրեալ և Հրահանգ կեդրոնական ուղղակի տրոց անունով թերթի մը մէջ երկու կէտ նշմարելով հակառակ Ազգ. Ժողովով հաստատուած տրոց կանոնագրին, բացառութիւն կը խնդրէ: Քաղաքական Ժողովն, ի նիստ Ժ. 25 փետր. 77. Յիշեալ երկու կէտերն են:

1. «Քաղաքական գործոյ մը համար

Պատրիարքարան կամ Թաղական Խորհրդոյ զիմող ազգայինէ մը տակաւին անվճար Թողուած տուրքերը պիտի տանուին և կըսէ Հրահանգը, այս պարբերութեան յապաւենալ են կանոնադրին սա սրբանանքը և տարին լրացած և երեք անգամ ուղղուած բայց անվճար մնացած են ։

2. « Երեսփոխանական ընտրութեան մասնակցողաց տուրքը ըստ 65 րդ. յօդուածոյ Ազգ. Սահմանադրութեան նախապէս պիտի առնուի և կ'ըսէ Հրահանգը, որ չ'կայ կանոնադրին մէջ ։

Սոյն հարցմանց Քաղաքական Ժողովը կը պատասխանէ Ժողովոյս հետեւեալ նիստին թէ « Ա. կէտին համար ինք տրտնեալ է եղեր այդպիսի տնօրէնութիւն մ'ընելու, զի Ազգ. Ժողովս տրոյց բաշխման և հաւաքման զիւրութեան համար պէտք եղած միջոցներն ի գործ դնելու արտօնութիւն տուեր է Քաղաքական Ժողովին » ։ Իսկ « Բ. ը բացարձակապէս Սահմանադրութեան 65 րդ. յօդուածին պահանջումն է կ'ըսէ զոր ինք ի գործ դնել պատշաճ տեսեր է թէ և կանոնադրին մէջ այդ կէտը մուցուած ըլլայ ։

Ժողովս ժամանակ չ'ունեցեր նկատողութեան և ի բնին առնուլ այս խնդիրը, եւ թէպէտ սա նոյն թուականէն ետքը Ժողովոյս առաջարկուած կանոնական բարեփոխութեանց պատճառաւ որ մը յատենի Ժողովոյս միեւրոնութեան բաղին պիտի անցնի, ուստի և իրաւամբ կրնանք օրաձգել անոր լուծումը, բայց ըստ սրում տրոյց և ընտրութեանց վերաբերեալ խնդրի՝ ամեն օր կարեւորութիւնը մեզ զգալի է, աւելորդ չ'ենք համարիր համառօտ կարծիքնիս յայտնել յիշեալ երկու կէտերուն վրայ ։

Ա. կէտ. — Տարեկան տուրքը չվճարող անձէն երբ գործով մը դիմէ Վարչութեան որեւէ ծխղին, նախ տուրքն գանձել և ապա գործը տեսնել ։

Այի խիստ բնական և արդար տրամադրութիւն մ'է, ըստ մեզ ամեն ազգայնոյ

պարտքն է իր տուրքը վճարել ինչպէս իրաւունքն է Վարչութեան կողմէն իր գործին տնօրէնութիւնը ստանալ ։ Բայց արտաք և իրաւունք իրարու կադակցեալ են, ինչ պատճառաւ Ազգային մը երբ գործով կը դիմէ Վարչութեան, անկէ տնօրէնութիւնը ընդունելու իրաւունքը պիտի վայելէ եթէ իր պարտքը չ'է վճարած առ նա ։ Պիտի առարկա թէ տուրքը վճարել ազգայնոյ պարտքն է բայց ուղիւն ալ Վարչութեան պարտքն է, եթէ նա չ'է վճարեր երբ սա չ'է ուղեր, ինչու պատիւ կըրէ գործով դիմած ժամանակ, պատիւ ճիշդ բառ չ'է այս տեղ, քանի որ չվճարուած պարտքին համար տուգանք չ'ապահովուիր, այլ պարզապէս գանձում, պատժոյ տնօրէնութիւն չ'կայ, ուստի պարտքը անվճար Թողողը չ'ըսէ գոհելու իրաւունք չ'ունի և աւելորդ է ըստ մեզ այն պայմանն որ Ազգային Ժողովն ընդուներ է, կ'ըսուի, կանոնադրին մէջ, այն է, « տարին լրացած և երեք անգամ ուղղուած բայց չվճարուած » տուրքը միայն գանձելու պայմանն որ գործնական ալ չ'է, ուր ընդհակառակն բանաւոր և կատարեալ գործնական կը գտնենք Վարչութեան հրահանգին այն տրամադրութիւնը « որով պարզապէս գանձել կը հրամայէ անվճար մնացած տուրքը և ապա գործը տեսնել » ։

Իսկ գալով Բ. կէտին որ է Երեսփոխանական ընտրութեանց մասնակցողաց տուրքը կանխաւ գանձելու օրէնքը, ասոր մէջ թիւրմանցութիւն կը տեսնենք ։

Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ « Երեսփոխանական ընտրող ըլլան այն ամեն անձինք որ 25 տարեկան և օսմանեան հարտակ ըլլալով տարին գոնէ 75 դուրուշ ընդհանուր տուրք կը վճարեն և կամ անձնական արժանիք ունին թէ և տուրքի կարողութիւնն ինչ նոյնչափ չ'ըլլայ » ։

Տուրքը ինչպէս կը տեսնուի Երեսփոխանական ընտրողութեան իրաւունց հիմերէն մէկն է, տուրք տուողն ընտրող կ'ըլլայ երբ տարին գէթ 75 դուրուշ տուրք կը վճարէ, և ըստ որում տուրքը կարողութեան վրայ հիմնեալ է

և սրտաւորեալ, ուստի այն ամեն ազգայինք որ գոնէ 75 դուրուշ տարեկան ընդհանուր տուրք տալու կարողութիւն ունին, պարտաւոր են տարեկան գոնէ 75 դուրուշ ընդհանուր տուրք վճարել և միանգամայն Երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու, բոլէ տալ ։ Բայց այս երկու պարտաւորութիւններն միեւնոյն աստիճանաւ բռնադատել չ'են, ըստ կարողութեան տուրք տալն անհրաժեշտ է, զի Պատրիարքարանը ծախքի կարող է և ազգայինք պիտի վճարեն զայն ծախք խրաքանչիւր ըստ չափու կարողութեան, իսկ երկրորդը ազգասիրական պարտաւորութիւն է զոր ազգին գործոց բարւոր տնտեսութեան և իր վճարած ստակին օրինաւոր գործածութեան նախաձեռնութիւնը Ազգայինք երբեք զանց չ'են տաներ, բայց վերջապէս զանցառութիւնը ընտրել տուրքը չ'վճարողին չափ տարտազանց չ'կրնար նկատուիլ, մէկ խօսքով՝ ուղղը քուէ կուտայ, չ'ուղղը չ'իտար, բայց ամեն կարող մարդ տուրք կուտայ և չ'տալը չ'կրնար ընել ։ Բոլէ է որ 75 դուրուշ տուրք տալու կարողութիւն ունեցողը Երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունք ունի, բայց մէկը կրնայ քուէարկութեան մասնակցիլ տանայ իր տուրքը տակաւին վճարած ըլլալով, զի ընտրութեան իրաւունքը տուրք տուող ըլլալու պայմանին կապուած է և չ'է վճարելուն, զի եթէ այսպէս ըլլար Ընտրողական Ժողովներն ամեն 75 դուրուշ իր ընդհանուր տուրք բերողին կարող ըլլայ թէ անկարող, քուէարկութեան իրաւունք ճանչնալու էին և ամեն քուէարկութեան ձեռնադրէն Երեսփոխանական հոգաբարձութիւնը տուրք պահանջելու իրաւունք ունենալու չ'էր, որոց երկուքն ալ սխալ են և հակառակ Սահմանադրութեան սկզբանց ։

Եթէ Սահմանադրութիւնը երեսփոխանական ընտրողութեան համար դէթ 75 դրշի տարեկան ընդհանուր տուրքն պայման դրած է, չ'է թէ քուէն ստակով ծախելու դիտմամբ է, որ այսպէս չափ աժան եղած կ'ըլլար, այլ քուէտուրքին քով քիչ չափ վաստակի տէր և հետեւաբար ընտրական գործողութեանց մէջ

ընտրութիւն ունեցող խեղահաս անձինք միայն ընդունելու նպատակաւ է, և ասոր օտարացոյց է անձնական արժանիքը որ առանց ստակի ընտրողութեան իրաւունք կուտայ, ուստի Ընտրողական Ժողովոյ հրահանգ արուած է Սահմանադրութեամբ երեսփոխանական ընտրողներն որոշելու ժամանակ չ'է թէ Երեսփոխանական հոգաբարձութեան դիմել և անկէ 75 դրշ տուրքներն վճարողաց ցանկն ուղերով, զանաք միայն հրաւիրել ի քուէարկութիւն, ինչպէս որ պէտք էր ըլլալ եթէ Սահմանադրութեան ոգին համապատասխանէր Հրահանգի տրամադրութեանց, այլ ընդհակառակն՝ հասակի, միջակի, տուրքի կարողութեան և կամ արժանիքի քննութիւն ընել և պատրաստած ցանկերն ի տես ամենից տեղ մը կախել, որպէս զի սրբազրութեան եթէ հարկ կայ, կատարուի, և ապա զամենն ի քուէարկութիւն հրաւիրել, հետեւաբար՝ Քաղ. Ժողովոյ այն Հրահանգը որ կը տրամադրէ թէ « Երեսփոխանական ընտրութեանց համար քուէտուրքին մերձեցողները նախ սնտուկին պէտք է մերձեցունել ստակին առնել և ապա քուէն ին, Սահմանադրութիւնը սխալ մեկնելու արդիւնք է և 1863 էն ի վեր որ Սահմանադրութիւնն հաստատուած է մեր մէջ, երբեք և բնաւ տեղ մը չ'է գործադրուած, և եթէ գործադրել ուղիւ, նպատակին բոլորովին հակառակ արդասիր յառաջ կը բերէ, զի ստակ ո'չ միայն ազգայինք իրենց ընտրողական անտարբերութիւնը չ'են թօթալեր, այլ ընդհակառակն քուէարկութեան ճամանակցելով տուրք տալէ ալ ազատելու գաղափարին կը ձգտին հետեւի, որով քուէտուրքին պէս սընտուկն ալ կը զրկուի իր յաճախողներուն մեծ մասէն ։

Վերջապէս այս խնդրոյն համար կառաւարկեք որոշել թէ « Ամեն ազգային որ 75 դրուշ ընդհանուր տուրք վճարելու կարողութիւն ունի, նոյն չափով տուրք պիտի տայ Ազգին՝ քուէարկութեան մասնակցի թէ ո'չ, և Վարչութիւնն ազատ է այս տուրքն գանձելու համար ամեն օրինաւոր միջոց ի գործ

դնել : Իսկ երեսփոխանական ընտրութեան համար Վարչութիւնը իրաւունք ունի դնել 75 դուրուշ ընդհանուր տուրք տրամադրել եթէ անձնական արժանիք չունի, այն ազգայինէն որ քուէարկութեան կոչուեր է, և եթէ սա՛նն կարող է, զանի քուէարկութեան կոչող Ընտրողական ժողովէն համար տրամադրել : Բայց Ընտրողական ժողովներն իրաւունք չունին քուէտուրի և սնտուկ քովէ քով դնել և ստակը կանխաւ մէկուն մէջ չլեցուցած քուէն թող չտալ ձգել միւսին մէջ :

18. Հարցում Փախաղեան Ս. Լեւոնի :

Շահնազար-Նուսրեան վարժարանը ազգային է թէ մասնաւոր : Եթէ ազգային ինչո՞ւ փակուեցաւ և ի՞նչ է անոր հաշիւը : Կը խնդրեմ որ թէ՛ փակման պատճառները և թէ՛ հաշիւները Ժողովիս ներկայանան : Իսկ եթէ մասնաւոր՝ ի՞նչ է հաշիւը Շահնազարեան վարժարանին կտակը : Ազգի՞ն կը վերաբերի թէ մասնաւոր անհատի, կը խնդրեմ որ կտակին պատճէնը Ժողովիս ներկայանայ :

Սոյն հարցումը 27 փետր. 77 Նիստ ԺԹ երեան ելած է Ազգ. Ժողովոյս մէջ՝ որ զայն լսել որոշեր է հետեւեալ նիստին, բայց ժամանակ չէ ունեցեր :

Հարցման նիւթը իմաստ կարեւոր է և իր բնու դատողութեան վերաբերեալ խնդիր, կարժէ որ պատասխան մ'առնուի, բայց ո՞ւր է :

Ըստ մեզ, թէ հոգեւոյս Շահնազարեան վրդարտ և թէ՛ Վսեմախոյլ Նուսր փաշա բարձրաշնորհ Տ. Ներսէս Ս. Պատրիարքի յանձնած ըլլալով Վարժարանի դրամագրութիւնը և Ն. Սրբազնութիւնն հիմնած ըլլալով զայն, ինք միայն կարող է գոհացուցիչ պատասխան տալ Փախաղեան Լեւոնի բազմաձեռնի հարցման :

Ուստի կառավարիկներ Ն. Սրբազնութեան խնդրել որ շնորհ ընէ Ժողովիս ներկայել եթէ արգելք մը չկայ 1. Շահնազարեանի կը

տակը : 2. Նուսր փաշայի նախատուութեան պայմանները և 3. Վարժարանին հաստատութեան և փակման վրայ լուրի տեղեկութիւն :

19. Հարցում Փախաղեան Լեւոնի :

1870 Մայիս 24 ին պատահած Բերայի մեծ հրդեհին առթիւ միջազգային օգնութեան յանձնախմբի մը կողմէն Նորաստեղծեան Յաւոր Լեւոնի յանձնուած և հայ հրկիւղեցող և կարօտեցող բաժնուելու յատկացած մեծագումար ստակին հաշիւներն առնուած են ազգովին : Եթէ այո՛ւ, Ժողովիս ներկայացուին : Իսկ եթէ ո՞չ՝ առնուին և բերուին :

Այս է հարցումն Փախաղեան Լեւոնի զոր Ժողովիս Բաղարական Ժողովին յղելով 25 փետրվար 77 (նիստ ԺԹ.) պատասխան տուեր է հետեւեալ նիստին թէ այս խնդրոյն մէջ Պատրիարքարանի դերը միմայն Բ. Պարան հրաւիրին վրայ երկու ազգային երեւի անձանց որ են Սենեքերիմ Լ. Մանուկեան, և Յակոբ Է. Նորաստեղծեան, անունները ներկայացուցել եղած է, և դրամական գործողութեանց հոգն ու համարադրութիւնը միջազգային յանձնախմբին իրեն վերապահած ըլլալով, այս մասին ո՛րեւէ պաշտօնական կամ մասնաւոր բանակցութիւն տեղի չէ ունեցած Կառավարութեան և Ազգային Վարչութեան մէջ տեղ. ուստի Բաղարական Ժողովն ալ ո՛չ միջամտած է և ո՛չ միջամտել հարկ կը համարի :

Ժողովս մինչև ցայսօր այս խնդրով դրամագրութեան ժամանակ չէ ունեցեր, և ըստ մեզ պէտք չէ ալ դրամալ. զի խնդիրը թէ՛ և Հայ հրկիւղեցող և կարօտեցող վերաբերեալ ըլլալով սոյն տեսակէտով կրնայ մուտ գտնել ազգային Խորհրդոյ մէջ, բայց անոր դուռ Վարչական կամ դատական բնութիւնը չ'ներէր որ Երեսփոխանական Ժողովոյ միջնորդութեան նիւթ ըլլայ :

Ուստի կ'առաջարկենք դուրս հանել այս

խնդիրն մեր խնդրոյ տուամբէն և յայտարարել որ եթէ հրկիւղեցող օգնութեան յանձնախմբին զրկեալ ազգային կան, կրնան զի մեզ Վարչութեան և արդարութիւն պահանջել անոր Գաւառական Առեւտրին առջև :

20. Հարցում Ղազարեան Գրիգորի :

Ստույգ է որ Աղթամարոյ Կաթողիկոսն Կոստանդնուպոլսոյ Եկեղեցականաց մէկ քառիկն՝ կուրծքը Խաչ կրելու կոնդակ շնորհած է : Եթէ ստույգ է, Արարատեան Մայր Աթոռէն այսպիսի շնորհաբաշխութիւն ընելու թոյլ տուութիւն եղած է Աղթամարոյ Կաթողիկոսին : Եթէ ոչ՝ Կրօնական Ժողովն ի՞նչ ըրած է այս պարագային մէջ :

Այս է Ղազարեան Լեւոնի հարցումն : Զոր Ժողովիս 1877 փետրվ. 25 ԺԹ. նիստին ներկայած է, և որոյ պատասխանը՝ Կրօնական Ժողովն հետեւեալ նիստին եկեր է սա՛ խմբագրութիւն :

1. Կրօնական Ժողովն իւրոյ գիտէ թէ Աղթամարոյ Կաթողիկոսը Կ. Պօլսէ մեկնելէն առաջ Եկեղեցականաց ոմանց Խաչ եւ ոմանց Խաչ կրելու կոնդակ տուած է :

2. Կրօնական Ժողովն տեղեկութիւն չունի թէ Մայր Աթոռոյ ընդհանրական Հայրապետին և Աղթամարոյ Կաթողիկոսին մէջ այս խնդրոյն նկատմամբ բանակցութիւն եղած և համաձայնութիւն գոյացած է թէ ո՛չ :

3. Կրօնական Ժողովն չէ համարձակեր իր նկատողութեան առարկայ ընել այս խնդիրը որ գոնէ հոգեւոյս Յակոբ Պատրիարքի օրէն սկսեալ, մասնաւոր կաթողիկոսաց ինչպէս նաեւ Երուսաղէմի և Կ. Պօլսոյ Պատրիարքներէն ոմանց այլ և այլ շնորհաբաշխութիւններ ընել նոն տրութիւն մուտ գտած է մեր Եկեղեցւոյ մէջ, բայց իր նախորդները զայն նկատողութեան առած չ'են :

Ժողովս այս խնդրոյն վրայ խորհելու ժամանակ չէ ունեցեր մինչև ցայսօր :

Խնդիրը ծանրակշիւ է, բայց զուտ կրօնական, և ըստ որում զոյն լուծելու համար կանխապէս պէտք է գիտնալ Ս. Թէ ի՞նչ են սոյն շնորհաբաշխութիւնները զորս Եկեղեցական Հայր իրաւունք ունին ընել իրենց մէջ : Բայց շնորհաբաշխութեանց ո՞րը Եկեղեցւոյ նախորդութեան ո՞ր աստիճանին յատուկ է : Պ. Հայաստանացւոյ Եկեղեցւոյ կը ճանչնայ մէկն տեղի Ազգային Կաթողիկոսական Աթոռ, և Գ. Վսեմախոյլ Հայրապետն ամենայն Հայաց ճանչցած է Աղթամարոյ Եկեղեցական գահակալին կաթողիկոսական տիտղոսն, աստիճանը և իրաւասութիւնը :

Կ'առաջարկենք որ սոյն պարագաներն քաջ իմաստասիրելու յանձնարարութեամբ յղէք խնդիրն Կրօնական Ժողովին և մինչև պուծումն խնդրոյն համաձայն Եկեղեցական օրինաց հիմաւորցն ստորութեամբ բաւականանալով նոր տնօրէնութիւն չ'ընդունիր Աղթամարոյ Կաթողիկոսաց ձեռնադրած Եպիսկոպոսներուն, օրհնած Միւստին, զրոյս կոնդակներուն և Խաչակրութեան և այլ տեսակ շնորհաբաշխութեանց նկատմամբ :

21. Հարցում Ժողովրդեան աղերսագիր .

Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղին Ժողովուրդը իրենց Թաղ. Խորհուրդն ընտրելու իրաւունքէն զրկուած ըլլալին յայտնելով կը խնդրեն որ սահմանադրական իրաւունքին իրենց վերադառնայ : Այս աղերսագիրն Յարաբերութեան Ղիւանի նախարքն նութեան յղուեր է 11 Մարտ 1877ին, բայց դեռ պատասխան չէ եկած :

Ղալաթիոյ Ժողովուրդը երկու զոնադան տարերքէ կը բաղկանայ. յորոց մէկն է ընկի Ղալաթիացի որ մէկ քանի ընտանիք միայն կը կազմեն, և միւսը զուաւաւցի ազգային որ մեծ մասամբ միայնակ և մաս մը ալ ընտանեւոր տնտեսութեամբ եկեր կրնան ինի Ղալաթիա : Ասոնց ամենն Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղական Ժողովուրդը կը կազմեն, այսինքն իրենց կրօնական պէտքերն նոյն եկեղեցւոյ կողմէն կը հոգացուին, զու

ւաներնին նոյն տաճարի հովանեւն ներքեւ կը դառնարտարտին, քաղաքական վիճակի վերաբերեալ վիտայդիր, եւն, անոր Թաղ. Խորհուրդէն կը ղեկավարեն, մէջերնին վիճ պատահած ժամանակ, անոր ատենանը կը դիմեն և այս ամեն բարեաց փոխարէն իրենք ալ տաճարին և վարժարանին նիւթական պիտոյից համար թաղական տարր կամ նաեւ, ողորմութիւն կամ աշխատութիւն ինչ որ պէտք ըլլայ, չեն խնայեր, իրենց բաժինը կը հաստացանեն :

Այս ժողովրդեան մեծագոյն մասը որք դաւաճողի են, Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր ընտրական իրաւանց մասնակցած չեն, այլ միայն բնիկ թաղացի մասը ի սկզբան մասնակցած է թէև, բայց դաւաճողացի դժգոհութիւնը անհամաձայնութեան տեղի տալով, Վարչութիւնը պարտաւորեալ է ինքն ընտրել զԹաղ. Խորհուրդը թէ՛ բնիկ և թէ՛ դաւաճողի տարերքներէն ալ ստանալով : Ինչպէս կերելի, Վարչութիւնը այսպէս ընելու պարտաւորեալ է անշուշտ առ ժամանակեաց, փասն զի դաւաճողաց ընտրական խնդիրը լուծելու անձեռնհաս նկատել է զինքը : Այժմ նոյն դաւաճողի ժողովուրդն է որ կը դիմէ առ Ազգ. Ժողով, ինչպէս նաև բնիկ թաղացիք ալ :

Արդ Ղալաթիոյ Թաղը ունի՞ բաւական թաղացի ազգային կամ որ նոյն է բաւական ընտրող թաղական :

Սահմանադրութիւնը Թաղական Խորհուրդը զոյք ընտրութեան համար թէ՛ և մասնաւոր թիւ բնակչաց չի պահանջեր, բայց սոյն Խորհրդաց անդամներու համար 5 կն մինչև 12 սահմանած թիւէն կը հասկցուի որ թաղական ընտրողներն տանցմէ բաղմապատիկ առաւել ըլլալ կ'ենթադրեն :

Ունի՞ Ղալաթիա գէթ մարքագոյն թիւ անդամով Թաղական Խորհուրդ մ'ընտրելու բաւական բաղմաթիւ ընտրողներ : Սահմանադրութիւնը թաղական ընտրողաց համար պայման կը դնէ. 1. Թաղին եկեղեցւոյ ժողովուրդէն ըլլալ : 2. 23 տարուց հասակը լրացու

ցած և 3. ընտրողական իրաւանց լիովին վաշեղ ըլլալ : (Թդ. 55, 66 և 67) :

Արդ Ղալաթիոյ մէջ այս պայմաններուն համապատասխանող բաւական ընտրողներ կան, երբ պանդուխտ ազգայինք ալ ի հաշիւ առնուին :

Բայց պանդուխտ ազգայինք կրնա՞ն ընտրող ըլլալ թաղական, այս է ահա այն խնդիրը զոր պէտք է լուծել կանխառ Ղալաթիոյ և թերեւս ուրիշ թաղերու ալ ընտրական խնդիրներն միանգամ ընդ միշտ վճռելու համար :

Ամեն մարդ զիտէ թէ պանդուխտ ազգայինք երկու կերպ բնակութիւն կը հաստատեն ի Կ. Պօլիս. մէկն է խաներու մէջ խմբովին և և երկրորդն է մասնաւոր բնակարաններու մէջ առանձինն. այս վերջիններն ընդհանրապէս առևտուրի զբաղող անձինք են, և կամ խանութարան կամ օտապաշի և մէջերնուն շատերը ոչ միայն երկար ժամանակ կը մնան ի Պօլիս, այլև իրենց հայրենիք վերադարձած ատեն՝ կը պարտաւորին իրենց եղբայրը կամ զաւակը բերել և իրենց գործը անոնց յանձնել, որով իրենց ի Պօլիս բնակութիւնը շատ անգամ և՛ ըլլայ : Արդ՝ այս վերջին տեսակէն եղող դաւաճող ազգայինք որ երկար ժամանակ Պօլիս կը գտնուին և գործով և երբեմն նաև ընտանեօր աստ հաստատուած են հայկական թաղերու մէջ, ի՞նչ տարբերութիւն ունին բնիկ պաշտեցիներէն որոց մէջ թաղէ թաղ յաճախ բնակարան փոխող պակաս չ'են : Այս տեսակ դաւաճողիք մինչև ցոյցօր Կ. Պօլսոյ մէջ միշտ բնիկ ընդունուած են, տուրք, նուէր, ողորմութիւն տալու և այլ ամեն ազգային պարտաւորութեանց նկատմամբ, բայց իրաւանց դռներն անոնց առջին միշտ զոյք պահուած են, և որ աւելի զարմանալին է, ամեն մէկէն իրենց դաւաճող վճարած ազգ. տուրքէն զատ այս տեղ ալ ամեն ազգիւ ուղղակի կամ անուղղակի տուրք տուելու հոգ կը տարուի, և երբ մէջերնուն կարող կամեցող անձինք կը գտնուին, առանց տատամելու Թաղական Խորհրդականութեան, Ուսումնական և այլ Հոգարարութեանց, Քաղաքական Ժողովականութեան և մինչև իսկ Արևմտահայկական պաշտ

տօնի կը կոչուին, բայց ընտրող չ'են կրնար ըլլալ, կամ աւելի ճիշդ խօսելով, ընտրողական իրաւունքին բացարձակապէս ճանչցուած չէ : Ա. Ի անիրաւութիւն է սահմանադրապէս որ իրաւունք և պարտիք գոգընթաց վարել կը արամադրէ, և սխալ՝ քաղաքագիտական նկատմամբ, զի ազգայնաց միութեան արգելք որով և զօրութեան ջլտուման պատճառ կուտայ ընտրուի :

Ուստի սխալ է հրատարակել ըստ մեզ թէ այս կարգի դաւաճող ազգայինք որ ի Պօլիս կը գտնուին գէթ մէկ տարիէ ի վեր, բնիկ պաշտեցւոյ նման պարտաւոր են կեդրոնական և թաղական տրոյ մասնակցիլ, և իրաւունք կը վայելեն թաղական և երեսփոխանական ընտրելութեան ըստ տրամադրութեանց Սահմանադրութեան :

Այս սկզբունքն ընդունուելով Ղալաթիոյ Ժողովրդեան խնդիրը խիստ զիւրութեամբ կը լուծուի, զի քաջածանօթ է ամենուն թէ այս կարգի դաւաճող ազգայինք բաղմաթիւ են ի Ղալաթիոս և բնիկ թաղացւոյ հետ մէտեղ բաւական են Խորհուրդ ընտրել և ընտրուելու :

Դ :

ՄԵԱՅՈՐԴ ԽԵԴԻՐԻ 1877 ԱՄԻ

1. Քաղաքական ֆոնդան Ս. Էֆենտի Նախագահական քացման ճառին ուղերձով մը պատասխանելու նկատմամբ :

Սոյն առաջարկութիւնն 1877 Մայիս 6. Ի. նիստին ընդունուած բայց գործադրութիւնն օրոպուած է :

Ի վերջոյ՝ 1878 տարուց չրջանի բացման Բ. նիստին (յունիս 9) Ղաղարսեան էֆէնտիի նմանօրինակ առաջարկութեան վրայ, զարգեալ ընդունուելու և գործադրուելու է, ուղերձի ծրագիրը Ատենայեանց Գլխանի խմբագրութեան յանձնուելով :

Ուստի խնդիրն արդէն աւարտեալ է :

2. Քաղաքական ֆոնդան Ս. Էֆենտիի Նիստին ներկայանալով, նկատողութեան չէ կրցել տալու զի անկէ առաջ՝ Մայիս 6. Ս. նիստին՝ միևնոյն առաջարկութիւնն իսկ զովով մերժուած ըլլալով, կրկին նկատողութեան տուելու համար կանոնական պայմանաւոր լրման սպասել հարկ է եղեր, բայց վերջէն ալ ի լրանալ պայմանաւորին կրկին չէ ներկայացրել Ժողովին և Ժողովն չարժանաւորեալ է անպատեհ իր կանոնական նիստերը :

Ուստի ինքնին ջնջեալ է այս առաջարկութիւնը :

3. Խնդիր 16 Երեսփոխանաց Ղաղարիոյ վարժարանի նորակառոյց շէնքին նկատմամբ :

Որոյ համար Քաղաքական Ժողովը կողմն մատուց մը Պատրիարքարանի փոխարկելու դիմաւորութիւն ըլլալով՝ բայց դատարարութեան Գլխանի կողմէն ամբողջապէս կեդրոնական վարժարանի յատկանալուն առաջարկութիւնը Ազգ. Ժողովը օրակարգն ընդունուած ըլլալով յայտնելով կը խնդրեն որ Քաղաքական Ժողովին յանձնարարութիւնն օրէն տնօրէնութիւն չ'ընեն մինչև որ Ազգ. Ժողովն իր վճռական որոշումն յայտնէ նոյն շէնքին նկատմամբ :

Այս շէնքը որ մեր աչաց առջին հոյակապ կանգնուեցաւ Ս. Լուսաօրչի հովանաւորութեան ներքեւ, օժանդակութեամբ թաղական սնտուկին և խնամօք կալուածական Հոգարարութեան Ղալաթիոյ, արդէն նուիրուած է ազգային մանկուոյն և ի մասնաւորի դաւաճողի պատանեաց դատարարութեանը, և կեդրոնական վարժարանի անուն կրելով կարգաւ Ազգէն իր արժանաւոր դրոյ վերածման համար մասնաւոր կանոնադրութեան և եկամտից հաստատութեան : Սոյն յարկի ներքեւ կան նաև պատարարեալ Ազգային կեդրոնական Մատենադարան մը որ

խնամօք ուսումնական կաճառի մը Աղգին մատենադրական գանձն ճոխացնելու կը ծառայէ, և ժողովական սրահ մը, որ Աղգային վարչական ժողովներն կ'ապնջականէ, և կիրակի օրերն ամբողջ դաստարաններն Աղգային ուսումնական ընկերութեանց և մասնաւորաբար 19 տարիէ ի վեր գաւառացի չափազանց ազգայնոց մէջ ուսում տարածելու համար աւան կիրակի օրեր անընդհատ աշխատող Անձնուէր ընկերութեան խմբին դասախօսութեանց կը ծառայեն աննախանձաբար:

Ինչպէս կը տեսնէք, սոյն մեծագործ շէնքը չէ սպասեր և իրաւում որ Աղգային ժողովը որ յամենայնի վճիռ տալու իրաւունք ունի բայց ոչ ժամանակ, իր վերջնական որոշումը տայ անոր ինչ բանի սահմանաւորէն, ուղ աճադարեր բացեր է իր թեւերն և ընդգրկել սիրով ինչ որ ուղղակի կամ անուղղակի Աղգի վերականգնութեան կրնայ ծառայել, ժողով, կաճառ, խորհուրդ, մատնան ևւն: Ուստի Աղգային ժողովին կը մնայ այսօր

1. Հանդիսաւոր շնորհակալութիւն ընծայել բոլոր այն ազգասիրաց որ այս շէնքին կառուցմանն աշխատեցան և նպաստեցին:

2. Հրաւէր կարգաւ Վարչութեան և Ղալաթիոյ Թաղ. Խորհուրդին որ պատեհ առթիւ մը սոյն շէնքին կից օրինաւոր թեւի մը յաւելումը ոչ միայն Վարչութիւնն իր ճիւղերով այլ և Երեսփոխանութիւնն ամբողջ անոր մէջ ժողովելու խնամք ընեն և արդի շէնքը ամբողջապէս յատկացունեն ազգային մանկըտւոյն դաստիարակութեան:

4. Ստորագրութիւն ֆրիւտստուր էֆէնտիի Խանադարեանց տարեկան շրջանի վախճանը խնդրոց ցանկին յովանդակութեան սրակաս ընթացքն անհետմամբ:

Այս պահանջն արդէն լցուած և անոր չընտրելու Գիււանս այս աշխատութեամբ բեռնաւորուած ըլլալով խնդիրն ինքնին վերջացած է:

5. Թրագիր 7 յօդուածոց զորս իրր յաւելումաժ լըզ. ժողովոյ Կանոնադրութեան մէջ անցունել կառարարել Ստեփան Փաշա Սարանեան:

6. Ստորագրութիւն Ստեփան Կաշայի Սալահեան Սահմանադրութեան վերաբերեալ խնդրոցն անհետմամբ:

Այս երկու առաջարկութիւնք հանդերձ տեղեկագրօք Նախաքննիչ Գիււանսի ժողովոյս Խնդրոց կարգն անցած են ի նիստ ԺԳ. 29 դեկտ. 1878:

Ուստի անոնց վրայ Գիււանս մասնաւոր կարծիք յայտնելու իրաւունք չունի:

7. Բնորոշութիւն Երեսփոխանին Հանձնաւոր:

Սոյն ընտրութեան գաւառական տեղեկագիրն և Վարչութեան ծանօթագիրն ու ընտրելոյն յանձնառագիրն յատենի ժողովոյ կարգացուեր են. բայց նկատելով որ Տեղեկագիրն դաշտացուցիչ բաւական տեղեկութիւն չտար ընտրական պարագայից վրայ և ծանօթագիրը կը յայտնէ թէ ընտրեալն 30 տարին լրացուցած չըլլալով Սահմանադրութեան պահանջած ընտրելութեան պայմաններն չունի արդէնապէս, Նախաձեռնութեան Գիււանսին յղեր էր ի նախաքննութիւն, և նա դեռ չէ տուեր իր տեղեկագիրը:

Բայց մենք կը կարծենք թէ, այս խնդրոյն համար հարկ չկայ Տեղեկագրի սպասել, քանի որ Վարչութիւնը պահապանութիւն կը գտնէ ընտրելոյն հասակի մասին սահմանադրական հանգամանայ մէջ, ընտրութիւնը չը կրնար վաւերանալ, թէ և անոր ամեն պարագայից վրայ ընդարձակ տեղեկութիւն հաղորդուած ըլլար ժողովի:

Ուստի կառաջարկենք պարզապէս բեկանել սոյն ընտրութիւնը և նոր ընտրութեան հրաման ղրկել Հանձնու Գաւառական Ժողովին:

8. Բնորոշութիւն Ստորագրաց Երեսփոխանին:

Այս ընտրութեան մէջ ժողովը երկու անկանոնութիւն նկատուեր է:

Ա. Ընտրութիւնը ոչ Գաւառական Ժողովի մէջ քուէարկութեամբ որ անգոյ է, այլ վիճակոյնոց հանրագրութեամբ ի հրապարակի կատարուած ըլլալն, և

Բ. Ընտրութեան տեղեկագրութիւնն Աղթամարայ կաթողիկոսին կողմէն կոնդակի ձեռով Պատրիարքարան հաղորդուիլը:

Ժողովը երկար վիճարանութեամբ երկրորդ կէտն Եկեղեցական կանոնաց հակառակ դատեր և նախալծուով մերժեր է. իսկ առաջին կէտն թէ և սահմանադրական կանոնաց հակառակ նկատուեր, սակայն կանոնադրութեան ծառայական հետեւողութեամբ Նախաձեռնութեան ղիւանսին յղեր է ի նախաքննութիւն որ չէ նախաքննելու զայն մինչև ցայսօր:

Մենք կը կարծենք թէ ընտրութիւնն յոտի մինչև ցգիւսն անհամաձայն է Սահմանադրութեան, ուստի բացարձակապէս մերժելով հարկ է հրամայել Աղթամարայ գաւառին որ նոր ընտրութիւն կատարէ սահմանադրական օրինաց շրջանակին մէջ և հրաւիրել Աղթամարայ կաթողիկոսն որ փոխանակ ի Պատրիարքարան կոնդակ ուղղելու, իր թեմականաց ղրկէ Գաւառ. Ժողով կազմելու համար և անոնց ձգէ երեսփոխանի ընտրութիւնը միանգամայն և տեղեկագրութիւնն առ կեղրանն:

9. Թրագիր քարակարգութեան Աղգային վարժարանաց:

Սոյն ծրագիրը ժողովն արդէն իր Օրաւարդն անցուցեր և անոր առաջին չորս յօդուածները քուէարկել է, 22 յուլիս 1877:

Բայց անկէ առաջ, 1873 յուլիս 17ին սոյն ծրագիրը Հրահանգ տխտղոսով Խառն ժողովոյ կողմէն հաստատութեամբ և տարագրութեամբ Պատրիարքարան հրամանաւ Մայրաքաղաքի և գաւառաց Թաղական Խորհրդոց և Հոգաբարձութեանց ղրկուեր է առ ի կատարեալ զործադրութիւն, սպայմանաւ որ փորձառութեամբ ստացած ղիտողութիւնին տեղեկագրեն առ Ուսումնական Խորհուրդն Կեղրանական Վարչութեան, որպէս զի ի պա-

հանել հարկին վերաբնութի և վերստին հրատարակուի:

Չգիտենք թէ այս գործադրութիւնն կատարուած է առաւել ի գաւառս և գործադիրը ինչ դժուարութիւն նկատած են տրամադրութեան մէջ. բայց սա ստոյգ է որ 73 ի Վարչութեան տնօրէնութիւնն խիստ իմաստուն և գործնական է ըստ մեզ, և յայտնի է թէ սոյն կանոնադրութեան Հրահանգ խոնարհ տխտղոսը տալով, Վարչութիւնն ուղեր է նախ փորձառութեամբ թափանցել գործադրելի և օգտակար ըլլալուն խելամուտ ըլլալ, և ապա իբր Աղգ. դաստիարակութեան ընդհանրական օրէնք ծրագրել և ժողովին մատուցանել ի վաւերացումն:

Մենք ծայրէ ի ծայր կարգացինք սոյն Հրահանգը և չենք վարանիր յայտարարելու թէ կատարեալ է նա թերեւս անգործ քան զոր մեր արդի վիճակը կը ներէ մեզ գործադրել և թէ Աղգ. Ժողովը փոխանակ անոր յօդուածոց քննութեանը թանկագին ժամերը զոհելով, ընդհանուր դաստիարակութեան կատարելագոյն օրէնք մը հաստատել ջանալու, ըստ կ'ընէ եթէ արտօնէ Վարչութեան չարունակել 73 ի փորձը, իր Արթական Խորհրդոյ հրակողութեան ներքե, և երբ անկէ ծրագիր մ'ստանայ Աղգ. դաստիարակութեան վճարական օրինաց, այն տունն ձեռնհաս յանձնախմբի մը ձեռօք բնէ զայն ըստ օրինի եւ վաւերացունէ հանդիսապէս:

10. Թրագիր ուսմանց և կանոնադրութեան քննարկի Կեղրանական վարժարանին Ղալաթիոյ:

Սոյն ծրագրի պատրաստութիւնն վաղ ընդ փոյթ կատարելու պայմանաւ Աղգ. Վարչութեան յանձնուեր է 1877 յուլ. 1. բայց դեռ պատասխան մը առնուած չէ:

Ըստ մեզ 73 ի Վարչութեան հրատարակած Վարժարանաց Հրահանգին ընթացքն ուսման կատարելապէս կը պատասխանէ Կեղրանական վարժարանի հաստատութեան նպատակին. ուստի բաւ է հրաւիրել Վարչութիւնն որ յիշեալ վարժարանի Հոգաբարձութեան

ձեռք անմիջապէս կարգադրել տայ վարժարանն ըստ նոյն Հրահանգի և եթէ փորձառութեամբ փոփոխութեան հարկ տեսնէ, ահա՛ կարգէ մեզ ժամանակին :

11. Ղալարիոյ կեդրոնական վարժարանին համար կեդրոնական Սետուկէն նպատակաւ յատկացրեց խնդիր .

Ազգ. Ժողովը սոյն խնդրոյն լուծումն օրագրէր է մինչև իրենութիւն կեդրոնական վարչութեան հաշուեկշիւոյն : Բայց ըստ որում Ժողովն առանց կանխաւ գիտնալու կեդրոնական վարժարանին պէտք եղած ծախքը, չկրնար մասնաւոր գումար մը սահմանել կեդրոնական սնտուկէն, և ըստ որում հաշուեկշիւոյն մէջ ընդհանուր դատարարական համար գումար մը սրտորատու ցուցուած է արդէն հաւրէ է ուրեմն յանձնել վարչութեան որ ըստ Հրահանգի 73 ի վարչութեան կեդրոնական վարժարանը բարեկազմելով, անոր ծախսը որքանութիւնը սահմանէ և Ղալարիոյ Ազգային կառուածոց և վազըֆի տրդեանց վիճակին նկատմամբ կեդրոնական սնտուկէն պէտք եղած առ ժամանակեայ նպաստի գումարն որոշէ և հատուցանէ և տեղեկագրէ Ժողովին իր տարեգլխոյ Հաշուեցոյցով, որպէս զի հետեւեալ տարւոյ Հաշուեկշիւոյն մէջ զիտակցութեամբ կարենա՞ք սահմանել գումար մը սոյն վարժարանի ի նպաստ :

12. Ամրատանագիր փախագեան Ս. Էֆէնտիի.

Փախագեան Էֆէնտի սոյն ամրատանագիրը ներկայելով ի նիստ ԺԱ. 2 Սեպտ. 1877, կը յայտարարէ թէ նախընթաց նիստի մէջ Պատրիարքական փոխանորդ Մկրեան Տ. Յովհաննէսի համար ըրած յայտարարութիւններն պատրաստ է հաստատելու և կը պահանջէ որ ի դատ հրաւիրուի ընդ նմա անկողմ նակալ տառանի մը առջին : Սոյն յայտարարութիւններն են թէ «Մկրեան Տ. Յովհաննէս աշառութեամբ վարուած է Քալթալի գանակոծուած վարժապետի խնդրոյն մէջ, ինչ-

պէս նաև ուրիշ խնդրոց մէջ ալ, և թէ Փոխանորդարանի մէջ հարատուհաւթութիւնք կը գործուին անտէրներու վրայ և կոչառակերութիւնը կան դործուած : Փախագեան Էֆէնտի աւելի յառաջ վարելով իր ամրատանագիրը, կը յաւելու թէ մէկ քանի օր յառաջ երբ Ոստիկանութեան վսեմ. պաշտօնէին կողմէն Պատրիարք ու Ժողովները տապալուղ և Ազգին հանդարտութիւնը խռովող ամրատանագրէր կեդրոնականներ կը փնտռուէին, հետեւեալ օրն ուրբաթ Պատրիարքական փոխանորդ Տ. Հայրը ըոգոր մը կուտայ խառն Ժողովին և միւս օրն շարաթ հրատարակութեան կը յանձնէ զայն, որու մէջ կը գտնուին իրեն զէմ ակնարկեալ սա՛ տողերը. «Բնութիւն և դատաստան կը պահանջեմ, չէ՛ թէ միայն իմ իրաւունքս և արդարութիւն յերեան անկողն համար, այլ Ազգը աղատելու համար այն սահմանադրական քողի ներքե՛ք բռնակալութեան խաղաղի ըլլալէ, որոյ գործ եղած է միշտ Պատրիարքներ և Ժողովներ տապալել, և հանդարտ և խաղաղ ազգը երկուստակութեան և խռովութեան մէջ ալեկոծել » : Փախագեան Էֆ. այս հրատարակութիւնը բացարձակ պաշտօնական վկայութիւն նկատելով իրեն Պատրիարքական փոխանորդէ ստորագրեալ ընդդէմ ինքեան և ի նպաստ զրաւարտողաց, որք Ոստիկանութեան վսեմ. պաշտօնէին առջին զինքն մէկ քանի ընկերներով իրեն ազգ. խաղաղութիւնը վրդովող և Պատրիարք և Ժողով տապալող զրաւարտած էին, և կը պահանջէ որ Փոխանորդ Տ. Հայրը Փոխանորդութենէ առ ժամայն դադարէլ հրամայուի, որպէս զի իր պաշտօնական գիրքովն ընդդէմ իրեն քաղաքական ազգեցութիւն չ'բանեցունէ, և ի դատ կը հրաւիրէ զնա զրաւարտական վկայութեան պատիժը կրելու համար :

Ազգ. Ժողովն միևնոյն նիստի մէջ Տ. Մկրեանի բողոքագիրն ալ լսելով, որով իր պատւոյն և պաշտամանը զէմ եղած թշնամանոց զէմ բողոքելով, հրապարակային քննութիւն և դատաստան կը խնդրէ, յետ միհարանութեան որոշեր է Փոխանորդ Հայրն որ միան-

գամայն կրօնական Ժողովոյ անդամ էր իրր վարչութեան ճիշդ նկատելով, անոր զէմ եղած ամրատանագրեան դասն Ազգային Ժողովոյ մէջ տեսնել, և հետեւեալ նիստին (ԺԱ. 16 սեպտ. 77) Պատական Մասնաժողով մը ընտրեր է հետեւեալ անձանցմէ .

- Տ. Պարեգին վարդապետ Թաթարեան
- Տ. Ներսէս » Ստանեան
- Ասորո Էֆէնտի
- Մկրտիչ » Քիւրքճիկեան
- Սենեքերիմ » Մանուկեան
- Արիկ » Ունճեան
- Ստեփան » Պէյլիքճեան

Եւ անոր քննութեան և դատաստանին յանձնէր է Փախագեան — Մկրեանի դատը, բայց մինչև ցայսօր վճռական Տեղեկագիր առած չ'է : Նկատելով որ մէկ կողմէն Պատական Մասնաժողովը իւր պաշտօնին ձեռնհասութեան սահմանին նկատմամբ տարուերեր է, և միւս կողմէն ժամանակը որ ամենայնի աւանդ է, պարագայներու բերմամբն երկու կողմն այնքան մերձեցուցեր է իրերոց որ մէկ քանի ամիս ետքը ազգագուտ ձեռնարկութեանց մէջ հակառակորդաց սիրայորդոր աշխատակցութիւնը տեսնուեր է :

Նկատելով դարձեալ որ ազգային արդի պարագայից մէջ երկու կողմն ազգասիրական զգացումներ վիրաւորել և խոհանութիւնը կոտորածի ենթարկել է կարծելով թէ Փախագեան Էֆէնտի կը սնդէ յառաջ վարել իր ամրատանագրութիւններն և կամ Տ. Մկրեան որ վաղուց հրաժարեալ է Պատրիարքական փոխանորդութենէ, կը սնդէ հատուցում պահանջել մանաւանդ որ մէկ կողմէն

Ազգային Ժողովը ի նիստ ԺԱ. Հոկտ. 28 1877 ընդունելով 48 Երեսփոխանաց ստորագրութեամբ առաջարկութիւն մը որով յիշեց պաշտօնակից Փախագեան Ստեփան, Խօժառեան Օգոսէն և Ղազարոսեան Քրիստոս տուր Էֆէնտիներուն երեսփոխանական պաշտօնաւարութեան մասին Ոստիկանութեան առջին սխալ մեկնութեամբ զրաւարտուած և հետեւորար մինչև իսկ աշարման սպառնալօք Երեսփոխանութենէ հրաժարական տալու հրաւիրուած ըլլալին ծանուցանելով կը խնդրէ որ վարչական մասնաւոր քաղաքով Բ. Պրան ծանուցուի անոնց արդարութիւնը, որոշեր է

1. Յանուն Ազգ. Երեսփոխանութեան վարչական քաղաքի ուղղել առ Տէրութիւնն յիշեալ երեք երեսփոխանաց անմեղութիւնն հաստատելու համար ազգովին :

2. Փոխանորդ Հօր Օգոստ. 26 ին վարչութեան մատուցած և հետեւեալ օրն իր ստորագրութեամբը հրատարակութեան տուած բողոքագիրը իրր պաշտօնական հանգամանքէ դուրս և սոսկ անձնական հրատարակելով լրացուց մէջ յանուն Ազգ. Ժողովոյ պաշտօնապէս հերքել և ջնջել անոր ազգեցութիւնը :

3. Փախագեան Էֆէնտին և իւր հարծակից ընկերներն զրաւարտող եւ մատնողներն գտնելու համար վարչութեան յանձնարարել որ քննութիւն բանոց և արդիւնքը տեղեկագրէ :

Եւ 4. Հրաւիրել Քաղաքական Ժողովն վարժապետ գտնակոծող Խարթալի Թաղ. Խորհրդոյ ատենապետ Պաղտիկի նկատմամբ ըրած պաշտօնակութեան որոշումը որ անգործագրելի մնացեր է մինչև ցայն վայր, պաշտօնական ծանուցմամբ յայտարարել Ազգիս :

Եւ միւս կողմէն Սրբազան Պատրիարք Հօր առ Ստեփան պետ Ստեփան փաշա Ստանեան տարւոյս Մարտ 7 թուականու ուղղած մէկ գրոյն սա պարբերութիւնները թէ

« Խոջոյս կը վկայեմ որ Մկրեան Տ. Յովհաննէսի զէմ եղած ամրատանագրութիւնը կուսակցական կրից արդիւնք էր, որուն ինքնալ պատճառ տուած էր դարձեալ կուսակցական կրիւր Քալթալի վարժապետին գործոյն քրննութեանը մէջ » և թէ « Տ. Յովհաննէսին համար այցալի տարի է բնաւ կաշառակերութեան յանցանք մը չէ տապալուցուած » :

Այս որոշումներն կ'ըսենք և այս պատկառելի վկայութիւնը խնդրոյն գրեթէ ամէն կողմը լուստորած ըլլալով, կրկին դատ վարելու հարկ չ'է մնացած ըստ մեզ : Ուստի կառաջարկենք այս խնդիրն ալ աւրտեալ հրատարակել և սրբել մեր տուամարէն, թողով ազատ երկու կողմն ալ վարուիլ ինչպէս վայել է իրենց և ինչպէս իրաւունքունինք յոսալ երկու նշանաւոր ազգայիններէ որք սուսնձինն և միտաին ծառայութիւններ մատուցած են և կարող են տակաւին մատուցանել առ Ազգն :

13. Յայտագիր Փաղաքական Ժողովոյ՝ Ուսումնական Խորհրդոյ մէկ խնդիրը երկայնքու համար, որով Խորհուրդն միացեալ քաղաքու մէջ Ուսումնարանի հաստատութեան օգտակարութիւնն յայտնելով կատարելէ վարչութեան, որ

1. Գումգախույի Թաղէն սկսեալ Պէշճեան Մայր վարժարանն իրր կեդրոն Ուսումնարանի վերամուրի չորս թաղ միացունելով :

2. Այս կարգի Ուսումնարաններուն հըս կողմից ինն և Տեսուչ կարգելու և դատաւորներն ընտրելու և փոխփոխելու իրաւունքն ուղղակի իրեն յանձնուի :

Ազգ. Ժողովն Ուսումնական Խորհրդոյ տոյն առաջարկութեանց մէջ Սահմանադրական իրաւասութեան խնդիր նկատելով յղեր է զայն դատարարութեան Ղեւանին, որոյմաւ առ որ Ուսումնական Խորհրդոյ հետ բանակցելով ամօրեայ որոշմանսմամաւ տեղեկագրէ իր կարծիքը : Բայց մինչև ցայսօր պատասխան մը առած չէ :

Ըստ որում այն առաջարկութեանց երկուքն ալ սերտ առնչութիւն ունին 73ի Վարչութեան հրատարակած վարժարանաց բարեկարգութեան Հրահանգի հետ զոր մեր Չեր առժամանակեայ ընդունելութեանն յանձնարարելիք, կ'առաջարկենք Վարչութեան պատասխանել թէ առայժմ ամենայն ինչ ըստ նոյն Հրահանգի կրնայ անօրինել, և թէ ամեն բանէ առաջ պէտք է փութալ կրթական ճիւղի պաշտօնատար ընտրել և ուսումնական տեսչութիւնն ի գործ դնել աստ և ի գաւառս :

14. Հարցում Բաճարագ Ն. Էֆէնտիի կիկկի կարողութիւնն և կրթականը :

Այն հարցմանը Ն. Դաւաթ շէքիտի կ'ուզէ տեղեկանալ թէ ի՞նչ եղաւ Ազգ. Վարչութեան բանակցութեան արդիւնքը Սոյ Կաթողիկոսին հետ որոյ առաջարկութիւնները մերժած է Ազգ. Ժողովը և թէ ի՞նչ անօրինութիւն ի գործ դրաւ Կաթողիկոսին իր պատառնումները զանց առնելուն պատճառաւ Կիլիկիոյ ժողովրդեան ստանալոց բարոյական չարեաց առաջն առնելու համար :

Ժողովն ստանձնելով այն հարցումն Վարչութեան զրկած է ի տեղեկագրութիւն 1877 Սեպտ. 16ին, բայց մինչև ցայսօր պատասխան մ'առած չէ :

Ի հարկէ Ազգ. Վարչութիւնն հաղորդած է Կիլիկիոյ Կաթողիկոսին ինչ որ Ազգ. Ժողովն որոշած է անոր առաջարկութեանց նըկատումը, բայց պատասխան մը չ'առնուելէն և կամ առնուած պատասխանը Ժողովն չ'ազդուելէն կը հասկցուի թէ Մկրտիչ Կաթողիկոս Ազգ. Ժողովոյ վճռոյն հակառակած չէ : Իսկ գալով արաշտօնավարութեան զանցառութեան կէտին, թէ և մինչև ցայսօր ո՛չինչ չըլտուեցաւ Սոյ փանին վերակեդանութեան, միաբանութեան բարեկարգութեան, ընծայարարի հաստատութեան և այլ տոյն տեսակ ազգօգուտ ձեռնարկութեանց նկատմամբ ոչ ի Ս/ս և ո՛չ այլոք, սակայն վերջին ժամանակներս Կաթողիկոսին ի Մարաշ, ի Զէյթուն

և ի Հալէպ ևն ուղղապէս տեղեկութեան աճապարենց ցոյց կուտայ որ Մկրտիչ Կաթողիկոս իր բարձր կոչման պարտաւորութիւններն ըզգալ սկսած է. ուստի ըիչ մը ժամանակ ևս համբերել պատշաճ կ'ընէր մեզ և առ ի զգուշութիւն և ի խրախոյս Կաթողիկոսին կ'առաջարկենք որ Վարչութիւնն հրաւիրուի պաշտօնապէս հաղորդել նմա թէ՛ Ն. Դաւաթ շէքիտի հարցումն և թէ՛ այն տեղեկագրութեան Չեր վճռով :

15. Հարցում Գարագաշ Ն. Էֆէնտիի թրացի արտօնութեան կեդր. սնտուկին սահմանադրարկան 8000 որոյ տարքէն երեք տարուան աւելար մնացար 24000 որչի Տ. Երեմիա քանանա յէն պահանջելու նկատմամբ :

Վարչութեան յղուած է ի տեղեկագրութիւն 1877 Հոկտ. 28ին, բայց 1878 Յուլիս 7-Գ. Նիստին մէջ առնուած Տեղեկագրի զոհացուցիչ չ'առնուելով, հարցումն հարցաւորն իման փոխուած և նախաքննութեան յըղուած է :

Ըստ մեզ, եթէ ստուգապէս Տ. Երեմիա այդպիսի տուրք մը ստանձնած է ի փոխարէն արտօնութեան Օրացոյցի, պէտք է վճարէ : Ուստի կ'առաջարկենք յանձնարարել Վարչութեան որ Տ. Երեմիա հօր եղած պայմանագրութեան ճշդիւ գործադրութեան հող տանի, բայց եթէ յիշեալ Բաճանային վճարման անկարողութիւնն ապացուցուի, յանուն Ազգին նուէր ըլլալով ծերունի Բաճանային, յիշեալ դուժարն ջնջուի ազգ. պահանջից շարքէն և խնդիրս արժուի մեր Տուժարէն :

16. Տեղեկագիր Գարաքանի Ժողովոյ Պատրիարքարանի պաշտօնակարաց բոչակի վրայ :

Այս խնդիրն առաջկալ 79-80 տարուց պիտոճէին առթիւ ձեր Օրակարգին մէջ է, ուստի իբր առանձին խնդիր խնդրոյ ցանկին մէջ մնալու իրաւունք չ'ունի :

17. Խնդիր հրաժարման Ս. Պատրիարքի :

Այս խնդիրը քանիցս Ժողովն խորհրդոյ և վիճաբանութեանց առարկայ եղած է և վերջին օրերս վճարար լուծուած. ուստի խնդրոյ տուժարէն զայս ալ արեւ կ'առաջարկենք :

Այս տեղ կը վերջանայ մեր յննութեանց տեղեկագիրը առ կախ մնացած խնդրոց վրայ որ ինչպէս կը տեսնուի, 57 են նշանակուած, բայց մէկ քանին լոկ կրկնութիւն ըլլալով, միայն 50ը առարկայ եղած են տեղեկագրութեանս :

Բ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
Ատենադպիր Ատենապետ և Տեղեկարար

ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպ. Խորխան	Ս. Ատենապետ
2	Տ. Խորէն	Ս. " Նար-պէյ	
3	Տ. Կարապետ	Ս. Եղս. Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. " Իզմիրլեան	Ք. Ատենապետ
5	Տ. Ամբրոսիոս	Ծ. Վրդ. Ոստրինեան	
6	Տ. Ղարեպին	Ծ. " Թաթարեան	
7	Տ. Եղնիկ	Ծ. " Աղաճունի (Առաջն. արաշտօնի դուրս գացած)	
8	Տ. Իգնատիոս	Ծ. " Շիշմեան	
9	Տ. Հմայեակ	Ծ. " Ղլմարեան	
10	Տ. Ներսէս	Ծ. " Արանեան	
11	Տ. Պողոս	Ծ. " Խօղտամեան	
12	Տ. Արիստակէս	Աւագ ԲՆԵ. Մամբրեան	
13	Տ. Խորէն	" Փէշիվանեան	Ք. Ատենապետ
14	Սահակ	" Տ. Սարգսեան	Ս. Ատենապետ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Էֆէնտի	Աթմն Տիւրքի	Ս. Ատենապետ
2	Գէորգ	"	Սթիմարտեան	Ս. Ատենապետ
3	Գէորգ	"	Գըլքճեան	
4	Կարապետ	"	Հաղարեան	
5	Լօղօֆէթ	"	Պալեօղեան	
6	Մատթէոս	"	Ամբրանեան	Ք. Ատենապետ (Հրաժարեալ)
7	Մարտիրոս	"	Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	"	Յրէնկեան	
9	Թակոր	"	Չօլանեան	
10	Յորութիւն	"	Սահակեան	
11	Սահակ	"	Ղաղարեան	
12	Սենեքերիմ	"	Մանուկեան	
13	Ստեփան	"	Պէշիվան	
14	Տիգրան	"	Բաճան	

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԵՏՈՒԿԻՆ

Կը ծախսուի ի Դէւանատան Պատըխարքարանի, և Հալաթիոյ

Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բանկայլը և Հոյ գրախոնարհաց քով:

[illegible]